


卷之二



ԱՐԴԻ ԱՅՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

ՀՊ.

ԱՐԱԲԱՑԻ ՄԱՏԵՆԱԳՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ա. Թելմազորի: - Բ. Իբն Մասկավայ: - Գ. Տաքարի: -
Դ. Խարուրի: - Ե. Իբն-ՀՀ Աթիբ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹԱՐԳՐՈՒՄՆԵՐ

ԲԱԳՐԱՏ ԽԱԼԱԶԵՐԱՆ



Վ Ի Ե Ն Ա

ՄԻԿՐՈԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՎՈՒԹՈՒՆ

- ԺԱ. Խալաթեամց Դր., Հայ Արշակունիք ըստ
Մովս. Խորենացւոյ, կամ նոր ուսումնասիրու-
թիմներ Մովս. Խորենացւոյ մասին: Թրգմ. Աբ-
սէն Ս. Սիմոնեանց: 1906: Էջ Ը+124: Փր. 1.50
ԺԲ. Պեղնիսքն Հ., Հայերէն եւ դրացի լեզուները:
Թրգմ. Հ. Թ. Կէտրիկնան: 1907: Էջ ԺԱ+257:
Փր. 5.—
- ԺԳ. Հիւռշմտա Հ., Հին Հայոց տեղւոյ անունները:
Թրգմ. Հ. Թ. Պիւռփիկնան: 1907: Էջ ԺՃ+443:
Փր. 7.—
- ԺԴ. Պեղնիսքն Հ., Հին հայերէնից ցուցականդերանուն-
ները: Թրգմ. Հ. Թ. Տաշեան: 1907: Էջ Ը+90:
Փր. 2.—
- ԺԵ. Դաշեմքեադեամ Հ. Գ., Կենսագրութիւն
Սարգիս Արքապիսկոպոսի Սարաֆեան եւ ժամա-
նակին հայ կաթողիկեայց: 1908: Էջ ԺԳ+433:
Փր. 5.—
- ԺԶ. Աճառեամ Հ., Հայերէն նոր բառեր նորագիտ
Մնացորդաց զրոց մէջ: 1908: Էջ 38: Փր. —.60
- ԺԷ. Եիշեկսէնեամ Բ. Գ. Վ., Եղիշէ, ցննական ու-
սումնասիրութիւն: 1909: Էջ ԻԸ+458: Փր. 7.—
- ԺԸ. Ակիհնեամ Հ. Ն., Տիմոթէոս Պուլ հայ մա-
տենագրութեան մէջ: Էջ 1—60:
- ԺԾ. Աճառեամ Հր., Հայերէն նոր բառեր Ցիմոթէոս
Կուզի Հակամառութեան մէջ: 1909: Էջ 16—106:
Փր. 1.50
- ԺԹ. Ակիհնեամ Հ. Ն., Զաքարիա Նպ. Գնունեաց
եւ իւր տաղերը: 1909: Էջ ԺԲ+87: Փր. 1.—
- Ն. Ակիհնեամ Հ. Ն., Միւրիոն Մաթողիկոս Վրաց:
1910: Էջ ԻԸ+315: Փր. 6.—
- ԿԱ. Մէկնկվիչեամ Հ. Գ. Գ. Վ., Հայերէն լեզուք
ուղղագրութեան ինդիքը: 1910: Էջ 73: Փր. 1.—
- ԿԲ. Գիւտենոր Կ., Բիւզանդիոն եւ Պարսկաստան
եւ անոնց դիւնազիտական եւ ազգային-իրաւա-
կան յարաքերութիւնները Ցուտինիանու ժամա-
նակ: Թրգմ. Հ. Հ. Համբարեան: 1911: Էջ Ը+162:
Փր. 2.50

ԱՐԵԲՈՅԻ ՄԱՏԵՆԱԳՐԵՐ
ՀԱՅՈՍՏԱՆԻ ԹԱՎԻ

ԱԶԳՐՅԻՆ ՄԱՏԵՎՈՒՐՔՆԵՐ

ՀՊ.

ԱՐԱԲԱՑԻ ՄԱՏԵՎՈՒՐՔՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿԱՐ



Վ Ի Ե Ն Ա Ա

ՄԻՒԹԵՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919

9(47.995)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

21

ԱՐԱԲԱՑԻ ՄԱՏԵՆԱԳՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ա. Բելազորի: - Բ. Իբր Մասկավյա: - Գ. Տաքարի: -
Դ. Օսրուրի: - Ե. Իբր-Էլ Աթիք:

A 33413 3623

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


ԳԱԳՐԱԾ ԽԱԼԱԳԵԱՆՑ



Վ Ի Ե Ն Ա Ա

ՄԻՆԻ ԹԱՐԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919



Ա Զ Դ

Հայոց Պատմութեան եւ Աշխարհագրութեան համար շահագրգիռ նիւթեր կընծայեն արաքացի մատենագիրները։ Այսպիսիները ցայսօր սակաւ ուշադրութեան արժանացած են ազգային բանասէրներէն, մասամբ իրենց դժուարամատչելի լեզուին եւ մասամբ ցրիւ նրատարակուած ըլլալուն պատճառա։ Առանձին շնորհակալութեան արժանի է ըստ այսմ գործոյս յարգելի Հաւաքիչն, որ խորհած է հայերէնախօս ընծայել մատենագիրներուն Հայաստանի վերաբերեալ հատուածները։

Ասոնք նախնաբար լոյս տեսան Հանդէս Ամսօրիայի մէջ, յրնթացս 1903—1909 տարիներուն։ Դժբախտաբար 1909էն ի վեր խմբագրութիւնս Հաւաքչն նոր մասեր շատանալով՝ կարելի շեղաւ տելի

Յոլս ներկայացնել հասուրս, որ, այսու
նանդերժ կը կ'ամփոփէ իւր ծոցը հիմք
մատենագիրներէ բաղուածներ։ Զատնք
իջրեւ Ա. Մաս ամբողջական գործոյն
հրապարակ հանելով կը յոսանք թէ դիւ-
րացուցած կ'ըլլանք գործածոթիւնը։

ԽՄԲ. “ՀԱՆԴԻՍԻ”

ՅԱՆԿԱՆԻ ԽՈՒԹՈՈՑ

Էջ

Ազդ	Ե
Յանկ Նիւթոց	է
Յառաջարան	1—8
Եշխարհացոյց Հայաստանի	9—24
Ա. Թելազորի	25—76
Բ. Իբն Մասկավայ	77—79
Գ. Տաքարի	79—102
Դ. Նարուբի	102—124
Ե. Իբն-Էլ Աթիր	124—147

ԱՐԵԲԵՅԻ ՄԵՑԵՆԵԳԴՐԵՐ ՀԵՑԵՍՑԵՆԻ ՄԵՍԻՆ

Ա Ա Ա Ա .

Յ - - - Յ - Յ - Ն :

Մեր ժամանակ, երբ դիմութիւնը կրկին կենդանութիւն է տալիս դարերէ ի վեր անհետացած ազգերի, օր ըստ օրէ բաց անում նոյցա խորհրդակառ անցեալը եւ նոյցա կապը որոնում ներկայիս հետ, դդալի թերութիւն կը լինէր հայ պատմագրութեան համար՝ անտարբեր մեալ դէպայդ նորագիւտ ազրիւները եւ չորսնել նոյցանում որ եւ է յիշատակ, գէթ ակնարկ Հայաստանի ալեւոր անցեալի մասին. արդէն ասուր-բարելական եւ ուրարտեան սեպաձեւ արձանագրութիւնները թանկագին պաշար կը ներկայացրնեն մեր հնագոյն պատմութեան համար, բոլորովին նոր լոյս սփռելով նորա մութ էջերի վերայ։¹ Բայց արդէն աններելի թերութիւն կը լինէր՝ զանց առնել մի ճօխ գրականութիւն, այն եւս մի ազգի, որի հետ Հայերը շարանակ դարեր մատաճօտ շփռել են, որ իշխած էր նոյցա երկրում, համերգ մինչեւ Կովկասի լեռնաշղթան։ Արարիոյ անպատճերի որդիք, թէպէտեւ կիսավայրի եւ ցիրցան, աւկայն կոչւած էին մի ժամանակ կառավարել պատմութեան ղեկը։ Մահմեդի հետ ծնաւ ոչ միայն նոր ուսում, այլ եւ նոր դարաշրջան տիեզ-

1 Տես իմ Պի կարծիք հայ առիստրութեանց ձագման մասին պարիս 1902։

դերական պատմութեան համար . տէրութիւններ մէկը միւսի յետեւից փուլ եկան մոհմեղականաց գրոհակների առջեւ , Հնդկաստանից մինչեւ Սարանիա տիրեցին մարզարէի յաջորդները : Արօնական ոգեւորութիւնը , մատնելով արաբացոց ձեռքը հեռաւոր երկրներ , մի եւ նոյն ժամանակ զարկ տւեց նոցա մատւոր զարգացմանը , ստեղծեց մի կուլտուրա , որ իւր ազգեցութիւնն դրաշմեց նաև եւրոպական ազգերի մաքի վերայ : Մարզարէի խօսքը շեր միայն , որ արաբական պատմագրութեանը կեանք տւեց , այլ եւ այն փայլուն յաղթութիւնները , որ գեռ նորա օրերով էին օկուած . նոր ազգերի հետ ծանօթութիւնը միանգամբ լայն ծաւալ տւեց Արարիոյ բնակիչների աշխարհայեցողութեանն , որ ծաղկեցաւ փիլիսոփայութեան , աշխարհագրութեան , տիեզերական պատմութեան , մի խօսքով՝ հարուստ եւ բազմակողմանի գրականութեան մէջ :

Աեղ համար հետաքրքրական են ուսումնական եւ ուսումնական տեղեկութիւնները Հայաստանի մասին , որ արաբացի մատենագրեր՝ ընդարձակ կամ համառօտիւ կ'աւանդեն իրանց երկերում . որչափ էլ նոցանում յեղաշրջած լինին պատմական փաստերը յօդուատ ուղղափառների , որչափ էլ աշխարհագրական մանրամասնութիւններ այլայլած , այնու ամենայնիւ նոցա տւած նիւթը բաւական առատ է՝ մեր միջնդարեան ժամանակագրերի պակասը գէթ նուազիւ լրացնելու :

Թէ որչափ արժանահաւատ են արաբացի մատենագրերը՝ խնդիրս ինքն ըստ ինքնան կը պարզւի , եթէ ի նկատի առնենք այն շրջանը , որի մէջ նորա մեծացած են , այն աղքիւրները , որոնցից նորա օգտագործ են : Հնուց ի վեր նահապետական կեանքը կը տիրեր այս ընդարձակ անապատաներում . խաշնարած ժողովրդի միակ մտաւոր բաւականութիւնն էր՝ անցած - եղածի զբոցները , որ կ'աւան-

դէին ծերունիները խմբւած ամրսին, նոքա էին ժողովրդի զիտունները, «Հեքիմիները», որոնց համար միշտ պատրաստի կար պատւաւոր տեղ ժողովարաններում։ զանազան ցեղերի փոխագարձ վեճերը եւ կախները եւ նոցանում հռչակւած քաջերը կը կազմէին այս աւանդութեանց գլխաւոր նիւթը։ Նոյն երեւոյթն նկատելի է եւ բանասեղծութեան մէջ, որ մանաւանդ զարդացած էր այստեղ գեռ նախ խորամի ծնելին։ Միւս կողմից հեռաւոր երկրների մասին պատմութիւնները, ուր կ'ուղեւորւէին տարւայ որոշ ժամանակ արարացի վաճառականաց կարաւանները, պէտք է ոչ պակաս հետաքրքրէին ունկնդիրներին։ մանաւանդիրանց առեւտրով հռչակւած Մեկկացիք պարծենալ կարող էին իրանց «աշխարհանութեամբ»։ Հազարաւոր ուխտաւորներ, գալով Մեկկա՝ սեւ քարին («կաարին») երկրպագելու, ամէն անգամ իրանց հետ տուն կը տանէին մի որ եւ է նորութիւն, լինի դա երգ, առասպել կամ ճշգրիտ անցք։

Այս անապատական անգորրութիւնը խանգարեց Մահմեդի երեւալն, սակայն նահապետական կեանքի հիմունքը մնացին անխախտ։ ամբողջ Արարիան խմբւեցաւ մի գաղափարի շուրջը, որ անհաշտ կախւ յայտարարելով միւս աղջերին, իւր մէջ չէր կրում եւ չէր կարող կրել բարձրագոյն կալսուրայի սերմը։ շնայելով գիտութեան, գրականութեան, գեղարվեստի ծաղկման, շնայելով զէնքի աջաղութեանն, մահմեդական աէրութիւնը երրեք շհասու մատոր զարդացման այն տասիճանին, որի վերայ գարեր առաջ կանգնած էին Աթէնք եւ Հռովմ։ Նոր կրօնը, որ հրապուրիչ գոյներով կը նկարագրէր գրախափի (ֆեննագի) պանչելիքը իւր կանաչազարդ պարտիզով, կար-

¹ كتاب الأغاني

կաշահոս ջրերով եւ հրաշագեղ կանանցով, վառ
երեւակայութեան արդիւնք էր, որով կ'ապրին
արեւելեան աղքեր . նորա ազգեցութիւնն նկատելի
է գրեթէ ամբողջ արաբական գրականութեան մէջ:
Արօնական պատերազմները նոր նիւթ տուին ժողովրդի
լարւած հետաքրքրութեանն, բայց աւանդման պայ-
մանները եւ եղանակը մնացին նոյնը . որձարանը
արեւելքում մինչեւ օրս կը ծառայէ ժողովրդի սի-
րած տեղը, ուր ամէն մէկը դէպէ ունի՝ չէ-է-է-
եւ սուրճը առաջը դրած՝ հեքեաթներով, երգե-
րով եւ առածներով գուարձանալու . պատմական
աւանդութիւնն այժմ էլ կ'ապրի ծերունիների
յիշողութեան մէջ, մինչդեռ երգը եւ հեքեաթը
տեղէ տեղ շրջաղ աշուղների մասնաւոր արհետն
է: Հարկաւ այս ժողովարաններում մեծացած պատ-
մագիրը հնուց անցքերի համար պէտք է օգտιէր
բ-ն-ն-ն-ը զրոյցներից, առանց հոգ տանելու նոցա
արժանաւորութեան մասին:

Ահա թէ ինչն արաբական մատենազրերը
սովորաբար բաց են անում պատմութեան թելը,
նախ միառ միթւելով իրանց ազրիւրները («իսնագ-»)
«ինձ պատմել է-ը», որ լսած է բ-ից, «որ լսած է
բ-ից ...» եւ այլն մինչեւ առաջին զրուցողը, «որից
նոքա երբեմն գարերով են բաժանւած . բարե-
խղճօրէն առաջ կը բերեն նաև զանազան, անդամ
միմեանց հակասող վկայութիւններ, չմոռանալով
յայտնել եւ իրանց անձնական կարծիքը, յօգուտ
եւ հակառակ նոցա . անդամ Տաբարին, թ. դարի
հռչակաւոր պատմագիրը, իւր բազմահատոր ժա-
մանակադրութեան նիւթը նոյն բանաւոր ազրիւրից
է քաղած: Այսպիսի խախուտ հիմքի վերայ հառ-
տառած աւանդութիւնն հարկաւ ժամանակի ըն-
թացքում պէտք է առասպելանար, աշխարհա-
գրական եւ գործող անձանց անուններն փոխա-
դարձարար շփամթէին կամ բնաւ անհետանային.
այսպիսի աղաւաղման օրինակ կը ներկայացրնէ

ալ - Աւակիդիի պատմութիւնն Արաբացոյ արշաւաւ-
նաց եւ մանաւանդ Հայաստանի նւաճման մասին,
որ աւելի վիզավանութեան կը նմանի . քննադատ-
ները այս պատճառով կասկածած են մատենագրի
խորթեան մասին եւ կոչում նորան կեղծ Աւ-
կիդի , համանուն պատմիչից նորան տարբերելու
համար : Կւաճելով Ասորիք , Արաբացիք Հայա-
տան մտան Իջադ Բեն Պանմի առաջնորդութեամբ .
յունաց հպատակ քաղաքներ եւ ամրոցներ նոցա-
ձեռքք կ'անցնին մէկը միւսի յետեւից դրեթէ
առանց գիմագրութեան , շատ անզամ բատ կամաց
Աստուծոյ եւ նորա մարգարէի . ինքեանք իշխան-
ներ իրանց ժաղավրդի հետ կամակատար մահմե-
դականութիւն կ'ընդունեն , ճանաչելով ճշմարիտ
հաւատը : Ե. յն ժամանակ Ախլաթի եւ Հայաստանի
տէրն էր ովն Նուստինուս , որի գուստը՝ Տարուն՝
պատճառ եղաւ իւր երկրի կորստեան . հերոսուհու
վերայ սիրահարւած են Մուշ , Աննասենի (Ասունի)
իշխանի որդին , եւ Բուզուր , նորա ազգական-
ներից մէկը : Ակրջինս կ'առեւանդէ իշխանազն
օրիորդին եւ նորա հետ միասին հաւատափոխու-
թեամբ կ'անցնի թշնամեաց կողմը : Միաժարեկին
եւ Ըմբա առնելուց յետոյ Արաբացիք կ'արշաւեն
գէպ ի Մեծ Հայք . Բիթլիսի տէր Սերենդը կը
շտապի խաղաղութիւն կապել թշնամու . հետ հարկ
տալու պայմանով : Երբ Իջադի գեապանները խաթ-
ման , նոցա ընդունեց Տարուն , որ նոր էր վերա-
գարձած իւր գերութիւնից , եւ իրեւ կրօնակից
գաղտ խոստացաւ նոցա իւր օգնութիւնն : Նուս-
տինուս զօրք է գումարում գիմագրելու համար .
նորան օգնութեան է գալիս ի միջի այլոց Դերեփ-
սիլի՝ Երզեն - Էլ - Բումի իշխանի որդին : Տարուն ,
սպաննելով իւր հօրը , կը փորձէ հակառակորդ
իշխաններին եւս կորուսանել , բայց նորա շար գի-
տաւորութիւնն բացւած է եւ Տարուն արաբացի
գեապանների հետ միասին ամբոխից շրջապատւած :

Խջադ, առնելով այս գոյժը Վաստանում (Ոստանում), կը շատապի պաշարւածներին օգնութեան, տեղի կ'ունենայ արիւնահեղ կռիւ. որ Արաբացոց ձեռքը կը մատնէ Խլաթը եւ Հայաստանի վիճակը:¹

Առհասարակ հաստուկուոր եւ հակասող են մեր տեղեկութիւնները Արաբացոց առաջին արշաւանքի մասին ի Հայս. երեւոյթիս գլխաւոր պատճառն այն է, որ արաբական գրականութիւնն այն ժամանակ գեռ նոր կը ծնէր. հարկաւ է. գարի խառն ի խուռն անցքերի պատմութիւնն ըստ մեծ մասին հիմնած պէտք է համարել բանաւոր աւանդութեանց վերայ: Բայց արդէն Թ. գարից սկսած, երբ ընդարձակեցաւ խալիֆաար եւ Արաբացիք աւելի մօտ ծանօթացան իրանց հպատակ երկրների հետ, մեր ազրիւրները աւելի առատ եւ կանոնաւոր կը հսկեն: Ժամանակը ինքն ըստ ինքեան պէտք է պահանջ դնէր արաբական պատմագրերին՝ յիշատակել ապագայ սերունդների համար իսլամի հսկայական աճումն եւ նորա տարած յաղթանակն անհաւատ ազգերի վերայ. այս տեսակէտը նոցա գլխաւոր դեկը կը հանդիսանայ, արտաքսելով նոցա երկերից այն ամենը, ինչ որ օտարների ներքին պատմութեանն կը վերաբերի, թող թէ իսլամի փայլը նուեմացնող որ եւ է յիշատակ: Նոքա սովորաբար չեն յիշում Հայաստանի ոչ անցեալի. ոչ ներկայ քաղաքական գրութեան եւ ոչ նորա իշխանաց գիմագրութեան մասին, բայց ամենայն մանրամասնութեամբ կը նկարագրեն արաբացի զրապետների ուղմական ճանապարհը, քաղաքներ նւաճելու եղանակը, խաղաղութեան պայմանները, նոցա կառավարչական գործունեութիւնն, ինչ ինչ օգտաւէտ ձեռնարկութիւնները եւ այլն:

Միւս կողմից մի շաբք աշխարհագրեր մեզ բաւական մօտ կը ծանօթացընեն և—Ը գ. Հայաս-

¹ Geschichte der Eroberung von Mesopotamien und Armenien von Niebuhr. Hamburg 1847.

տանի տեղագրութեան հետ։ Դեռ տուրական, վանեան եւ արեմենեան բեւեռագիր արձանագրութիւններ կը յիշեն երկրիս ինչ ինչ դաւառների եւ քաղաքների անուններ՝ Hilakku (Ալիկիա), Urartu, Արարտ (Արտաս), Arbaku (Արտակ), Arzašku (Արտէշ), Ahlatu (Խլաթ), Muski (Մաժաք), Tušpa (Տոսպ), Tigra (Տիգրանակերտ²), Ahurean, Araz (Արազ) Artsu (Արծուիր) եւ այլն։ Յոյն եւ հռավմէցի մատենագրեր արդէն առատ պաշար կը մատակարարեն հին Հայաստանի աշխարհագրութեան համար։ Ագաթանգեղասից սկսած երկրիս պատմութիւնը սերտ կապւած է մի շաբք քաղաքների, գիւղերի, աւանների, ամրացների, լեռների, գետերի անւանց հետ։ Խորենացուն վերագրեալ աշխարհագրութիւնն անշուշտ խոչը պատմական յիշատակարան կը հանդիսանայ մեզանում, աւանգելով Է—Ը դ. Հայաստանի քարտէզը շրջակայ երկրների հետ հանդերձ։ յօդուտ նորս արժանաւորութեան կը վկայեն նաեւ արաբական աշխարհագրեր՝ իրն Խորդագրեհ, Երուլ՝ Ֆեդա, Խստախրի, իրն Հառոկալ, Մասուդի եւ մանաւանդ Բելազօրի, նոյն իսկ կովկասի բնակչաց նկատմամբ։

Դեռ Saint-Martin զգացել է այս օտար աղբիւրների կարեւորութիւնն, որոց շափով օգտելով նոցանից իւր „Mémoires historiques et géographiques sur l'Arménie“ (Paris, 1819) սումենասիրութեան համար։ Նման փորձեր, թէպէտ եւ փոքր ծաւալով, եղել են եւ մեզանում³, սակայն ինդիրս ըստ իւր արժանաւորութեան տակաւին գնահատած չէ, քանի որ դեռ մի ամբողջ գրականութիւն կը մնայ հում եւ անմատչելի նիւթ հայ գիտութեան համար։ Վերածել հայերէնի արաբական յիշատակարաններից մի շաբք մեզ հե-

տուքը բրական։ Հատուածներ՝ կը նշանակէր գոհացը-
նել մի դպալի պահանջ, իսկ նոցա համեմատու-
թիւնն ժամանակակից հայ մատենագրերի հետ՝
կ'ամբողջացընէր դործը։

Ահաւասիկ այն խնդիրը, որ մեր վերայ ա-
ռած ենք։

Սակայն, զգալով նորա կարեւորութիւնն,
մենք չենք կարող մոռանալ եւ նորա բարդութեան
մասին։ ա. արարական պատմագրեր երբեմն այն
աստիճան սերտ կը կազեն Հայաստանի նւաճումն
շրջակայ երկրների նւաճման հետ, որ բաժանել
նոցա գրեթէ անհնարին է. մենք յարմար գատե-
ցինք թողնել ամբողջ կտորներ անփոփոխ։ — բ.
Արարական աշխարհագրերի փոխադարձ համեմա-
տութիւնը կ'ապացուցանէ, որ նորա բառ մեծ մասին
օգտագործ են միմեանցից, շատ անգամ բառացի ար-
տագրելով մէկը միւսից ամբողջ հատուածներ Հայ-
աստանի տեղագրութեան մասին։ կրկնութիւններից
խորշելու համար մենք առաջ ենք բերած նոցանից
միայն ընդարձակագոյնները, չմոռանալով մատնա-
ցոյց անել այլոց ինչ ինչ տարբերութեանց վերայ։
— գ. Արարական ձեռագրերը գեռ ահագին քա-
նակութեամբ անմատչելի կը մնան գիտութեան,
ցրւած լինելով Եւրոպայի եւ Ասիայի զանազան
մատենագարաններում։ կը ցաւինք, որ նոցա բո-
վանդակութեան հետ ներկայում հնարաւորու-
թիւն չենք ունեցել ծանօթանալու, սակայն կը
յաւսանք, որ ժամանակին դէպք կ'ունենանք նո-
ցանից եւս մեզ հետարբերող տեղեկութիւնները
քաղելու։

Նիւթի բովանդակութեանն համաձայն կա-
րեւոր համարեցինք այսուեղ կցելու Հայաստանի
տեղացոյցը, օգտելով բառ մեծ մասին և. Ինձի-
ճեանի եւ Հ. Ալիշանի պատւական ուսումնասիրու-
թիւններից, որ բառ շափոյ կարեաց աշխատած ենք
ընդարձակել։

ԱՅԽԵՐՀԵՑՈՅՑ ՀԵՏԵՍՑԵՆԻ

ԼԵԿԵՐԸ:

Մասին (Արարատ)։ Տօրոս։ Կորդուաց։ Խաղ-
տեաց։ Պարխար։ Գոյլախազուտ։ Մոպական։
Տայոց։ Թռեղաց։ Աբագած։ Էլհարակ։ Ականեաց։
Առիւծ։ Արարտակ։ Արոսու։ Բարդող։ Բուժ։
Գարուայ։ Գրդուռ։ Գիլափայտու։ Եղջերք։ Ըն-
ձաքիարս։ Խամուր։ Խոյթ։ Ծաղկոց։ Ծիրանեաց։
Կանգարք։ Կանգուար։ Կապոյտ։ Կոգովիտ։ Վա-
րագ։ Մեծրաց։ Մնձուր։ Մշկունեաց։ Նպատ-
Շրէզ։ Պաղատոյ։ Զողա։ Սասուն։ Աիմ։ Աեպուհ։
Առկաւ։ Վարագ։ Քարքէ։ Կեմբուտ։

ԳԵՐԵՐԸ:

Երասին։ Կուր։ Եփրատ։ Տիգրիս։ Ճորոխ։
Ազատ։ Ախուրեան։ Արածանի։ Գոյլ։ Թռւխ։
Լոփնաս։ Կարմիր։ Հրազդան։ Մարմէտ։ Մեղրոյ։
Մեծամօր։ Մեղտայ։ Մուրց։ Տղմուտ։ Քասաղ։
Մամուշեղ։ Որսունոյ։ Արծկեցյ։ Աստան։ Անդղ։

ԾԱՌԵՐԸ Ե- ՀԵՐԸ:

Բղնունեաց։ Ռշտունեաց։ Գեղամայ։ Կարնոյ։

Դ-ՀԵՐԸ:

Բասենոյ։ Շիրակայ։ Կարնոյ։ Մշոյ։ Խար-
բերգու։ Երզնկայ։ Բալասական։

Մ Ե Ւ Յ Հ Ա Յ Ո Ւ Ք

Արձաւառութեր՝ ք = քաղաք, դ = գիւղ,
դք = գիւղաքաղաք, աւ = աւան, վլ = վանք,
բ = բերդ, ամ = ամրոց։ Աստեղանիշն (^(*)) դաւառի
այժմէան անունն կը նշանակէ։

Ա. Բարբառ Հայութ

1. Դարանաղի	6. Գերջան
2. Առիւծ	7. Սպեր
3. Մնձուր	8. Շատզոմք կամ Շա-
4. Եկեղեց	զադոմք
5. Մահանաղի	9. Կարին

Դարանաղի (^(*) կամախ) Թարգան դ. Անի ամ.
Եկեղեց (^(*) Երզնկա) Երիզա աւ. Թիլ աւ.
Առիւծ աւ. Խախ դ. Ասսակերտ. Սեղեմնուտ
ձոր. Սուրենաշէն աւ. Պարթենից դղեակ. Տիրա-
շէն վ.

Մահանաղի (^(*) Թէքման) Աղեւոյ դ. Բազ-
մազրիւր կամ Խաչ աւ. Կաշէ դ. Շիրի բ. Զեր-
մայ դք. Սորտատարերդ.

Դէրջան Բազառինջ դ. Խլաճորին վ. (Սուրբ
Գրիգոր)

Աղեր (^(*) Խապիր) Ամբատաւան բ.

Կըն կարենյ ք. Արծաթի դ. Արծն ք.
Բլուրս դ. Լաստիվերտ. Խազոյ Առիճ բ. Հնձուց
վ. Մարգաց դ.

Բ. 2-րդ Բառ Հայութ

1. Խորձեան	5. Շոռիք
2. Հաշտեանք	6. Հանձիթ
3. Պաղնատուն	7. Գորէք (կամ Պորէք)
4. Բալահովիս	8. Գէգիք

Խորձեան Մորմանս դ.

Հաշտեան Գիրեհ դ. Աթռիւ ք. Հանդի-
սեանք. Մուշեղայ դ. Ալորայ դ.

Պ-Հ-Դ-Դ-Ն ԹԱՂԱՂԱՋ ամ.

Ծ-Հ-Դ-Մ Մարտիրոսաց քաղաք կամ Կիրկերտ.
Բնաբեղ բ. Խողան դք. Մամբրէ վ. Փշփաշ.
Զմշկածագք ք.

Հ-Հ-Յ-Ի- (Խարբերդ) Աշմուշատ ք. Խար-
բերդ բ. Վասակաւան.

Գ-Հ-Է- Անկղ

Ի Զորբորդ Հայո են՝ Մեծկերտ բ. Շապաղ-
Հուր բ.

Դ. ԱՆՅՆԻ+

- | | |
|------------|----------------------|
| 2. Արզն | 6. Ազնուածոր |
| 1. Կիրկերտ | 7. Խերհեթք (Խերխեթք) |
| 3. Քեղ | 8. Գղեղ |
| 4. Աեթիկ | 9. Սալնածոր |
| 5. Տատիք | 10. Սասունք |

Ա-Հ-Ն Ազոռ ք.

Ա-Հ-Ն Թառձեան բ.

յԱղձնիս են՝ Տիգրանակերտ ք. Բառաէջ աւ.
Թուխ կամ Հողց գ. Բելու գ. Կաղթացյ գ. Կոտոմ գ.
Աւդյ բ. Պալի վ.

Դ. Տ-Հ-Հ-Բ-Ե-Ր-Ն

- | | |
|----------------|-----------------|
| 1. Խոյթ | 9. Հարք |
| 2. Ասպակունիք | 10. Վարաժնունիք |
| 3. Տարօն | 11. Բղնունիք |
| 4. Աշմունիք | 12. Երեւարք |
| 5. Մարդաղի | 13. Աղիովիստ |
| 6. Դամնաւորք | 14. Ապահունիք |
| 7. Տուարածատափ | 15. Կորի |
| 8. Դալառ | 16. Խորիսունիք |

Տ-Հ-Ն Մուշ ք. Աշտիշատ աւ. Այծից բ.
Արեւու բլուր. Առազս գ. Արտից գ. Առղօնիք
(Առաջարերդ) բ. Բազում. Գարհար ամ. Գրգռոս
աւ. Գլակայ վ. (Խննակնեան տեղիք). Գոմլունիք գ.

Խորնի աւ. Խարճ ք. Խրսում աւ. Կորի. Կետղիք
աւ. Կուառու աւ. Եղանց բ. Վիշապ ք. Հացեկաց գ.
Հոռեան աւ. Հայր բլուր վ. Հացեաց դրախտ.
Չիւնկերտ ք. Ղազարու վ. Մատրավանք. Մեծամօր
ամ. (Մոկուց գերեզման). Մեղտի աւ.
Ողական ամ. Պարեխո աւ. Օձ ք. Տիրակատարք.
Մծուրք. Կենաց վայրք գ. Թարձեան բ.:

Աշունի+ Երիգայ ք. Ռախնուտ գ.:

Մ-ը-թ-ո-նի+ Աեւուկ բերդակ:

**Հ-ը+ Մանագիերտ (Մանծիերտ) գ.ք. Դոռ-
նելանք գ. Եղէգակ գ. Հայկաշէն գ. Հերեան գ.
Մանկանդոմ գ. Տողոյտափ տեղի:**

**Բ-չ-ս-նի+ Խլաթ ք. Աբծիւ գ. Բաղէշ ք.
Երաշխաւոր վ.:**

Երեւ-ը+ Պարզայ բ. Փարհուաց բ.:

**Ա-շ-ն-ի-ո-ւ+ Աբծիւ ք. Զարիշատ ք. Խառա-
բաստայ գ. Աերմանից գ. Մեծոփայ ուխտ. Առ-
պիորնկաց վանք:**

**Ա-շ-հ-ս-նի+ (*Մելազիերտ) Աբծիւ գ. Աղի
որսք ք. Դալարիս (Ածուղ) գ. Խարճանք գ.
Շոլմբոյ գ. Խոսոնք գ.:**

b. Մ-ը+*

- | | |
|-----------------|-------------------|
| 1. Խշոյր | 6. Մոկ Առանձնակիք |
| 2. Միւս Խշոյր | 7. Արքայից գաւառ |
| 3. Եշոց դաւառ | 8. Արդասովիս |
| 4. Առուենից ձոր | 9. Զերմանօր |
| 5. Միջա | |

**Զ-ե-ր-յ-ո-ր (Շատափ) Զալէլ բ. Արջք:
Ի Մոկ հն՝ Ատիճանք գ. Ապարանից վ.:**

c. Կ-ը Տ-ը+*

- | | |
|------------------|-------------|
| 1. Կորդուք | 3. " Արիջին |
| 2. Կորդուք Աերին | 4. " Կերպին |

5. Այտուանիք 9. Կարապունիք կամ
 6. Այգառք Կարաթունիք
 7. Մոթողանիք 10. Ճահուկ
 8. Որսիրանիք 11. Փոքր Աղբակ

Ու-իւ-ն+ Թոռայի գիւղ:
 Փ-ր-ը Ա-յ-ն-ի ջլմար ամ. Արինդ ամ:
 Ճ-ն-ն-ի ճախուկ բ-:
 Սաղամաս ք-:

Ե. Պ-ր-ի-ն-ն-յ+

1. Այլի կամ Կուրիւն
 Տան
 2. Մարի
 3. Թրափի
 4. Ացուերք

5. Ըսնա
 6. Տամբերք
 7. Զարեհաւան
 8. Զարաւանդ
 9. Հեր

Հեր (*Խոյ) Հեր ք. Կրտարսակ գ. Փեռ ստակ
 զ. ի Պարսկահայու և՝ Արտաւիլ քաղաք:

Ը. Վ-ր-ի-ն-ի-ն

1. Որշտունիք 16. Ակէ
 2. Տօսպ 17. Աղբակ Մեծ
 3. Բուդունիք 18. Անձախաձոր
 4. Արճիշակովիտ 19. Թոռնաւան
 5. Ազովիտ 20. Ճաւաշռոտ
 6. Կուզանովիտ 21. Կրծունիք
 7. Ասրերանի 22. Մեծնունիք
 8. Գառնի 23. Պալունիք
 9. Բուժունիք 24. Գուկան
 10. Առնոյ սան 25. Ազուանդռոտ
 11. Անձեւացիք 26. Պատսպարունիք
 12. Ատրպատունիք 27. Արտաշէզեան
 13. Երուանթունիք 28. Արտաւանեան
 կամ Երիթուն-
 նիք 29. Բաքան
 14. Մարդաստան 30. Գարիթեան
 15. Արտազ 31. Գաղրիկան
 32. Տանկրիայն

33. Արտաժնունիք 35. Կախմուան
 34. Գողվթն 36. Մարտնդ.
- Թ-ըլուսունիկ+ Աստան աւ. Գուկանիք գ. Ազ-
 բաթանից գ. Աղմամար ամ. վ. Մահուաշտ գ.
 Մանակերտ. Կարեն կ վ. Կորագեօղ. Աւասրաց
 Անիք. Պարծիս գ. Տշող գ.:
- Տ-ըլուսունիկ. Արտամետ գ. Անկղ գ. Ա-
 չեւականից գ. Լեզուոյ գ. Կոխապանից գ. Վարագայ
 վ. Զորոյ վ. (Աղնապատ). Փայտակշտան գ.:
- Ա-բերենի Բերկրի ք. Առեստ աւ. Երիկաւր:
 Բ-ըլուսունիկ+ Անըստան գ.:
- Անյեւ-շ-նիկ+ Բլրակ գ. Հոգեաց վանիք. Դար-
 բնաց քար. Կանդուար բ. Կորաբերդ:
- Եր-ըլուսունիկ+ Հայոց Զոր. Որդոք գ. Գերեզ-
 մանիք բլուր:
- Մ-ըլուսունիկ Համբոյրազան աւ. Ախտահոտ
 աւ.:
- Արտ-ըլ (ՀՄակու) Աւարայր գ. Եղինդ գ.
 Մակու գ. Շաւարշան ք. Կերսեհապատ գ.
 Ծարծորու վ.:
- Ա-բ-է-՛ Ա-է-՛ Կակենից գ. Օսի գ. Որսիրանիք գ.:
 Ա-ն-ի-ն-յ-ո-ր (Հ.Քողուր) Կոտորն բ. Կերական
 գաշտ:
- Թ-ըլուսունիկ Դղեակ բ. Կեան բ. Պակորուատ
 աւ.:
- Ճ-ըլուսունիկ Բակեար բ. Գետք աւ. Գիւղիկ
 գ. Մառական աւ. Շամիրամ' բ.:
- Ա-ը-լ-չ-չ-նիկ+ Արտաշէսեան աւ.:
- Գ-ը-լ-ն (ՀԱկուլիս) Որդվատ գ. Զուղայ աւ.
 Վահանդ գ. Գիրան. Սալարին ք. Կացիւնեաց աւ.
 Հաճուկ աւ. Բալայ Սրահ.:
- Մ-ը-լ-թ Մարտնդ ք.:
- Ի Ա-սպաւրական են՝ Ամուկ բ. Անալիւր գ.
 Արձունիք գ. Գագկակերտ. Խողարելք գ. Լիմն եւ
 կտուց վ. վ. Պղուսնիք գ.:

Թ. ԱՌԵՆՔ+

- | | |
|---------------|-------------------------------|
| 1. Երեջակ | 8. Հարանդ |
| 2. Ճահուկ | 9. Բաղք |
| 3. Վայսց ձոր | 10. Չորք |
| 4. Գեղաքունիք | 11. Արեւիք |
| 5. Սոսոք | 12. Կուսական կամ՝
Կովսական |
| 6. Աղահեճք | |
| 7. Ծաղկ | |

ԵՐԵՆՔ-Ի ԵՐԵՆՔԱԿ. Ապրակունիք գ. Ամառա-
շէն. Ամառոյ վ. Արեւելք. Ագուլիք. Բերդիկ.
Բուստ. Գուգավանք. Գոչեն. Զաւաշրիվ. Թեղեակ.
Մայրեակ. Նորակերտ. Աղոհի. Ասկէձոր միւս.
Ոփիք. Ծահկերտ. Տերեկունիք. Տքովնա. Քարկոփ:
Ճ-Հ-Ա-Կ Ճահուկ. Արմաւաշէն. Աղբերիսաշ.
Ազու. Ազտաւ. Անուշաւան. Արքոյքա. Բարունք.
Գայլակալ. Գեհենիք. Դալարինք. Դրախտիկ.
Եղասունք. Ընդզակերտ. Թամաշաղ. Թաթերք.
Խախ. Ծաւալք. Կուքի. Հեծանայ. Նորաշինիկ.
Ծըմբըմայի վ. Ծաւեն. Արդոք. Ծահապօնից բ-
եւ վ. Պահեստ. Վասակերտ. Տախտակ. Տիգէն.
Քոյլք¹.

Ա-Յ-Ե Չոր (Գարալագեազ) Արկազան գ.
Արտաինից վ. Աջողք. Արած. Ապանայ. Արկա-
թուկերտ. Արտաբուի. Ազնչոց բ. Առշար. Արօր.
Աղմարունի. Բարձի շէն. Բակերտ. Բերդի մայր.
Գլաձորոյ վ. Գոլոշտի վ. Գաղատայ վ. Գոմք.
Գնդայի վ. Գոսոյենի վ. Դրունք. Դեգն. Եղեղիք
դք. Երիժու. Երերունք. Զետեայ վ. Էրգել.
Թանահատք վ. Լիճ. Խոտակերից վ. Խորձայ վ.
Խարաշինք. Խնձորուտ. Կապոյտ բ. Կէշուտ.
Կաքաւուց աղբիւր. Հերմննավանք. Հողոցիմ դ.
Հրաշկարերդ. Հորք. Հացիք. Մայրադուրք.

¹ Առեփանոս Օրբելիոն, որ տալիս է մեջ Աինեաց
երկրի մանրամասն աշխարհագիրը, չի յիշէ. թէ աշխարհա-
գրական անտեսոց տակ ինչ աեղիք են կարծեցեալ:

Մոխրոց վ. Մոնն. Կըրրիւն. Ծատախ. Աւոիք. Աւզի ձոր. Պետական. Ցախաց վ. Ցրտագետ. Փշօնք. Փրտկոյ վ. Քաշի մարդ. :

ԳԵՂԱՎԱՆԻ (ԳԵՂԱՔ Հայ) Աեւան վ. Այլիշ-վանք. Աղցոց վ. Ալբերդ. Արդիմի. Ախոյինք. Ամասրեայ վ. Բրտի ոյրք. Գառնի գ.ք. Գեղարքունյայ բ. Գառնակեր դ. Գոճոյ ձոր. Գոմք. Դաստակեր. Երիզկոյք դ. Երերուն դ. Էւանակաց հուն. Էլառ դ. Թամրարարք. Խոկառինձ. Խորոտն. Ծաղկայ վ. Կոթ աւ. Կոկոյք. Հաւուց թառ վ. Հողք. Հովուաց ագարակ. Չագ. Վեխը. Մաքենիս վ. Մեհոդած. Ճապոտիկ դ. Յուշարերէս. Կոռաշէն. Ծողագայ վ. Ծիկակարբն. Ափեաց ձոր. Աղենի. Պահավանք. Ակերտ. Վանաց վան վ. Թմոկ. :

Ա-Ր+. Արփունչն. Ասխոզ. Արմեալ. Ախուստուն. Արաւիսարակ. Բարկոյք. Բերդաձոր. Բակաֆոր. Գողոց ագարակ. Դարանակ. Եղեցիք. Զերիշտառ. Զաշուրարակ. Խորաստանարակ. Խորթագետ. Ծափաթաղք. Կուճկունիք. Հաւութաղք. Մաքենոց վ. Ծապուհաթաղ. Ծատվան. Ծինիք. Աւնջիձոր. Արդոնիք. Պաշուք ներքին. Ասթք. Վասակաշէն. Վաշէի բակ. Տեառնատեան. Տրէտուք. :

Ա-Շ-Հ+ (*Զանկեազօր.) Ա-Ժ-Էն. Արտադետ. Անէժ. Արուական. Բաղախանիք. Լորք. Խաղտիք. Խրու. Կագոհորինք. Ծիծառնու. վ. Կարկասան. Հակ. Հունչաք. Հայելեակ. Զիասար. Մատրակերտ. Մննի. Մշենի. Մախուլն. Մեղի. Ծամրթայ վ. Վժնարերդ. Տանձուտ. Քաշաթաղք. :

Ծ-Հ-Դ. Արիս. Ախնէն. Աքածի. Արեւէս. Արթէք. Բնունիք. Բռնակոթ. Գոմեր. Գրվակ. Գայլոնց վ. Լզուերծ. Լշտկամայրի. Թուրծողու. Լծէն. Խոսուր. Խուրէք. Ծեղմի. Ծննի. Կամավանք. Ծացարդ. Կուրավանք. Հարժիք. Մո-

Դաշտ . Մրուց . Մշկաձոր . Մազագնի . Մուցք .
Մորենի . Մարդակոյք . Ծաղատ զբ . Ծբար .
Պիստք . Սապատաձոր . Տորունիք . Տիունիք . Տա-
ղու . Ցուր :

Հ-Բ-Ն-Դ (^(* Զանկեազօր.) Ականա . Անձկայք .
Ազտիբառ . Արքոյ . Բաղեան . Բորստան բ . Բահի-
զաձոր . Գնդաշէն . Գորայք . Եղնի . Թաղարայ .
Խալխալք . Խորիսո . Խանածախ . Խադավանք .
Խարբինք . Հալէ . Զագաձորոյ բ . Մակաղոց .
Մրկաբար . Կափակաշէն . Ծաթիթազք . Ծաքվայ
վ . Ծոռնոխոյ . Ուսկածակ . Պետրոսկայ վ . Պատան-
դավանք . Տանձեակ :

Բ-Շ- (^(* Բարկուշատ.) Տաթեւ . Անդոկա-
րերդ . Աշաղու . Արձանաձոր . Արուբու գ . Անական .
Աւարագետ . Բաղարերդ . Բղենոյ բ . Բարկուշատայ
բ . Գողեվանք . Գուկական . Եճանան . Զարերի
դաստիերտ . Խըմոյց . Կովսական գ . Կաւարտ . Կմեղ .
Հիւնեաց ձոր . Մոգարակ . Մեծամար գ . Մաճոյ
շէն . Հզզար . Ծընչերք գ . Ծէկը . Որոտն բ . Պար-
քոն . Վազանգնու գ . Վարդավանք . Տափեար .
Տաթնեղիշէն . Տերանդատ :

Չ-Ր- (^(* Ղափան.) Կապան ք . Բակավանք .
Բեխորոտ . Գեղի բ . Ծաղթանու . Կամաճուտ .
Կարաւարերդ . Կահուրայ . Ծարաբոյ . Տինիք :

Ա-Ր-Ե-Ւ- (^(* Մեղրի.) Աղվանք . Զուարի վ .
Թաղամայրի . Լոհավանք . Լուսկայ վ . Խոլայ վ .
Կարճաւան . Կուրավանք . Կորեկնէք . Կառատի .
Մոյրի բ . Մեղրոյ վ . Մալունաւ . Մանազու . Ար-
գիսց վ . Վարդանաձոր . Տաշտուն :

Կ-Ա-Ն-Ց-Ն (^(* Ուրտապատ.) Արգաբ . Ար-
ցախամայրի . Բեխ գ . Բերբնի . Բեխեւերջի . Բոստ .
Գրհամը բ . Գագավանք . Գից մայրի . Գալք . Երե-
գիք . Թաթու մարդ . Լուց մայրի . Լիմ . Ծանազու .
Ծորի . Կիծ . Կերեն . Հոյնոցկոր . Մարուր . Մենիք .
Մաճկան . Կորտինիկ գ . Կախկոտան . Ծիկահողք .

Պազմուի վկանք աղքա-
մանատուր . Ալառա-
մադրիւր . Վախտանգաձոր . Տարվանոս . Փա-
ռուարտոյ վկանք :

Ժ. ԱՐԵՎԻՆ

1. Միւս Հարանդ	7. Արուխանք
2. Վայեկոնիք	8. Պիսանք
3. Բերգաձոր կամ Բերձոր	9. Պանծկանք
4. Մեծ կուանք	10. Ոխական Ռատան
5. Մեծ իրանք	11. Քուստի Փառնէս
6. Հարճանիք	12. Կողթ

Միւս Հ-Ք-Ն-Շ (*Ըստշի) Ամարաս դ . :

ԲԵՐԴ-Յ-Շ-Շ (*Ըստշատիլ) Զարեք բ . Աստ-
դարլուր :

Ա-Յ-Ն-Ն-Ն-Ց (*Զլարերդ) Հանդարերդ :

ՃԱՐԳԱԽ ԵՆ՝ Գանձասար վկ. Արածանիք դ .
Դամնոյ անապատ . Դիզափայտ վկ. Խօխանարերդ .
Խորանաշատ վկ. Հաղարծին վկ. Հայթերք դղեակ .
Ճառաբերդ . Վարդանաշատ դ . Խաչեն ք . :

Ժ. Փ-Յ-Մ-Ն-Շ-Շ-Ն

1. Հրաքոս Պերուժ	7. Հանի
2. Վարդանակերտ	8. Աթշի
3. Եօթնափորակեան	9. Բագաւան
Բագինք	10. Սպանդարան պե-
4. Ռոստի Բաղա	րուժ
5. Բաղանոստ	11. Որմըզդ Պերուժ
6. Առասպիժան	12. Ալեւան

Քաղաք գլխաւոր՝ Փայտակարան :

Ժ. Ռ-Թ-Ւ

1. Արանքոստ	5. Տուչքատակ
2. Տոի	6. Գարդման
3. Ռոստպացեան	7. Շիկաշէն
4. Ազուէ	8. Ռոտի Առանձնակ

Գ-Ր-Ռ-Հ-Ն- Գ-Ա-Ր-Դ-Մ-Ա-Ն աւ . Գ-Ե-Մ-Ա-Ր-Ա-Կ-Ը բ-
Բ-Ե-Ր-Ը Շ-Ա-Մ-Ի-Ր-Ա-Ծ-Ո-Յ :

Շ-Ա-Մ-Ի-Ր-Ա-Ը Գ-Ա-Ն-Ճ-Ա-Կ Ք-:

Ո-Ր-Է Ա-Ն-Ճ-Ա-Ն-Ի Պ-Ա-Ր-Ա-Ա-Ն Ք-:

Ժ-Ա-Լ-Ա-Խ- Ե-Խ- Հ-Ա-Ղ-Բ-Ա-Ա- Ե-Խ Ս-Ա-Ն-Ա-Ն-Ի-Բ-Ի-Ն վ-վ-
Դ-Ա-Ր-Ա-Հ-Ա-Ծ դ- Դ-Ա-Ր-Ա-Կ-Ա-Ն դ- Ե-Ր-Գ-Ե-Վ-Ա-Ն-Ը բ- Խ-Ա-Դ-
Խ-Ա-Ղ ք- Մ-Հ-Կ-Ա-Վ-Ա-Ն-Ը բ- Լ-Ո-Ր-Ա-Մ դ- Մ-Ա-Կ-Ա-Ր-Ա-Մ վ-
Մ-Ա-Ճ-Ն-Ա-Ր-Ե-Ր-Ը Տ-Ա-Լ-Ո-Ն ամ- Տ-Ա-Լ-Ո-Ն դ- Տ-Ե-Ր-Ո-Ւ-Ն-Ա-Կ-Ա-Ն
բ- Շ-Ա-Մ-Ի-Խ-ի ք- Շ-Ա-Ք-ի ք- Շ-Ա-Մ-Ք-Ո-Ր ք- Շ-Ա-Վ-Ա-Ր-Ա-Ն
ք- Շ-Ա-Թ-Ա-Ր ք- Շ-Ե-Ր-Ո-ւ-Ն ք- Մ-Ա-Հ-Ա-Ն ք-:

Ժ-Դ- Գ-Ա-Ն-Ճ-Ա-Ն-Ի-Բ-Ի-Ն

- | | |
|--------------------|------------------|
| 1. Զ-Ո-Ր-Ո-Վ-Ո-Ր | 6. Կ-Ա-Ն-Գ-Ա-Ր-Բ |
| 2. Ծ-Ա-Մ-Ի-Ր-Ա-Ը | 7. Ա-Բ-Ո-Մ-Ա-Ն |
| 3. Կ-Ա-Ղ-Բ-Ա-Վ-Ո-Ր | 8. Ջ-Ա-Լ-Ա-Բ-Ի-Ք |
| 4. Տ-Ա-Հ-Ե-Ր | 9. Կ-Ղ-Ա-Բ-Ը-Ք |
| 5. Թ-Ա-Խ-Ե-Ր | |

Զ-Ր-Ռ-Հ-Ն- Ա-Ր-Բ-Ո-Ւ-Ն-Ա-Վ-Ե-Ն դ- Գ-Ո-Շ-Ա-Մ վ-ա-ն-Ը կ-ա-մ
Գ-Ե-Ր-Ի-կ- Կ-Ա-յ-Ե-Ա-Ն բ- Հ-Ա-մ-Ա-ա-ր-ի գ- Ա-չ-խ-է դ-:

Տ-Ա-Յ-Ե-Ր- Լ-Ո-Ր-Ի-Ք- Շ-Ա-Մ-Հ-Ո-Ւ-Ր-Ե- կ-ա-մ- Օ-Ր-Բ-Է-Ժ-
Բ-Ա-Գ-կ-Ե-Ր-Ա- Գ-Ա-Գ բ- Գ-Ա-մ-Ա-Ն-Ի-Խ ք- Լ-Ո-Ր-Ո-Մ-Ա-յ-Ր վ- Ո-Ր-
Գ-Ա-Ճ-Ո-Ր-Ո-Ջ Ա-Ո-Ւ-Ր-Ր Կ-Ա-Ն- Ք-Ա-Պ-Ա-Ր վ- Ա-Կ-Ո-Ւ-Ր-Ե-Ժ- ա-մ-
Պ-Ղ-Ե-Ճ-Ա-Վ-Ա-Ն-Ը դ-:

Ջ-Ա-Ն-Ճ-Ա-Ն-Ի-Բ-Ի-Ն Ա-Խ-Ա-Լ Ք-Ա-Ղ-Ա-Ք- Դ-Լ-Ի-Ւ-Ե-Լ-Ն դ-
Խ-Ա-Ղ-Ա-Ր-Ե-Ր դ- Ա-կ-ի-ւ-Ր-ի դ-:

Ժ-Դ- Տ-Ա-Յ-Ե-Ր-

- | | |
|------------------------|------------------|
| 1. Կ-Ա-Ղ-Ե-Ր | 6. Ա-Բ-Ա-Ղ-Ե- |
| 2. Բ-Ե-Ր-Դ-Ա-Ց-Գ-Ո-Ր | 7. Ա-Ղ-Ո-Ր-Դ- |
| 3. Պ-Ա-Ր-Ա-Խ-Ի-Վ-Գ-Ո-Ր | 8. Կ-Ա-Գ-Ո-Ր |
| 4. Ճ-Ա-Կ-Ը | 9. Ա-Կ-Ե-Վ-Գ-Ո-Ր |
| 5. Բ-Ո-Ւ-Խ-Ա-Մ | |

Ո-Ռ-Ե-Ն-Վ (* Թ-Ա-Ր-Բ-Ը-Ն-Ե-Մ) Գ-Ի-Ւ-Ղ-Ի-կ դ- Ա-Ա-Ր-Դ-Ա-Վ-Ե-Ն դ-:

Պ-Ե-Ր-Դ-Ա-Ց-Գ-Ե-Ր-Ը (* Օ-Լ-Ո-Ռ-Ի-.) Ա-Ե-Խ-Ա-Մ- Ք-Ա-Ղ-Ա-Ք-:

Ի Տայր են՝ Արահեղ գ. Աշունք տեղի.
Զենակս դ. Էրախանի ը. Թուլիսարք ամ. Խշանաց
գիւղ. Հաւածիչ ք. Մամբուանի ձօր. Մկնառինձ
դ. Որջնհաղ դ.:

ФБ - Г. ДАРВИШ

- | | |
|-------------------------------|------------------|
| 1. Բասեն | 11. Ճակատք |
| 2. Գարեղեանք | 12. Մասեացոտն |
| 3. Աբեղեանք | 13. Կոգովիտ |
| 4. Հաւունիք կամ
Վահեւունիք | 14. Աշոցք |
| 5. Արշարունիք | 15. Նիդ |
| 6. Բագրեւանդ | 16. Կոտոյք |
| 7. Ծաղկոտն | 17. Մազադ |
| 8. Շիրակ | 18. Վարաժնունիք |
| 9. Վանանդ | 19. Ոստան Դունայ |
| 10. Արագածոտն | 20. Դաշտն Շարուր |

Բայեն . Վաղարշաւան աւ . Ալվար դ . Ամենիկ
ամ . Աւետիք աւ . Ակոսիկոմք վ . Բողոքերդ բ . Գո-
մաձոր դք . Դու դ . Որդորու դ . Ռախայ դ . Սալ-
քորա տեղի . Վաղաւեր դ . Կապուտու բ . Մժբե-
կերտ բ :

Գ-Է-Լ-Ե-Ն-+ (*Ալեքսին Բամեն.) Ալիշապահոր
 (Թամթալոյ վահկ.) Ալշբոր Ք. Դից մայրի. Սիւն-
 ձե զնոյ դ. Ծառաքար վ.:

Արշակունյաց (Երասխանոր, Աշորնելք)։ Ար-
տազերս ամ։ Բագարան ք։ Երուանդաշատ ք։
Երուանդակերտ կամ Մարմետ։ Զարեւհանի գ։
Կաղզւան գ։ Կապոյտ ամ։ Կամրջաձոր վ։ Կապու-
տաբար վ։ Կալոց գ։ Կախճրաձոր գ։ Շիրմաց գ։
Շիրիմբ վ։ Վարդիկ հայր վ։

Բ-Հ-Հ-Ե-Ն-Դ- (Ալաշկերտ) . Արամաննայ դ .
Աշտարակաց դ . Արծակ դ . Բագուան կամ Բագնաց
աւան . Բերդիսենք դ . Բլուր դ . Եղեգեակ դ .
Զարեհաւան ք . Զբաւ դ . Վազարշակերտ ք .
Տիրառիճ դ .

Ծա-է-ն-ո-ն. Անդղ բ. կոստեանք գ. Ըստհա-
պիվան վ. Առաւիւտոց գ.:

Ըէ-է-ն. Անի ք. Արգինայ գ.ք. Աստեղանի
գ. Բագնայր վ. Բեռնաւաք գ. Բաւաց ձոր. Դպրա-
վանք. Երազզաւորք (Ծիրակաւան) զ.ք. Երերուք
վ. Ըշտէ գ. Խծկօնք վ. Հառիճայ վ. Հոռոմանի
վ. (Խօշավանք). Մարմաշէն վ. Մրեն դք. Որմտանի
գ. Քաւազին բ. Տեկոր վ.:

Ա-ն-ն-ո-ն. Դրաշպետ գ. Երեւել գաշտ.
Զարիշատ ք. Խջաւանից գ. Խաչի վ. Կարս ք.
Կաճկաւքար գ. Աղ մնոյ գ.:

Ա-է-է-ն-ո-ն. Արուճ (*Թալիշ.) Անբերդ
(*Բիւրական) ք. Աշտարակ գ. Ազգք աւ. սուրբ
Գևորգ վ. (*Մուշնի). սուրբ Գրիգոր (*Փարազի) վ.
Եղիվարդ դք. Թալիխն գ. Կարբի դք. Կուաշ աւ.
Յովհաննավանք. Սաղմոսավանք. Սերեւելի գ.
Օշական գ.:

Ա-է-ն-ո-ն. Կողը դք. Ծատիկ բ. Սուրմառի
բք. Չողկերտ աւ.:

Մ-է-ն-ո-ն-ո-ն. Ակռոի գ. Ա. Յակովբայ վ.
Աւղեոյ գ. Աւրազկերտ գ.:

Ա-է-ն-ո-ն-ո-ն. Դարոյնք ամ. (Բիազտի. *Բայ-
ազիս). Արծափ բ. Արշակաւան աւ. Բագարան գ.
Բծար գ. Մարթափ ք.:

Ա-ն-ո-ն. Հալալաշէն գ. Անեք գ.:
Կէն (*Ապարան). Բջնի ք. Եղիպատրուշ գ.
Թեղենիի վ. Կեչառուք վ. Զինավաճառ տեղի.
Կորածոր. Մայրոյ վ.:

Ա-ո-ն-ո-ն. (*Երեւան). Արամօնից գ. Այլա-
բերից գ. Չագ գ. Ավայից գ.:

Ա-ո-ն-ո-ն. Դ-ն-ո-ն. Դուիին ք. Արտաշատ ք. Խոր
Այրապ. Մարակերտ գ. Քարունչ դք.:

Ը-ը-ն-ո-ն. Կորաշէն գ.:
Ո-ը-ն գաւառ. Ասդրայ բերդ:
ՅԱՅՐ-Ե-Ն-Ե-Ն. Աւղարշապատ ք. Արմափիր ք.
Արած գ. Աշնակ աւ. Դողս գ. Երազմշյն կամ Ե-

բազացոյց մեջեան . Հռուսմոց մարդ . Կաւակերտ
աւ . Արկոսի գ . Ցոլակերտ աւ . Փառախոս :

*Sēq̄ib̄r Հայոց Մեծաց , որոց գաւառներ ան-
ձանօթ են՝*

Աղստեւ . Ալարդանակերտ ք . Աշխարհաբերդ
ք . Գուտենի գ . Դրասխանակերտ աւ . Կայծօն .
Թրլիսմոյ գաւառ . Համամաշէն (Տամբուր) ք .
Հնարակերտ ամ . Մահկարերդ . Մաջառուց գ .
Միափոր գաւ . Նոր Շիրական . Ալառակաշատ աւ .
Ալարդանաշատ աւ . Արքնջունիք աւ .

Փ Ա Ք Բ Հ Ե Ց Ք

Ա - Զ Հ Հ Հ Հ

Բազանիս կամ Պետոնդապոլիս . Թէսդոսիո-
պոլիս . Սատալա . Նիկոպոլիս . Կողոնիա . Տրավիզոն .
Կերասոն :

Ե Ր Հ Շ Շ Շ Հ Հ Հ

Աերաստիա . Աեւաստոպոլիս . Կոմանա . Զէլա .
Բրիզա :

Ե Ր Շ Շ Շ Հ Հ Հ

Մալաթիա . Արկա . Արարիստուս . Արիարա-
թիա . Միւս Կոմանա , (որ կոչի եւս Խրիւսէ) .
Կուկուսա :

Հ Բ Ց Ա Մ Ի Ֆ Ա Ց Ք

Աւահայ ք . Ածրին ք . Արրդին ք . Ապլասթա
ք . Ալար ք . Անդրանոսի գ . Զօրինակ ք . Թըլիու-
րան ք . Թոռին ք . Թաւլրուր ամ . Թըլպաշար ք .
Ծուլման ք . Լատր ք . Հառանմուր ք . Հոնի ք .

¹ Novellae Justiniani XLX περὶ διατυπώσεως τῶν ποσάρων ἀρχόγριων Ἀρμείας. Φոքր Հայոց բաժանութիւնը մասս հապիւ թէ աւելի հին լինի , քան Յուստինիոս կայսեր ներկոյ պատմական յիշուսակարանը :

Հասնք. եւ աւ. Կը ենիկի բ. Պիրք. Զոլման բ.
Զալազ դաւ. Սամաւաստք. Աեւերիկ ք. Արուճ ք.
Տէպ բ. Տափթիլ գ. Քսաւս տեղի:

կ ի լ ի կ ի լ
Լ ե ն ե լ

Տաւրոս. Անտիտաւրոս. Ամանոս կամ Աեաւ.
Լերինք. Արմեն. Դրունք Ափիկիսյ եւ Ամանսեան:
Գ. Ե. Պ. Հ.

Առիմակգիս. Կալիկադնոս կամ Աելեկիոյ
գետ. Լամաս. Ախոցնոս. Աարոս. Պիւռամոս կամ
Զահան:

Գ. Ե. Պ. Հ.

Ա. Աշերն Աէր Աւանց. Կալոնոռոս (Աւանց*) ք. Ասյերտ ք. Սիդարէ ք. Անտիոք Կրա-
գեան ք. Աելինոս կամ Տրյանուպոլիս ք.
Կաղաւն բ. Անեմուռ բ. Կագիզոս ք. Արտինոյէ
ք. Աելանիս ք. Աելենդերիս ք. Ափի բ.:

Բ. Աէլ-Աէլ. Աելեւկիս ք. Կոսիկոս ք.
Կորբերդ ք. Պունաս ք. Մուդ ք. Մաղմայոյ ք.
Գ. Տ-Հ-Ն. Տարսոն ք. Անքիալէ ք. Դեղն-
քար բ. Էրոյի աւ. Պարզաս աւ.:

Դ. Այս. Եղեաս (Այսան*) ք. Քաղաք
անհմանակից՝ Խասս:

Ե. Ճիւր. Պայտա ք. Ճկեր բ. Արիդի վ.
Շուզը վ. Քարսեղանց վ. Մաշկեւոր վ.:

Զ. Մ-Ի-. Մսիս ք. Աբքակաղնի վ. Մարտո-
դ. Ճոխաթու վ.:

Է. Ա-Ն-. Ասանա ք. Գերօն ք.:

Ը. Լ-Ի-Ր-Ն-. Լամբրուն բ. Ասկիւռաս բ.
Վեռըռձեր վ. Լուլու բ. Ակեւռոյ վ. Աարու-
անապատ. Կավանի Ագարակն. Պապեռօն բ.:

Թ. Ա-Ր-Հ-Բ-Դ-. Անարզաբայ Դղեակ. Անէ բ.
Դրազարկ վ. Կաստազօն վ. Եւ բ. Ճուրակի գ.
Զ. Ջիանոց բ. Սիմանկլայ բ. Տուպնի տեղի:

Մ-ը-ն- գաւառ՝ մասն ինչ Անարդարացի:
 Ժ- ՈՒ- . Սիս ք. Բեկնբար բ. Կեմայ բ.:
 ԺԱ. Բ-ը-յ-բ-ե-ր-թ. Բարձրբերդ Դղեակ. Ան-
 դրիասանց Աւիտ:

ԺԲ. Մ-ը-ն- . Մոլեւոն Դղեակ. Գաներոյ
 աւորը ուխտ. Կատենոյ դղեակ. Կամբիկ վ. Պօղո-
 սական անապատ. Տեւածոնաց աւ. Վաներ աւ:

ԺԳ. Լ-ը-ն- (Գարաման*). Լարանտա ք.
 Խաւարա ք. Լիւստրա ք. Մանիսն բ.:
 ԺԴ. Կ-ը-յ- (Պ-ը-). Կողիատառայ բ.:
 ԺԵ. Ծ-ը- (Հ-ը-). Ծամանդի բերդ:

ԺԶ. Ց-ի- (Ց-ի-). Ականց կամ Ակներոյ վանք:

ԺԷ. Հ-ը-ն- (Հ-ամբին*). Հարդան ք. Կոր
 բերդ. Կիղիստուա բ. Անդրուն գ.:

ԺԸ. Թիլ Հ-ամենոյ. Թիլ Համանոյ ք. Հա-
 րուն ք. Համուս բ. Սարաւանի քար բ.:

ԺԹ. Մ-է-ժ-ո-ր- . Բերդուս բ.:

Ի. Ընկ-ը-շ-ո-ր-. Ընկուզուս բ.:

ԲԵՐԵԿԵՐ

Ալար. Ամուստա. Այժմուտապ. Առիւծ. Առ-
 տուս. Արեգնի. Բերդկան բերդ. Գանձէ դղեակ.
 Թիլպասոյ բ. Թոռնեկոյ բ. Ժամնկոյ բ. Ժեռմանենի
 բ. Լակուտենի. Լամաս. Լաւզատ. Լեւոնի բերդ.
 Խալընճաբար. Կանչի կապան. Կովառա. Կովաս.
 Կուտրաս. Կուկլակ. Կումառատիս. Կուպա. Կուտ.
 Ճանձի. Մազոտիսաշ. Մանոշ. Մանաւդատ. Մառ-
 նիշ. Միտիզօն. Միքայել կլայ. Մունդաս. Մու-
 ռանդին. Նազլոն. Շողական. Պալապօլ. Պաղըաս.
 Պստանդէ. Պստոօմ. Պռականաս. Սիմանկլայ.
 Սինիտ. Սիւիլ. Սմբատակլայ. Վահկոյ. Վոռ-
 կիս. Վէտ. Տաճկիբար. Տիմիտուպօլ. Ֆարխնից.
 Գոռնոս:

ՀԵՅԵՍՈՒՏՆԻ ՆՈՒԵԺՈՒՄՆ

Ա. ԲԵԼՇՅՈՒ

Արուլ Արքաս Ահմեդ ալ Բելշյուի Բաղդա-
դից յայտնի էր իրրեւ պատմազիր եւ քերթող,
որ ամիրապետ Զափար ալ Մուտավակիլի սէրը եւ
մտերմութիւնն կը վայելէր: Վախճանեցաւ 892թ.,
սխալմամբ ընդունած լինելով մեծ քանակու-
թեամբ belâdsor anacordia, որի համար ստացած
է իւր մականունն: Կորա ամենանշանաւոր գրու-
թիւնն է՝ “Երկրների նւաճման գիրք” (جغرافیہ)
(ալեճան), որի մի գլուխը կը կադմէ: “Հայաստանի
նւաճումն”: Նիւթը սակայն աւելի բնդարձակ է,
քան ցոյց է առաջի վերնագիրը, ամփոփելով իւր մէջ
եւս Աղլանից, Վրաց եւ կովկասեան ինչ ինչ ցեղերի
նւաճման համառօտ պատմութիւնն: Ամանք կը
կարծեն, որ Բելազորի այս աշխատութիւնն նորա
աւելի բնդարձակ, բայց շաւարտած գրութեան
միայն համառօտութիւնն է:

(Արժատումն ը. — իրն — որդի)

Ինձ պատմել է Պարտաւի¹ բնակիչ Մահմեդ
բ. Խամադիլ եւ այլ մէկը՝ Արի բարոյ Ան-

¹ ՀԱՅՀՅ. (Բարզաս) ուստէական մայրաբազարի ա-
րարտեան անունն է. Istantgi (Ճ. Դ.) իւր “Աշխարհից
զրբում” հետեւեալ մանրամասնութիւնները կը հաջորդէ
քաղաքին մասին: “Պարտաւ շատ մեծ քաղաք է, երկարու-
թեամբ եւ լայնութեամբ աւելի քան մի վարսախ. կը
գուանեի ախորժելի եւ պազարեկ անզում... ½ վարսախ
Պարտաւից հեռու կ'անցնի կուր (զետը). ուր կ'արսան Գո-
ր-ին եւ Ասոբ կոչուած Ճիներ... Պարտաւի եւ Շամբորի
բնակիչն հայկական ծագում ունին եւ կը կոչուին Ան-
դրէ (Անդրդիր): Քաղաքին նացորդը դուցէ ոյժման
գերտե զիւղի մաս է պորելու. Տերտէր (رتر) զետի
ափին: Քաղաքին անունն կը այս գետ կու Ասորեստանի թա-

բասար ը. Բահիք Հայի բերանից, եւս Մահմեդ ը. Բիշը կարնեցի¹ (այս քաղաքի) ծերերի առելով, եւս Բարմակ ը. Արգալահն Դուիինցի², Մահմեդ ը. Մուխայր Խլաթցի³ եւ այլք այնպիսի մարդկան բերանից, որոնք ծանօթ են եղել Հայաստանի գրութեան հետ. Նոցա պատմածը ես միմեանց կցեցի եւ մի առ մի կրկնեցի. ահա թէ ինչ կը պատմեն նորա: Աշմուշատ⁴, Կարին, Խլաթ, Արձէշ⁵ եւ

Պատոր Ասրդոն, որ Վանեան Ծուռաս Ա. ին հալածելով 716ին մասու Մաննացոց Երկիրը եւ Նորան կից Zikirta իշխանութեան Parda մայրաքազաքն այրեց: Այսպիսով Վասրեստանի յաղթական գեները կը հանեցը ոչ միոցյն մինչեւ Ուրմիայ ծովը: Ինչպէս կ'ենթագրեն շատերը, Նորա արեւելքան կողմը պարելով Մաննացոց Երկիրը, այլ եւ մինչեւ Ուրմի եւ Արմենի:

1. قَلْقَال (Քաղցալա) Կարին քաղաքի այլայլան անունն է (= Ք-ئىن + -لى+), որի ածական ձեւն է ^{أَسْتَخْرِي} Istaxri կը բացառէ: «Քաղցալայ նամանապէս Էրզեն-էլ Ասում կը կոչի». Հայուստանի սահմանագլխի բերդ է փոքր Սախոյ գետ, ուր Վարդապատկանից պահապան գորք է բնակի, և Ճման. Կազղրէտ (Strab.), Karanitis (Plin.).

2. حَلَّاقَة (Խլաթ). چَلَّاقَة (Bar Hebr. Chron. Syr. 208, 258, 353. Abu'l feda). Խօլունա (Ptol.). سَقَدَيل (Saqadil), որ հաւաքորէն անունին աւելի հին՝ պարսկական ձեւն է. Հանդէս է գալիս այլ աշխարհագրական անուններում եւս, որին արձ էլլ Վարդապատկանաւմ, այլն: Յունակին ձեւն է Լոύթոս, Tibior. (Procop., Const. Porphyry.), سَقَدَيل (Assemani, III, 2).

3. حَلَّاط (Խլաթ). چَلَّاط (Bar Hebr. Chron. Syr. 208, 258, 353. Abu'l feda). Խօլունա (Ptol.).

4. شَيَاطِن (شیاطن) որ է * Ազօպօսատա (Ptol. 5, 13, 19), Arsamosata (Plin. VI, 9, 26; Tac. Ann. XV, 10) — Արշամուշատ (առ ի Հանձիթ ի Գ. Հայ): այժմ Ախման Մասեն: Տարբերելու է Ասմուստա քաղաքից, որ կը յիշի արարացիներից աւունք (Արտ. Ղֆեղա), եւս شَيَاطِن Beladzori, հման: Ճաճա (Bar Hebraeus).

5. أَرْجِيش (= ڦڻ) Bar. Hebr.) հարկա, Տարբա-

Բաջունայս՝ կը կոչւեին Չորրորդ Հայք, Ատապուրական՝ աշխարհը, Դաւին, Ծիրակ, Տայր³ և Բագրեւանդ՝ Երրորդ Հայք, Զուրդան՝ Երկրորդ Հայք, Ախական և Ազուանք՝ կը կոչւեին Առաջին Հայք: Իսկ այլք կը պնդեն. որ Աշմաշատ միայն կը կոչւեր Չորրորդ Հայք, Կարին, Խլաթ, Վրձէց և Բաջունայս՝ Երրորդ Հայք, Ախական,

բերանի (Ազիսվատ գաւ.) Արձէց մասին է խօսքը: Անունիս յունական մենք է՝ 'Ազօօսա. թէ թէ նոյնն է Արձակո, ուրարտացի Արամէի մայրաքաղաքը, որ 858 թ. Ն. Ք. Սաղմանասար թ. աւերեց:

1. Պատար է որոշել, որ գաւառի կամ քաղաքի կը վերաբերի ազատազած անունն. եթէ ուղղենք կետադրութիւնն և կարգանքը բախիս (Բախունիս) փոխանակ է երեսու կարելի լիներ՝ 'Առաջուրդ' (Ապահովանիք) գաւառի անուն այլայլու և այլանեղ ենթագրել:

2. بَسْرَجَان (Բասփորրագան) սակաւ ծանօթ է Արարացոց — թաօջօլուն (Strab.), թաօլազական (Const. Porphyrt.).

3. سَرَاجْ حِيرْ (Ախրաջ Տայր). անկասկած երկու անունն զատելու է միևնացից և ուղղելու՝ Ծիրակ և Տայր (Տայրց): Արտադրութիւն ընդունած է արարական բառի տեղ, որ մթաշանդ կը նշանակէ: Սրաջ թիւր. — մթաշանիւթագուեր: Հման. Սոգակուն (Ptol.).

* 4. حِيرْ زَان — կիրք = 'Յօհանու' (Jos. Fl.) — γιαν — Hyreani (Mela). Բագրեւանդ՝ Եազագծասղու (Ptol.)

5. أَزَان (Արրան). Ազուանից երկրի սովորական անունն է Արարացոց մաս, որ պահպանել է Արան-առա գաւառի անուն մէջ: Երկրիս սահմանները գծար է որոշել: որոնք միշտ ենթարկեած են եղել զանազան փոփոխութեանց. ըստ Խաստիսրի 'Ազուանք' կը տարածին բարել Արարից (Դերրենսից) միշտ թիվին եւ 'Կախիչնեան': Արար գետի մասը Հման. ու 'Ալբարու' (Jos. Fl.), 'Ազարիա' (Steph. Byz.), 'Ազիարու' (Strab.).

Աղուանք եւ Թիբլիս՝ Առաջին Հայք։ Զուրզան
եւ Աղուանք Խազարներ² կը տիրէին, իսկ Հայաս-
տանի միւս մասը՝ Յոյնք, որ կը կառավարէր
Արմանիական³ իշխանն։ Խազարներ սովորաբար

¹ تَقْلِيس (Տափլիս) հմման. Tīqilis (Theof. Byz. Fragmēta; Hist. Graec. Minores, Dindorff, 448). Հմման. Istaxri: «Թիբլիս Բարեւլ Արարից փոքր է. Նու ունի կուից պարիսպներ եւ երեք դուռ։ Այսուղ բաղանիքներ կան, որոնց ջուրը առանց կրակի տաք է»⁴

² Խորենացին (Աշխարհագր.) «Խազիրքո կը կոչէ ի թիւ և Սարմատոց ազգերի։ Թէ Երբ են գաղթած խա-
զարք Կասպից Ծովի հիւ սեռարեւ մասն ափերը, ուր նոցա-
կը գանի պատմութիւնն, եւ ինչ ցեղի կը պատկանէին
նորու ցարդ մուժն կը ման խնդիրներս։ Ibn Xaldun նոցա-
թուրանուն կը կոչէ։ Ըստ Մ. Խորենացու նոցա առաջին
արշաւանդն ի Հայու անդի ունեցաւ 193—213թ. Յ. Ք.
«Յաւուրս Վաշարցայ մերանենեալ ամրոխութիւնն ի հիւ-
սիսականացն, զիազդաց առեմ եւ զիազդաց, արտարս քան
զդուռն Շորայ ելանելու (Բ. կե)։ Օտարագրի մատենա-
դրերին սակայն Խազարք շատ առանել ուշ ձանօթ են.
Յափշանես Եփեսացին կը յիշէ նոցա 585թ. (Bar Hebr.)
Istaxri ի միջն ոյլոց հետեւեալն կը հազորդէ Խազարսց
մասին. «Խազարք մասն մե պականներ, քրիստոնեաններ, հրե-
աներ եւ կռապաշտներ են. Հրեայք նաև զազոյն են թւագ,
մասն մե պականներ եւ քրիստոնեացը մեծամասնութիւնն կը
կազմեն. սակայն թագաւորը եւ նորա գուռը Հրեաներ են.
Թիւշեան սամեկ մազովուրդը զանազան կոքեր կը պաշտէ։
Ուստաց մատենագրեր կը վկայեն, որ դեռ թ. դ. Ալաւու-
մանը ցեղերը, որոնց դաս եւ դնեւոր գետերի մատերքը
կ'առողեն։ Խազարներին հարկ կը վճարէին։

³ تَقْلِيس أَرْجَز Հայաստանի յունական թէ եմի սովորական
անունն է արարացց մաս։ Ibn el Athir (որ իւր բազմա-
հատոր պատմութեանն համար յանախ ամբողջ Հայուածներ
կը քաղէ թելազորից), կարեւ որ կը համարէ անունիս վերա-
բերմամբ հետեւեալ մեկնութիւնն տառ։ «Պատրիկ Արմենի
այն երկիրն է, որ առ լիժան Դիմի Արաւանի որդոց մեռութիւ-
նը, այսինքն՝ Մարտինայ, Աթառ, Աքասոր, Իկոնիոյ, եւ ա-
ղիք Կոստանդնիք (Բառարի) սահմանակից երկիրը»⁵

կ'արշաւէին Երկրի խորքերը, շատ անդամ հասնելով մինչեւ Դայնաւար¹ քաղաքը: Կաւառ², որդի Պերող արքայի, ուղարկեց նոցա դէմ իւր անւանի զօրապետներից մէկին 12.000 զօրքով, որ ասպատակեց Աղուանք եւ նւաճեց Արարու³ կոչւած գետից մինչեւ Ծարւան⁴: Կաւառ, միանալով նորս հետ, շինեց Աղուանից Երկրում Փայտակարան⁵ եւ Պարտաւ քաղաքները, վերջինս ամբողջ սահմանադլիսի համար, իսկ Կաբարոյ⁶ Խաղարների դէմ: Ծարւան Երկրի եւ Ալանաց Դրան⁷ մէջ շինեց

1 Անդամականութ:

2 Անուշիւ անի Հայրը, 488—531 թ.:

3 Անդամական (Արև) (Արրաւ) ձեւը մեր ժաղավրդական Արտա-ին կը մօտենայ: Բառիս առաջին վանկը արտացիր Ալ որոշիւ մասնիկին անդ են ընդունած, ինչպէս այլ գեղաքերում եւս: Յան. 'Առաջնէ.

4 Տես յԱւար. Ծարւանք անտամը ազդ կը յիշէ Խորենացին (Աշխարհագր.) ի Սարմատին: Յիշէ եւ Խտարի ի թիւ Կավկասի լեռնարձևակ ցեղերի:

5 الْجَنَان (Բայլաքան) անփափոխ արարացի մասնենարերի մօտ. մեր Փայտակարանն է:

6 حَبَلٌ — Խաբալա (Ptolem. Geogr.) Cabalaea (Plin. 6. 29). է Կապուղակ քաղաք Աղուանից, այժմ Ք-Ռէ գիւղ է (անս Հ. Ալիշանի Սեղազիր Հայոց Մեծացը, 91):

7 بَابُ الْأَنْ — Գաւան Ալանաց, Կամկասից դէպի Գորր Ասիս առանց երկու յայտնի լեռնացին անցքերից մէկն է, որոնք յանախ լինութած են զիանականներն. ի թիւ նոցա Kiepert (Lehrbuch der alten Geographie) եւ Մ. Էմին (Մ. Խոր. ռուս. թրգմ.), այժմ Պարեւ-կոչուած կիրճն է. միւս անցքը մեր հոց պահան Շորոյ կամ Գեղեցինութ: Ալանք առաջին անդամ հանգիւս են զայիս պատճեններն մէջ Ա. Պ. Պետրոսանին կոյսեր (70—79) ժամանակ, ինչպէս կ'առանդէ Joseph Flav. (B. VII, 7. 4): Այս ժամանակ Ալանք (օ՛ Ալարօ՛), որոնք ոկիւթացի ազդ են եւ Տանաիս (Դոն) գետի եւ Մէսու (Աղով) ծագակի մօտերքը կը ընակին, զիսաւ որւելով արշաւել

թրծած քարփիչից պատնեշ, գորանից յետոյ
360¹ քաղաք, որոնք ամսյացան, երբ Բարել
Արւար² շինեցաւ:

Մադացոց երկիրը եւ հեռագոյն եւս կողոպուտի համար,
բանակցեցին Հիւրկանաց (Արաց) թագաւորի հետ. որով-
հետեւ նա կիշխէր այն ճանապարհի վերայ, որ արքոյն
Աղեքաննոց հրամայեց երկաթէ դռներով փակել: Երբ նա
նոցա թոյլ աւեց անցանել, նոցա մեծ բազմութեամբ
յարձակեցան Մադացոց վերայ, որոնք բնու այդ բանը չեին
ապասում, եւ սկսեցին աւարի առնել բազմամարդ եւ ա-
մենայն առևակի խաչինքով առաս երկիրը, եւ ոչ ոք յան-
դգնեցաւ նոցա դիմադրել: Պակոր, երկրի թագաւորը, թող-
նելով ամէն ինչ, երկիւ դից ապաստանել էր առանց տեղեր-
ում, եւ հազիւ աջազեցաւ նորան 100 առաջանդով վերսահն գնել
նոցանից իւր գերւած կինը եւ հարճերը: Այսպէս հեշտին.
առանց դիմագրութեան հանդիպելու, Ալանք եկան մինչեւ
Հայաստան ամէն ինչ աւարի առնելով: Տրդատ՝ երկրի
թագաւորը՝ եւաւ նոցա ընդդէմ եւ ճակատեց նոցա հետ.
բայց քիւ էր Անապել, որ նա ինքն ողջանդամ զերի ընկնէր
նոյն մարտում. որովհետեւ (թշնամիներից) մէկը պարանով
բանեց նորան եւ դէսի իրան քարշէլ կը պատրաստէր.
երբ նա արտաք կարեց պարանը սրով եւ ժամանեկին ապրե-
ցաւ: Բայց Ալանք այս ճակատամարտից աւելի եւս շարա-
ցած ի կազմուտ մատնեցին երկիրը եւ բազմամթիւ զե-
րիներ աւարի հետ միասին տարան երկու տէրութիւններից
իրանց աշխարհը:

¹ Արեւելքան զրոյցներում ցարդ մեծ գեր կը խազան
Յ. 7, 12 եւ 360 թերը, որոնք սերտ կազ ունին երկնային
լուսատուների հնագոյն պաշտամանից հետ: Նոյն թերը
հանդէս են գալիս գեռ բարելական առասպելներում:

² Բառիս սովորական գրութիւններու ալաբան (Դիրանց
Դուռան), որ է մեր մատենագրերի պահանձու գործ կամ Հանաց,
Գուռան Խոշտաշ: Նոյնն է կերեւի ալաբ շուլ ալաբ, որ կը յեւէ Ին
Khordadbeh — Tzōtēs (Procop.), այժմ մատենագրերի գործ քաղաքն
է, որ ցարդ Դարդին գտաւառում Զարդէ կը կուլի: Արեւելքան
առանդութիւնը քաղաքի շնութիւններ կը վերադրեն խորով
Անոշիրանին (531—578). պարսպի Լոյնութիւնն թոյլ էր

Այս տեղերում նա բնակեցրեց ժողովուրդ։
որ նա կոչեց Շիռին, իսկ Ազուանից երկրում
շինեց Դրունք Ծոքքան¹, Քամիքարան² և Դրունք
Դուտանիայ³. բայց տեղի բնակիչք կը պնդեն, թէ
շինել է Դուդան բ. Ասադ բ. Խուզայմա։ Ծինեց
եւս Դուրդուքիյա⁴ (Քաղաքը), որ ունէր 12 գուռ

տալիս 20 հեծեալի կող առ կող միասին վերացով անցնել։
Խառախօրի Հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ Դեր-
բենդի մասին։ Եթոր-էլ Արևոր քաղաք է ծովի ափին, որ
իւր մէջ նաև ահանգիստ ունի. ծովի երկու կողմբց ամրար-
տակներ են շինեած, որոնց շնորհիւ նաև երի համար մուտքը
նեղ է. ծովու կը հանգիստանայ։ Մուտքը շղթայած է, այնպէս
որ առանց թողլուսութեան ոչ մի նաև չի կարող ներս մտնել
կամ դուրս գնալ. . . Քաղաքը ունի քարէ պարիսոպ, որ մին-
չեւ լեռները կը տարածեն. առ է միակ լեռնային ճանապարհ՝
անհաւատների աշխարհից դեպի մուլիթների երկրները։
որովհետեւ (միւս) անցքերը եւ ճանապարհները դժարին եւ-
անանց են։ Պարսպի մի մասը քիմի ձեւով կ'իջնի ծով։ որ-
պէս զի նաև երը ոյս պարիսպներին շատ մաս չկան։ Լեռան
վերայ (որի ստորեւ Բար-էլ Արևոր կը հանգչի) պէտք է
70ից աւելի լեզուներ խօսւին, այնպէս որ մի ցեղ միւսին չի
հասկանայ, լեզուների պէտպէսութեան պատճառով։

1 Տե՛ս որ է առաջակած Ծոքի քաղաքը։ Աւելի միշտ

է Ibn Hawkal-ի Տե՛ս Շահ Դրունքնեն։

2 Արքութիւնն այլապէս ոչ է. Andreas կ'ու զո՞ւ

ար է կեղծ խորենացու Ք-Նիշեան, մի ի 10 դաւառաց
Ազուանից, զատ ի Հայոց. Հման. Plin VI. 13: Flumen . . .
Cambyses in Caucasis ortus montibus. Dio Cassius 37.
III: Πρὸς τὸν Καμβύσης πορευόμενος. Այսիմ կամքէցի.
Սղնախօրի հարսա։

3 Երկիր Շոնդեացոց կամ Շաւադկը։

4 Հարցունակ — Դուրդուն. առև Brosset, Histoire
de la Géorgie I. 25—26. Կոյնն է Durdukka կամ Zurzukka
քաղաքն Ասնանացոց երկրում, որ 716 թ. գրաւեց Սարգսն։
Քաղաքս է կը յիշէ Ptolomaeus: Ζουρζուն.

եւ ամէն մի գուռը կը ներկայացընէր մի քարե ամրօց : Վրաց երկրում շինեց Սուդդարիլ քաղաքը , իբրեւ թշնամեաց զէմ զիտանց , եւ բնակեցրեց այնտեղ Սուդդի եւ Պարսկաստանի բնակիչներից : Յունաց սահմանագլխի վերայ շինեց Դուռան Պերողակաւատ , Դ. Լազիքայ¹ եւ Դ. Բարքայ ամրոցները , վերջինս Տրապիզոնի ծովի վերայ , Դ. Ալանաց եւ Դ. Սամսախի² , Գարդման³ եւ Շամշուրդէ⁴ ամրոցները :

Վ

Անուշիրվան նւաճեց Հայաստանի ամրողջ այն մասը , որ Յունաց ձեռքումն էր , ծաղկեցրեց եւ ամրացրեց Դուրին քաղաքը , շինեց Կախմաւան քաղաքը Վասպուրականում , եւս Վայոց ամրոցը . Սիսականում կանդնեցրեց բերդեր , ի թիւս որոց կիւար եւ Շահմազօնից⁵ , որտեղ բնակեցրեց քաջ եւ երեսաւոր մարզիկ Սիսականից :

¹ Մ. Խորենացի՝ Ա-Հ-Ե-: Ճաշաւ (Ptol. V, 10).

² سخنی = Սամցիկ (Սոմիկի) ի Վերս :

³ Ալ-ար :

⁴ Կամ Օրբէլի ի Տաշիր Գուշացաց :

⁵ نَجْوَانْ ، نَجْوَانْ وَ سَهْوَى (نَجْوَانْ) (Jakut).

Naṣonāra (Ptol.) Ընդէլ բառը շատ անդամ ըմբռնելու է վրահարաբէլ իմաստով :

« Բնագրում چիւս = Վայոց ձոր : Մուժի է անունիս ծաղումը . թէրեւս նոյնն է լեռան Ալան Մաննացոց երկրում . որոնեղ Սարգոն 710թ . յազթեց ուրարտացի Ռուսացին : Նորա մօմերը կը յիշին Տս-Ակ-կի-ա եւ Բալանեզիք , որոնք կը համապատասխանեն մեր Շահունկ եւ Բաղդ գառառներին Սիւնիքում : Յայտ է . որ Մաննացոց երկիրը իւր մէջ կ'առնէր մի ժամանեակ Սիւնեաց ոչխարհի մի մասը : (Հմատ . Մանի գ . Մանի Սակի . Օրբէլ .):

« Բնագրում սահիոն թէ իթէ կէտադրութիւնն սիսաւ է . ուզգելու է . սահեոն .

Անուշիրվան ապա գրեց Թիգրաց՝ թագաւորին բարեկամութեան եւ խաղաղութեան թուղթ, առելով որ երկուսի շահերը ընդհանուր են եւ խնդրելով նորա գտանք ձեռքը ձեռքը ի նշան մտերմութեան. առհասարակ սասատիկ ցանկութիւն յայտնեց նորա հետ ազգականանալ. նա իւր կողմից ուղարկեց թուրքի մօտ իւր սարկուհին, որին նա իւր գուստըն էր անւանում եւ որին որդեգրած էր նորա կանանցից մէկը. թուրքը եւս իւր գուստըն բերեց Անուշիրվանի մօտ, որ նորան ընդ առաջ էր եկած. Երկուսի պատահումը անզի ունեցաւ Բարըշլիյում, ² որտեղ մի քանի օր խնջոյք արին. մէկը միւսի հետ մտերմացաւ եւ ընկերացաւ. Անուշիրվան հրամայեց իւր մեծամեծներին և հաւատարիմներին գիշերը յարձակւել թուրքաց բանակի վերայ նորա մի ծայրից եւ այրել. նորա հրամանը կատարեցին. Առաւոտեան թուրքը գանգատեց գէպքի մասին Անուշիրվանին, որ պատասխանեց, թէ ոչ նա է

1 Հարկաւ Խաղարաց մասին է խօսքը. որոնք հնուց ի վեր շարունակ կը սպառնային Պարսից հիւսիսային սահմաններին. Ներկայ աւանդութիւնն, Նկարադըլով Դերբենդի Պահակի շինութիւնն, մանաւանդ կը շեշտէ նորա պատմական կարեւորութիւնն, որով միւնդամ յն արժանահաւատ կը հանդիսանայ. Ի բաց թողնելով Հարկաւ ինչ ինչ բանաւոտեղն ակրած մաներամասնութիւններ. Խաղարաց գոտն շինութիւնից յետոյ Պարսից թագաւորները ատիպա ած էին պայտեղ մեծ գումար պահապան զորք պահել. Կավիտան ենան ցեղերի արշաւածաց դիմոգրելու. համար. այսպէս. 466թ. Սարապուրը (Տարգայութ) գանելով ճորայ Պահակը (*Ιουρօւլιαց*) ամուր պաշտպանած. յետ դարձան եւ Ալանաց գունով մասն Հայաստան (Prisk. fr. 37). Քանի զեռ Յունաց ազգեցութիւնն զորեղ էր Փարք Շոխայում. Նոյն վերայ էր ծանրացած դրան վերայ հսկելու. հոգու. դրամով կամ զինու որներով:

2 ՀԱԼՀՅ. Jakut կը կարծէ Աղուանից երկրում.

Պարսից ոչ հետի:

Հրամայել այդ բանը անել եւ ոչ էլ գիտէ, թէ հրդեհողը նորա մարդկանցից մէկն է։ Մի քանի գիշերներ անցնելուց յետոյ Անուշիրվան հրամայեց կրկնել նոյն բանը, ինչպէս առաջ։ Նորա հրամանը կատարեցին։ Թուրքը սկսեց բարձրաձայն բարկանալ այս վարժունքի վերայ, մինչեւ որ Անուշիրվան մեղմացաւ նորա հետ, ներողութիւն ինզրեց եւ հանդստացրեց նորան։ Ապա նա հրամայեց կրակ նետել իւր բանակի ծայրում, որտեղ ոչինչ չկար, բաց ի չոր կանաչից եւ թփից շինուած խրճիթներից։ Երբ լուսացաւ, բարկացաւ Անուշիրվան թուրքի վերայ եւ ասաց՝ “քո մարդիկը քիչ էր մնացել որ բանակս բնաջինջ առնեին։ կասկածիդ համար գու ինձանից վրեժ առար։” Խոկնա երդւեցաւ թէ՛ ճշմարիտ ես շգիտեմ, ինչ է եղածի պատճառը։ Անուշիրվան ասաց՝ “Եղայր, մեր եւ քո զօրքը առում են մեր խաղաղութիւնը, որովհետեւ նոցա համար կտրւեցաւ այն աւարը, որ նոքա կը ստանային իրանց աւազակային յարձակումներում եւ մեր մէջ եղած կռիւներում։ Ես ապահով չեմ, որ նոքա այնպիսի բան կ'անեն, որ մեր որտերը կը պաղեցնեն, մինչդեռ մենք միմեանց սէր եւ յարգանք ենք ցոյց տւած։ Որպէս զի ազգական եւ մտերիմ լինելուց յետոյ՝ մենք (դարձեալ) շմջնամանանք, ամենալաւն է, որ գու ինձ թոյլ տաս մի պարիսպ իմ եւ քո մէջ շինել, նորա վերայ մի դուռ կը կախեմ։ այն ժամանակ ոչ իմ մարդիկը քո մօտ եւ ոչ քո մարդիկը ինձ մօտ ներս կը մտնին, բացի այն գէպքից, եթէ դու կամ ես թոյլ տանք։” Թուրքը համաձայնեցաւ եւ գնացիւր երկիրը, իսկ Անուշիրվան ձեռնարկեց պարսպի շինութեանն, որ շինեց ծովի կողմից ժայռից եւ արճիճից։ Նորա լայնութիւնն էր 300 կանգուն, իսկ բարձրութիւնն լեռների կատարին հաւասար։¹

¹ Հարկաւ ողարսպի մի մասը լեռան վերայ կը առածէր, ինչպէս կը նկարագրէ Կատախրի, ա. էջ 31։

Հրամայեց նաւերով քարեր բերել եւ նետել ծովի մէջ, եւ երբ քարերը ջրի մակերեւոյթին հաւասար բարձրացան, շինեց նոցայ վերայ պարփապը եւ Յ մզան ծովի միջով հեռու տարաւ: Շինութիւնը աւարտելուց յետոյ պարսպի մուտքին կախել տւեց երկաթէ գռներ եւ 100 մարդ հեծելազոր դրեց մուտքը պաշտպանելու համար. ապա այդաեղ կար Ք կար 5000 դորք պահելու. գռան վերայ շինեց մի աշտարակ: Երբ սորանից յետոյ խաքանին՝ ասացին, թէ Անուշիրվան քեզ խարեց, քեզ պսակեց ոչ իւր գռաներ հետ եւ իրան քեզանից պաշտպանեց, թուրքը ոչինչ շկարսղացաւ անել:

Անուշիրվան նշանակեց կառավարիչներ բառ կարգի կարգի եւ նոցանից ամէն մէկին աւեց մի մի գաւառ. շնորհ տիտղոսավ. նոցա թւում՝ Զաբարի խաքանին, որ Սարիրի տէրն էր եւ կը կոչւէր Ալահարզանշահ, եւս Ֆիլանի իշխանին, որ էր Ֆիլանշահ, Տարարսարան-շահին³, Լակիրի թագաւորին, որ կը կոչւէր Զարշանշահ, Մասքատի՝ որի տէրութիւնը թուլացած էր, իրանիին⁴, որ կը կոչւէր իրանշահ, Տարզանի՝ որ կը կոչւէր Տարզանշահ⁵.

1. Հմմա. ուռասց մատենոգրերի Կառու. ոյս տիտղոսը սամարարար էր կրկնի խազարաց թագաւորները:

2. Յակով: Սարիր մեծ տէրութիւն է Ալանաց եւ Բարել-Արև արի մէջ. զեսպի ոյս երկիրը միայն երկու ճախարարներու կոյց, մի խազարաց երկրից. մի ոք՝ Հայուսանեց, Աստ իւր գիրքի ոյց մեան Դաշուանին կը համապատասխանէ:

3. Istaxri: Տիրոցքան:

4. Marquart իրաւամբ կ'ու զզէ լիրաշահ (Eranšahr, էջ 119). իցէ նոյնա է Ա. Կազանկա- տուցու. Ե-ան-հէ:

5. Istaxri ոյս երկրները կը գնէ Դերբենդի մօտերքը: միմանց կից՝ Կասպից ծովի տիփին: Լէկզիներին կից, Մասքատ անունով երկիր կայ. այսա մեծ ազգ էն . . . Նոցանից վերեւ կը բնակին Մոլուկ, իսկ սարեւ՝ Մաշակ, Ակբայ եւ Մահան (ցեղերը): Անցա եւ Բարել-Արևարի մէջ դաշտում է Տիրոցքան երկիրը, որի բնակիչք աեղացիների մէջ

Բուղզի տիրոջը նշանակեց Բուղզի վերայ, Զիրի-
կիրանի տիրոջը իւր տէրութեան վերայ կառավա-
րէց, հաստատեց Զարալ - ալ - Քարաքի² իշխաններին
իրանց հողերի վերայ եւ խաղաղութիւն կապեց
նոցա հետ իրան հարկ տալու պայմանով:

Հայաստան Պարսից ձեռքումն էր մինչ
խղամի երեւալն . այն ժամանակ շատերը թողին
իրանց ամրոցները եւ քաղաքները Սիսականում ,
այնպէս որ Երկիրը ամայացաւ : Ապա Խազարք եւ
Յոյնք տիրեցին , ինչ որ առաջ նոյն ձեռքումն
էր . պատմում են , որ Յունաց հոգերը մի ժամա-
նակ ցիր - ցան էին եւ նոյն կառավարիչները ան-
կախ իշխանների դիրք բնողունած , որոցից մէկը՝
Արմաննեակոս՝ իրան թագաւոր հրատարակեց :
Նորա մահից յետ կառավարեց երկիրը նորա կինը ,
որ կը կրէր Քալի անունը . նա շինեց Կարին քաղաքը
եւ անւանեց Ք-լ-լ-լ-ն- , որ կը նշանակէ “ Քալիի
քարի գործ ” . դռներից մէկի վերայ նա հրամայեց
իրան նկարել : Արաբացիք Քալի անւանն արարա-
կան ձեւ արին եւ կ'առէին ” Ք-լ-լ-լ-լ-ն :

ԵՐԲ Օսման որդի Ավքանի Խալիֆ եղաւ.

Քաջակոյնք կը հանդիսանան : Ասելոյն Լէկղիները առաւել բազմաթիւ են եւ նոցոց աշխատհը աւ եղի ընդարձակ է : Կացանից վերև կը բանկին ցիլինդր, որոնց գաւառը մեծ է :

2. *Fam. fam. quae. nov. f. Sogni*

Հ Ապօպէանի լը ռաներին մասմէն (ի բաց թէ ողած պարունակէ էսպիտ աւ անգույթի նուն) առաջին անգամ կը յիշէ Հերոդոս՝ “Աստվածից ծափի արքեւ մատուած կրողմէց կը տարածե, ի կանգնու, որ ընդ արձակուած թէ ետմէր բալոր լը ռաներից մնած ոյննեւ բարձրութէ ետմէր բարձրագոյննեւ կը հանդիսանայ. (վերանձն կը բնակին բազմաթիւ եւ պէտական ցեղեր, որոնք գրեթէ բալորը անտառի մասերից կը կերպարին) (Լ. 203).

3. Σαντος αθεούσης και ηγεμονίας της ορθοδοξίας, ήταν διαπολιτικός πολιτικός, μεταξύ των αριστοκρατικών και λαϊκών στρατηγών της Ελλάδας, ο οποίος επέβαλε την ορθοδοξία ως το μόνο διανόμευτο θρησκεία της χώρας.

(644—656) նա գրեց Մոսւլիսյին, որ նորա կառավարիչն էր Ասորիքում, Միջազգետքում և Յունաց առհմանագլխում, հրամայելով Հայաստան ուղարկել Հարիբ ի ։ Մասլամա-ալ-Ֆիհը հրին այս Հարիբը քաջ զինուոր էր հանդիսացել Ասորիքի նուաճման և Յունաց գէմ արշաւանաց ժամանակ ։ այս բանի մասին գիտեր Օմար, յետոյ Օսմանն եւ ապա նորա փոխանորդը ։ ըստ այլոց՝ հակառակին՝ Օսմանն գրեց Հարիբին անձամբ, հրամայելով արշաւել Հայաստանի վերայ, եւ այս տեղեկութիւնն աւելի ճիշդ է ։ Հարիբ արշաւեց 16.000, բառ այլոց՝ 18.000 զօքքով Ասորիքի եւ Միջազգետքի բնակիչներից, եկաւ կարին եւ պաշտեց քաղաքը ։ Բնակիչնք գուրս ելան բնդդէմ, պատերազմեցին նորա հետ, բայց սահիպւած եղան քաղաքում պաշտպանուել եւ խնդրել իրանց խնայել այն պայմանով, որ հեռանան քաղաքից, (իսկ մեացողները) մարդագլուխ տուրք վճարեն։ Կացանից շատերը թօղին դնացին եւ բնակեցան Յունաց հողի վերայ ։ Հարիբ մեաց այստեղ իւրայիններով մի ամիս։

Ապա լուր ստացաւ Հարիբ, որ պատրիկ¹ Արմենակ մեծ զօքք է գումարել մուղիմների գէմ եւ նորա հետ մեացել են օգնելու համար Ալանք, Ափիսաղք եւ Խազարներից Ասմանդարք² Հարիբ

¹ Patricius, πατρίκιος ανθυπολεύκρατος էրում էին նույն Յունաց հապտակ քրիստոնեաց իշխաններն Փոքր եւ Առաջայում ։ Ազանում էր իշխան, կամ՝ առար, իմաստով կը գործած էր. (Հ. Տիմ. Թ. Արքանենի Պատրիկ Գիւնունի, Պատրիկ Աշակես ացի, Աշար, Պատրիկ Ուլուսունի)։ Աշ. Ինչու ան մասին առև. Էջ 28։

² Եթե ի. Խազարները կը բաժանեէին զանազան ցեղերի, որոնցից մէկը Ասմանդարք էին։ Istaxri խազարց երկրում, Խոփիլ (Հաշուարիսունի) եւ Բարեկը-Արքարի մէջ Ասմանդարք անունով մի քաղաք կայ. Ibn el Athir կ'այէ Ափիսաղքներին (յա՞ն³!) զեռ Անո շերտանի ժամանակ. Անդիսացք, Բաննարք, Բալաննարք եւ Ալանք համաձայնեցան միմանց հետ արշաւել Անո շերտանի երկրի վերայ եւ ու-

գրեց Օսմանին, խնդրելով նորանից օդնութիւն, գրեց նաև Մռաւիային, որ իրան ուղարկէ Ասորիքի եւ Միջազետքի ժողովրդից նոցա, որոնք կը կամենան կրօնի եւ աւարի համար կռւել: Մռաւիան ուղարկեց նորան 1000 մարդ, որ Հարիր բնակեցրեց Կարինում, բաժանեց նոցա հողեր եւ նշանակեց նոցա այնտեղ պահապան: Խակ Օսման, ստանալով Հարիրի գիրը, գրեց Սայիդ ի. Ալասի ի. Սայիդ ի. Ալասի ի. Ռևայաին, որ նորա կառավարիչն էր Կուֆայում, հրամայելով Հարիրին օդնութեան ուղարկել նորա մօտ եղած զօրքով Սալման ի. Ռարիյա ալ-Բահլիին, որ նմանապէս Սալման ալ-Խայլի (Հեծեւ) կը կոչւէր եւ ինքն ընտիր եւ քաջ զինուր էր. Նա գնաց Հարիրի մօտ իւր 16.000 բարելական զօրքով: Մինչ այս, մինչ այն եկան եւ Յոյները եւ բանակեցան Եփրատի մօտ, որովհետեւ Հարիրի համար օդնական գունդը ուշացաւ, մուսլիմները գիշերով յարձակեցան թշնամեաց վերայ, որի մասնեցին եւ կոտորեցին նոցանից շատերին: Նոյն գիշեր Արդալլահի մայրը, որ Եղիդ ալ-Խալիֆ դուստրն էր, հարցրեց իւր ամուսին Հարիրին՝ որտեղ է (մեր) տեսութեան տեղը, նա պատասխանեց՝ ‘անհաւատի’ վրանում կամ գրախոռում: Եւ երբ վերադարձաւ իւր վրանը, դաւա այնտեղ իւր կնոջը: Սալման ժամանեց, երբ մուսլիմները իրանց գործը վերջացրել էին թշնամիների հետ. Քարելացիք իրանց մաս

գեւորւեցան դէպի Հայուսառան՝ նորա բնակիչներին կողոպտելու: Դիտաւ որութեամբ: Ճանապարհի հեշտութեան եւ Պարսից թագուսորի դանդաղութեան շնորհի: Նոցա աշողեցաւ մուսնել նորա երկիրը: Նա ու զարկեց նոցա գէմ դորը, որ ճակատեց նոցա հետ եւ որի մասնեց նոցա ապրեցան 10.000 մարդ, որոնց Անուշիրզան բնակեցրեց Աւրաքառականում:

1 Յունաց կայսեր սովորական մականունն է Արարաց մաս:

պահանջեցին աւարից, նորա հրաժարեցին տալ. բանք այնուեղ հասաւ, որ Հարիր եւ Սալման խօսքերով միմեւածց անպատճեցին, իսկ Սալմանին մուսլիմներից ոմանք սպառնացին սպանել. (այդ առթիւ) բանաստեղծը ասաց՝

Եթէ սպանեք Սալմանին, մենք կը սպանենք ձեր Հարիրին,

Եւ եթէ դնաք իրն Աֆֆանի մօտ,¹ կը գնանք եւ մենք:²

Հարիր զրեց Օսմանին դէպքի մասին, եւ նա հրամայեց նորան աւարից հարուստ բաժին տալ Ասորիներին, իսկ Սալմանին՝ որ նու ասպատակ առնել Աշուանից երկիրը: Ոմանք կը պատմեն, որ Սալման ի. Ռարիյա արշաւեց Հայաստանի վերայ Օսմանի ամրապետութեան ժամանակ, գերեց (ժողովուրդը), աւարի առաւ եւ եկաւ Ալվալիդ ի. Օքբայի մօտ. բայտ աւանդութեան Մոսուլի բնակիչների, այս բանք տեղի ունեցաւ 25 թուականին:³ Այստեղ նորան հասաւ Օսմանի նամակը թէ՝ ինչպէս Մոսուլիան նորան կը հաղորդէ՝ Յոյնք կը սպառնան մուսլիմներին ահազին բազմութեամբ, ինդրած էր նորան օգնութեան ուղարկել 18.000 զօրք: Օսման ուղարկեց այս գունդը Սալման ի. Ռարիյա ալ-Բահրիի հրամանատարութեան

1 Ասմբաքետը պյուղիսի դէպքերում գլխաւոր զատաւորը կը հանդիսանար:

2 Արարացի բանաստեղծները, որոնց թւում՝ հազարին աշեն նաև կանոնից, առվորարար կ'ու զեկցէին պատերազմողներին արշաւ անքի ժամանակ եւ իրանց երգերով կը խրախուսէին նոցաւ:

3 Արքման 647 թ.-ինչպէս զետ. կը աեւանենք. այս արշաւանքն առաջինը չէր. այլ երկրորդն էր Իյադ ի. Ղանմից յետոյ: Մինչ առաջին առանցութիւնն Հարիր ի. Մասլամուրին կը վերապրէ Հայաստանի Նուանութե, երկրորդն՝ հակառակն՝ Սալման ի. Ռարիյային. ինքն հեղինակը սակայն նկատում է առողեւ, որ Հարիրի մասին աեզեկութիւնն առթանահաւատ կը հանդիսանայ:

Ներքոյ, իսկ Մոռաւիան՝ Հարիբ ի. Մասլամայ ալ-Գիհին նոյնչափ զօրքով։ Կորա երկուսով առան ամրոցներ, գերեցին բնակիչներին, աշխատելով խլել միմեանցից հրամանատարի իրաւունքը. Ասորիք Սալմանի մասին կը հոգային. բանաստեղծը ասաց՝ եթէ դուք սպանեք եւ այլն։ Բայց առաջին աւանդութիւնն աւելի ճիշտ է, որի մասին ինձ պատմել են կարինի ծերերից շատերը, նմանապէս ինձ գրած է դորա մասին քաղաքի դատաւոր Ատտափի ի. Սուֆիան Աբու Ասրաղ։

Ինձ պատմել է Մահմեդ ի. Ասդ, որ լսած էր ալ-Աշկիզից, իսկ առ՝ Աբդուլ Համիդ ի. Զաֆարից եւ առ՝ իւր Հօրից, թէ Հարիբ ի. Մասլամայ պաշարեց Դուինին եւ մնաց այստեղ, մինչեւ պատահեցաւ նորան Մատրիան Յոյնը¹. Նա յարձակեցաւ նորա վերայ գիշերը, սպանեց նորան եւ աւարի առաւ նորա բանակը։ Դորանից յետոյ Սալման շտապեց Հարիբի մօտ եւ պատահեցաւ նորան կարինում, ինչպէս ճիշդ տեղեկութիւն ունին պատմողները։

Ինձ աւանդել են Մահմեդ ի. Քիշը եւ իրն Ամրզ Քալիան կարինի ծերերի զրաւցելով՝ թէ կարին իւր նւաճման օրից մնացել էր անտոիկ իւր բնակիչներով հանդերձ, մինչեւ եկաւ անհաւատը

¹ Արարացի թ. դարի յայտնի պատմագիրը։

² Հստ Աներեսոսի այս մարտը տեղի ունեցաւ ոչ թէ Դուինում, այլ Կամինաւանում, առելոցն յոյն զօրապետը փախուստամբ ապրեցաւ։ Եւ զնաց Մատրիան փախուստական, եւ շաղաւ անկառ ի Անիսու Խակ զաւրն Խամայէլի դարձաւ ի նոցանէ եւ պաշարեց զկարնոյ քաղաքը (Պ. Լ.): Theophanes իր զանդացին Հարիբի այս արշաւանքը կը վերադրէ 645 թ. անցյն (645) թ. Արարացոց զօրավար Հարիբ արշաւեց ի Հայու, ի փախուստ դարձրեց մինչեւ կոպկասի շահները Հռովմացոց զորավար Մատրիանին, որ նորա դէմ էր ելած, եւ աւարի առաւ երկերը։ (Chronographia, Ed. Classenii, I, 528).

133 թ., պաշարեց Մալաթիա, աւերեցնորա պարհապները եւ նորանում ապրող մաւոյի մներին փոխադրեց Միջազգեարք: Խջեւանելով Հ-Շ Հ-Շ-Շ-Շ, ¹ նա առաջ ուղարկեց Հայ կուսանին, որ եկաւ եւ պաշարեց կարին քաղաքը մի քանի օր. այսուեղ կը կառավարէր Արտ. կարիմա: Հայ բնակիչներից երկու եղբայր, ծակելով պարիսպը, զնացին Կուսանի մօտ եւ նորան քաղաք մասրին: Կուսան աիրեց քաղաքին, սպանեց, գերեց, աւերեց եւ տարաւ ինչ որ կարողացաւ յափշտակել անհաւատի համար, իսկ գերեալիներին բաժանեց իւր բնկերների մէջ:

ԱԼ-Վակիդին պատմում է, որ ալ-Մանսուր² 139 թ. գնեց գերութիւնից կարինի բնակիչներից նոցա, որոնք դեռ կենդանի եին, շինեց քաղաքը, ծաղկեցրեց, վերստին բնակեցրեց այնտեղ գերութիւնից գնածներին եւ բերել աւեց Միջազգեարքից եւ ոյլ տեղերից քաղաքի համար մի գունդ զօրը: Երբ Յունաց կայորը արշաւեց կարինի վերայ ալ-Մուտասիմ Բիլլահի ամիրապետութեան ժամանակ,³ նա սկսեց քաղաքի պարիսպը քարկածել, այնպէս որ քիչ էր մնացել նա փուլ գար. ալ-Մուտասիմ ծախսեց նորան ամբացնելու համար 500.000 դրամ:

Կարին առնելուց յետոյ Հարիր գնաց բանակեցաւ Մարրալաւմ.⁴ այսուեղ նորս մօտ եկաւ

¹ Հացեաց դրախտ ի Տարան:

² Արտ. Քափոր ալ-Մանսուր ամիրապետը (754-775):

³ 833-842. Օդաւելով Խաչիկութեան թռչութիւնից սորու որերով Յաները յարձակադական դիրք բանեցին Փոքր Ասիայում. վերոյիշեալ դեպքը պէտք է տեղի ունեցած լինի 838 թ.

⁴ Արևածար, Արևածար ու զգելու և Արաւածար Ուրբատին ի Տարան բներան:

Խորաթի պատրիկը Խյադ ի. Ղանմի թղթով.¹ այս
Խյադ ի. Ղանմ ապահովել էր նորա անձն, գոյքն
եւ երկիրն եւ խաղաղութիւն կապել նորա հետ՝
իրան հարկ տալու պայմանով, որ եւ հաստատեց
Հարիր։ Կա իւր բանակն գրած էր Հարակի² եւ
Վարագայ դաշտի մէջ, երբ նորա մօտ եկաւ Խվաթի
տէրը ինչ ինչ ընծաներով, բայց Հարիր շընդու-
նեց նորանից եւ բանակեցաւ Խվաթում։ Այստեղց
նա գնաց Սիփան (?)³, որտեղ նորան պատահեցաւ
Մոկսի տէրը (այս գաւառը կը պատկանէր Վաս-
պուրականին)։ Հարիր խաղաղութիւն կապեց նորա
հետ նորա հողերը գրաւելու պայմանով, մարդ-
դրեց նորա հետ եւ զրեց խաղաղութեան եւ
պաշտպանութեան թուղթ։ Ապա մարդ ուղարկեց
Արձէշ եւ Բաջունայիս, նւաճեց այս քաղաքները
եւ ժողովրդից զիխահարկ առաւ, իսկ մեծամեծ-
ներին, որոնք նորա մօտ եկան, խաղաղու-
թիւն պարգեւեց հարկ տալու պայմանով։
Ինչ կը վերաբերի Տիրիխի ծովակին, նա նորան

¹ Նախ բան Հայուսանի վերայ արշաւելն՝ ըստ
Ռելազօրք՝ Արարացիք Խյադ ի. Ղանմի առաջնորդութեամբ
19 թ. մասն Միջագետք եւ նուանեցին Ամիդ, Կիրկերու։
Մերին, Մարդին, Աղձնիք, Բիթլիս եւ Խլամի։ Արքեն
գեռ 640 թ. Աղձնիք եւ Տուրուքերանի մի մասը կը գտան-
էին Արարացոց իշխանութեան տակ։ Այս հետաքրքրական
հաստածը, որ կրում է Հայուսանի վերաբերեան վերա-
գիրը, առաջ կը բերենք իւր տեղում։

² Թուի թէ Հարը եւ Ապրամնունիք գաւառների
մասին է խոսքը։ Հարիր այսպիսամ կարինից շարունակ դէպի
հարաւ կ'աղեւորեւը. Մարդացից դարձվ Հարը եւ ապա
Խլամի։ Նա Արձէշի վերայով ու զգակի դիմած է դուին։

³ Վետաղը թէ աղջելու է չը թէ. այսովէս կը
կոչ էր Առաջ Կրոգը. որ գեռ Շնում հաշակած էր իւր
Դաստի (Tάσιχα) աղելիներով։

թողեց ազատ, եւ ծավը մնաց բնդհանուրի սեպհականութիւն, մինչեւ Միջագետքի եւ Հայաստանի վերայ կառավարեց Մահմեդի. Մըրվանի. Հակամ, որ իւրացրեց ձկնորսութեան իրաւունքը եւ կ'ծախէր այդ արտօնութիւնն, աշխատելով ծովակը շահագործել: Յետոյ նա Մըրվանի. Մահմեդի սեպհականութիւնն եղաւ եւ մնաց նորա ձեռքի տակ:

Այնտեղից Հարիբ եկաւ Արտաշատ,¹ որ է ալ-Քիրմիզ,² անցաւ Ակրագ³ գետը եւ բանակեցաւ Դուինի գաշտում, ուղարկելով հեծելազորը քաղաքի վերայ. Ինքն եւս կամաց կամաց առաջ գնաց, մինչեւ որ քաղաքի գռների առջեւ կանգ առաւ: Բնակիչնք կը պաշտպանէին, նետահարելով նորա զօրքը. Հարիբ գնել տւեց Հանչըլի⁴ եւ սկսեց քարկօծել նոցա, մինչեւ որ նորա իրնդրեցին խնայել նոցա եւ պարգեւել խաղաղութիւն: Հարիբ համաձայնեցաւ:

Իսկ հեծելագունդը գնաց իջաւ Գառնի (⁵),⁵ Հասաւ մինչեւ Աշուշ,⁶ Զադ Լուջում (^{Ա-Զ-Ի-Շ-Լ}), կո⁷ լեռան եւ Աշ-Տ-Շ Հ-Ջ-Շ եւնեամեց Դուինի

1 Բնակրի կետադրութիւն՝ Արծաթ⁸ (Աշուշաւ)

անորոշման սխալ է. կարդալու Արծաթ (Արտաշատ):

2 Հմմա. Istaxri: Դուինում Քիրկո են պատրաստում, որ կարմիր ներկ է բրդի համար. ևս լսած եմ. որ դա մի որդի անուն է: Խորեն. Աշխարհագրութիւն. Ալ-Նի Ալյուրտուս որդեւ արժանաց սիզոյ առ ի զարդ կարմրութեան դռնոյ: Պ. Փարագեցի՝ “յԱլյուրտասայ ծնեալ որդուն ի զարդ կարմրատեսիլ գունաց”:

3 Քըրելէ գետ, որ է Մեծամօր:

4 Քար նետող մերենոյ: [Ճելի է:]

5 Բնակրի Զ-Վ-Ն-Է (Ջ-Ն-Ի) Հնիքերցումը կատա-

6 Աշուշ Դաւաց յԱլյուրտաս:

7 Ըսթեցում միանգամայն անորոշ է. իցէ կարդալու է Կունից — Կոսովը: Plin.: Կոտայ.

բոլոր քաղաքները։ Ապա Հարիր ուղարկեց նորան Շիրակ, Տայք եւ Բագրեւանդ։ այս երկրների պատրիկը եկաւ նորա մօտ, եւ Հարիր խաղաղութիւն կապեց նորա հետ այն պայմանով, որ բնակիչք նորան հարկ վճարեն, մաւզիմների հետ բարեկամաբար վարեն, հիւրընկալեն եւ օգնեն իրանց թշնամիների դէմ։ Ա հաւասիկ Դուինի բնակիչներին գրած խաղաղութեան թռողը՝

“Յանուն Աստուծոյ ամենաբարւոյ եւ զթաւէրի. այս է Հարիր ի. Մասլամայի թռուղթը առ Դուինի քրիստոնեայ, կրակապաշտ եւ հրեայ բնակիչները, որոնք ներկայ են կամ բացակայ, թէ ես երաշխաւորում եմ ձեր կեանքը, դոյըք, եկեղեցիները, առեւտուրն, քաղաքի պարիսպը, եղէք ապահով։ մենք պարտաւոր ենք մեր պարտքը ձեր վերաբերմամբ կատարել, մինչեւ որ գուք ձերը մեր վերաբերմամբ կատարէք եւ վճարէք զլխահարկ եւ տուրք՝ ականատես է Աստուծ եւ նա բաւական է իրբեւ ականատես։ (թռողթո) կնիքով հաստատեց Հարիր ի. Մասլամայ։”

Հարիր ապա եկաւ Նախիջեւան եւ նւաճեց քաղաքը նոյն խաղաղութեան պայմանով, ինչպէս եւ Դուին Նորա մօտ շտապեց Աստուծականի իշխանը¹ եւ խաղաղութիւն կապեց նորա հետ այն պայմանով, որ իւր ամբողջ երկրից եւ Հաց . . . եւ Ավարիստոյ (?)² (գաւառներից) նորան տարեկան հարկ վճարէ։

Այնուղից Հարիր եկաւ Սիսական, պատերազմեցաւ բնակիչների հետ, յաղթեց նոցա եւ տիրեց Ասյոց (ձորին)։ Հաշտութիւն շնորհելով

¹ Արարացի մատենագրիք Հայաստիկո բառը սովորաբար կը գործածեն նոյն իմաստով, որով մեր մատենագրիք առէն կամ սիսական բառերը։

² Անուշներիս Ծննդերցու մը միանդ ամայն ազատ աղած է։

երկրի ամբոցաբնակիչներին՝ նորան հարկ տալու հիման վերայ, նու ապա մեկնեցաւ Ալիքը:

Ինձ պատմել է Բարձրակ Ի. Արդաւահն՝¹ Դումինի բնակիչներից ծերագոյնը, թէ Հարիբ Ի. Մասլամայ իւրայիններով գնաց Ալիքը: Հանելով Զատ - ալ - Լուջում տեղը, նոքա արձակեցին իրանց անասունները արածելու, իսկ նոցա անձերը մի տեղ ժողովեցին: Այն ժամանակ նոցա վերայ եկան բարբարսներ եւ ստիպեցին նոցա շոտապով հեռանալ արօտատեղից. կռւի բանւելով հետները, նոքա արտաքսեցին նոցա այնտեղից եւ թափեցին նոցանից սանձերը, իսկ անասուններից՝ որը կարողացան: Բայց մուսլիմները, յետ զառնալով առ երեսս փախուստից, կոտորեցին նոցա եւ հանեցին նոցանից այն, ինչ որ նոքա խլած էին, ուստի տեղն կոչուեցաւ Առաջաւու:

Պատմում են, որ Հարիբի մատ եկաւ Ալիք իշխանի եւ բնակիչների կողմից հրեշտակ, բերելով նորան նոցա պատգամաւորութեան գիրը եւ խնդրելով նորանից՝ պարզեւել նոցա խաղաղութեան եւ հովանաւորութեան թուղթը: Հարիբ գրեց նոցա հետեւեալն.

«Զեր Նուքլայ (Նիկողայոս) հրեշտակը եկաւ ինձ եւ ինձ հետ եղող հաւատացեալների մատ եւ յայտնեց ձեր կողմից, թէ մեզ ստեղծել է Աստևած իրրեւ մի ազնիւ եւ գերազանց ազգ. ահա այսպէս է կամեցել Աստևած եւ թող մեծապէս փառաւորի նա, թող նորա օրհնութիւնն լինի Մահմեդի՝ նորա մարգարեկ՝ վերայ, որիննա բնոտրել է իւր արարածների մէջ, եւ խաղաղութիւն նորա հետ: Դուք ասում եք, որ ձեզ հաճելի է մեր խաղաղութիւնն. եռ գնահատեցի ձեր բնծան իրրեւ ձեր զլիսահարկի մասն, եւ գրեցի ձեզ հովանաւու-

¹ Նոյն աւանդողն է, որին կը յիշէ մեր հեղինակը հաստածիս սկզբում:

բաթեան թուղթ, որի մէջ դրած եւ մէ պայման. ևթէ ընդունեք այդ պայմանն եւ նորան հաւատարիմ լու, ապա թէ ոչ՝ մասլիները պատերազմ կը յայտարարեն յանուն վառեց եւ նորամարգարէի, եւ թող խաղաղութիւն լինինոց հետ, որոնք ճշմարտութեան ճանապարհով են դնում:

Ասրանից յետոյ Հարիբ իջաւ Տփղիս եւ զբեց
խաղաղութեան թռողին նորա ընակիցներին:

* Յանուն ամենագույթ եւ ամենաողը մած
Աստուծոյ - այս է Հարիր ի. Մասլամայի թռչղթը
առ Տփղիսի Մանդղիս (գառառի)¹ Զուրբան-ալ-Քիր-
միզ² (Երկրի), բնակիչները՝ նոցա կեանքի, առեւ-
տրի, վանքերի, պաշտամունքի եւ կրօնի ապահո-
վութեան վերաբերմամբ, (շնորհած նոցա) այն պայ-
մանով, որ նոցա ճանաչեն իրանց հպատակ³ եւ ա-
մէն տուն տարեկան մի դինար⁴ գլխահարկ վճարե:
Դուք իրաւունք չունիք՝ գլխահարկը թեթև ացնե-

Եւ Ամերիկաց գոր (կեղծ լորդեն), ոյդը
էլ Ամերիկաց զիշ-ը (Տիգրանիկոս Հարուստ, հիշ) հաշված
է իւր պայման, ծառերով:

2 Brosset, *Հիմքելով որ ապրելունց է առաջնական հեղինակութեան մեջ առաջ է առաջ գուշակութեան օրուն է:* Կը համաձայն առաջնական շաբան՝ *'Agnozizη' — Աստվածաբարձ առաջ կետ* (Bulletin scientifique de St. Petersburg 1839, V, 50): Մեզ ակացիա կը մայ առաջ է, թէ որ ձեռազրից է առաջ առաջապես թարդմանից, որի ընթերցումը կատար կը պարագանել:

على اقرار بصغر الجزية وهم ينكرون على اقرار بالصغر والجزية

* Արտաքիր Մահմեդից առաջ եւ ոյ միջն նորակից յիշ շահելու իրանց անուշական առանձը. այլ կը գործածէիր բի զանցական եւ պարսկից գրամմեր՝ dinâra (—Է) — մաս. 12 թրոնել եւ dirhem (ծօղախ) — մաս. սուսանական

լւ համար՝ մի քանի տեսք միմեանց կցել, եւ մենք
շունինք իրաւունք նոցա բաժանել՝ աւելի մեծ
զիսահարկ ուստանալու համար։ Դուք մեզ էք նուիրելու
ձեր մտերմութիւնն եւ ոյժը Աստուծոյ եւ նորա մար-
գարեի թշնամիների դէմ, քանի դուք կարող էք։
Դուք պարտաւոր էք հիւրբնկալել գիշերը կարիք
ունեցող մուլիմին, հիւրասիրելով նորան այն կե-
րակրից, որ մեզանում քրիստոնեայք եւ հրեաներ
օրինաւոր կը համարեն։ Խակ եթէ ուղղափառ-
ներից մէկը ստիպւած լինի ճանապարհին ձեզ մօտ
իջնանելու, այն ժամանակ դուք պարտաւոր էք
նորան ասնել մօտակայ մուլիմիների մօտ, բացի
այս դէպքից, եթէ ձեզ հնարաւոր չլինի նոցա մօտ
հասանել։ Եթէ դուք (մեր կրօնին) դառնաք եւ ա-
զօժք կատարէք՝ դուք մեր եղայրներն էք կրօնի մէջ,
սպա թէ ոչ՝ ձեր վերայ կը ծանրանայ զիսահարկ։
Եւ եթէ մուլիմիներին որ եւ է գործ ստիպելու լինի
ձեզանից հեռանալ եւ ձեր թշնամիք ձեզ նեղեն,
այս դէպքում մուլիմիները պատասխանառու չեն,
եւ այս պայմանն չէ հակասում ձեր գաշնագրու-
թեանն։ Ահաւասիկ ձեր իրաւունքը եւ ձեր պար-
տաւորութիւնները, (որոց) վկայ է Աստած եւ
նորա հրեշտակները եւ բաւական է Աստած իրեւ
վկայ։

**Սորա պատմէն գրեց Տփղիսի բնակիչներին
Զարրահ Ի. Աբդալլահ ալ-Հակամի՝**

։ Աներջին որոյ մասն ամրազ դաշնագրու թեան զարա-
թիւնն էը խախտէ։

։ Գէտք է զարմանալ որոքացի զրապետի հմտու-
թեանն, որով նա նախապէս ազգահավատը է մահմեդական
զազիթ ականաների կրօնը եւ կեանքը հեռաւուր երկրում։ Մինչ-
դեռ գրանի բնակիչներից նա պահանջում է զիսահարկ եւ
առուրը ի նշան լիովին հպատակու թեան, իւր իշխանու թիւնն
ծայրագոյն հիւսիսում ազգահավելու համար նա բարձր էը
զնահատէ՝ գրաւել լեռնարնակ ժաղացրդի ամուրման թիւնն
եւ ոյժը խլամի թշնամիների դէմ, բաւ ականանալով միոյն
չշնին զիսահարկով։

² Յանուն ամենազութ եւ ամենաողըրմած Աստուծոյ. այս է Զարրահ ի. Արդարահի թուղթը առ. Տփղիսի, Մանգլիս գաւառի, Զուրբաննահանգի բնակիչները, թէ նորա ինձ բերեցին Հարիբ ի. Մասրամայի ապահովութեան թուղթը, նոցա շնորհած այն պայմանով, որ նորա ընդունեն շնչին զլիահարկ տալ, եւ թէ նա նոցա հետ խաղաղութիւն կապեց նոցա հողերի, հաղողի թփերի եւ Հրազդացների, որոնք ---ը եւ ---ը կը կոչւին, Մանգլիսի գաւառում, եւս կողովիս¹ գաւառի, Զուրբան երկրի թամբ եւ Գիղունայ (վիճակների) ապահովութեան հիման վերայ, այն պայմանով, որ նորա այս Հրազդացներից եւ հաղողի թփերից տարեկան 100 դրամ վճարեն առանց կրկնութեան: Ես կատարեցի նոցա պարգևած ապահովութեան եւ խաղաղութեան (պայմանը) եւ հրամայեցի հաղորդել նոցա գորա մասին եւ ում թուղթս կարդացի, նա չպէսք է այս զանց առնի: Աստուծով գրեցաւ.²

Հարիբ նւաճեց Զաւախը³, Կաօֆարնիս⁴ (?), Կիսալ, Խունան⁵, Ամցցիսէ, Գորդման, Կուսասափի^(?). Ըստ շեղը, Բազարետ⁶ խաղաղութեամբ, ինայելով բնակիչների արիւնը եւ հաստատելով

¹ Σεσσιον. Const. Porphyr. de Cerim., 687: Κοκοβίτ. Կասկածելի է այս աշխարհապետական մաներամասնութիւնն, Վրաց սահմաններից միանգամայն դուրս լինելով:

² Այլ ընթերցում է տալիս Cod. Mus. Britt. Rich. 7496, f. 81: جراغ خ، որ հաւաքորէն ուղղելու է چواخ (Քաւախ):

³ كشتر نس كشتر نس է ـ Քուստի Քուստի:

⁴ Istanti բուհուն կան անէ Տփղիսի մատերը, Ծաւքորից 21 փարսիս հեռի:

⁵ Brosset: L'histoire de la Géorgie I, p. 45. Bazalet.

նոցա աղօթատեղերը եւ պատերը այն պայմանավ, որ նոքա տուրը եւ զլխահարկ վճարեն: Կմանապէս խաղաղութիւն կապեց կալարջետի¹, Զարիալետի², Խախեթի³, Խուխեթի⁴, Արտահանի⁵ եւ Ալանացոց դրան, որպէս եւ Շահարաց⁶ եւ Շռագէից բնակիչների հետ հարկ տալու պայմանով:

Նոյնք պատմում են, որ Սալման ի. Ռարիայ Ալբանի⁷ Օսմանի հրամանին համաձայն, գնաց Ազուանք եւ նւաճեց Փայտակարան քաղաքը խաղաղութեամբ, բնակիչների արիւնը, դպրը եւ պատերը խնայելու պայմանով, իսկ նոքա պարտաւորեցան զլխահարկ եւ տուրը վճարել: Ապա Սալման եկաւ Պարտաւ եւ բանակեցաւ Զուրզուր՝ գետի ափին, որ քաղաքից սակաւ մզնեով հեռու էր. փակելով բնակիչներին դռների յետեւը, նա մի քանի օրւայ ընթացքում դրաւեց քաղաքը.

¹ Կալարիք. Աղօթատեղ. Կաղարիք: Հաւանարէն նոյննէ Կալազէնրի (Ptol. V, 13).

² Թրալեթ. Brosset I, p. 248, 285, 307. Thrialet. Plinius VI, 10: Thriare.

³ Առինեթ:

⁴ Անշէ Խորենացու՝ քու զիդ (?) Brosset I, p. 315, 349: Kukheth.

⁵ Բնագրի أرْ جَلْ (Արտահան) Ընթերցումը սիստեմ.

أرْ جَان

⁶ Շռագարք և Սարմատիա (կ. Խորենացի): — Σαρα-

ραῖοι (Ptol.)

⁷ Երկու արարացի զօրապետները զործում էին մի-
մանցից անկախ. մինչ Հարիր Գունի առամբց յետոյ շա-
րունակ զեսի հետ կ'ուղիւրուէր. Սալման պրազած էր
Ազուանից երկիրը նուանելով. ապա մանելով այժմուն Քաղա-
պան գաւառը. նա Գերբենդի մասերը դառն իւր փախանը:

⁸ Ընթերցումը ազատ է. պէտք է լինի լուսաւոր:

التر تر (Տերուէր):

մի եւ նոյն ժամանակ նա ասպատակ սփռեց մատակայ գիւղերը : Արովհետեւ հանձքերը հասած էին , ուստի բնակիչք խաղաղութիւն կապեցին նորահետ Փայտակարանին շնորհած պայմանների հիման վերայ եւ բաց արին գոները : Աալման մասւ քաղաք եւ մնաց այնաեղ , առաջ ուղարկելով իւր հեծելազօրը , նւաճեց Ծիկաշէն , Մեծկուանք (?) , Ավգուստուս (?) Մարքարան² , Հարձանք³ , Տաբար⁴ (?) , եւ Աղուանից այլ գաւառները : Աալման առաջարկեց Բալասականի Քրդերին ընդունել իսլամ . ոոքա պատերազմեցին հետք , բայց յաղթւելով , նոցանից ոմանք համաձայն ցիխահարկ տալ , իսկ ոմանք , որոնց թիւը քիչ էր , ու վճարելով վճարել :

Ինձ պատմել են Պարտակի բնակիչներից շատերը , թէ Ծամքօր⁵ անունով հին քաղաք կար , որ

المسوان = المسوان ماء ينبع من نهر سقراط = ساقاساني (Strabo 73, 509. 511) . ساقاساني (Ptol.) , Sacasani (Plin. VI, 10) :

ز Դաւար է տաել , որ զատաներին կը վերաբերին այս երեք ազատազած անունները . մերեւ ձեռապրերի համեմատութիւնն վերականգնել կարողանար ճիշդ ընթերցու . ու :

թուր թէ վախանակ ճիշդ կարգալու . և աջ՝ — Ուտի (Անանձնաւոր) : Են ներսուի առնելով այն հանգամանքն որ արարացիներին շնորհիւ . ու մասկան չեզո ի հանգիւնների համեմատական ազ քառութեանունն հեշտ չեր ընտելանաւ . հայ զատաների գժարարարաւաններին ան անց . հետմադրելու . և հարկաւ . որ շատ գէպքերում նոյն իսկ ինքն պատմողը կարող էր սիսալ առանցքել այս այն բարդ անունն . այս հիման վերայ վախանակ մըրսան ազատելու . էր ապասելու (Աստանի Մարձուան պատման) :

المرجان = العرقان العرقان

ز Զքաւորների համար պարմանթիւն , որ ունեւոր մասնիքները պարտաւոր էին՝ իրրեւ . որինաւոր առուրք՝ պետքան գանձարանը (Քերինայ) ուղարկել :

شکور

նւաճեց Սալման ի. Ռուբիայ Ալբահիկ, մարդ ուղարկելով նորա վերայ: Այսուհետեւ քաղաքը մնաց շէն գրութեան մէջ, մինչեւ որ Աւելորդիք¹ աւերեցին. այս այն ցեղն էր, որ (այսուեղ) եկաւ, երբ Եղիդ Ռևայդ հեռացաւ Հայուստանից. այն ժամանակ բնակիչների գրութիւնը ծանրացաւ եւ աւելացաւ նոցա տառապանքը: Կորանից յետոյ կառավարեց Ծամքօրում 240 թ. Բուղայ, Ալմուտասիմ Քիլլահի արձակւած ստրուկը, որ հովանաւոր հանդիսացաւ Հայուստանին, Ասրպատականին եւ Ծիմշատին. նա բնակեցրեց Ծամքօրում խազարների երկրից գաղթականներ, որոնք՝ ցանկութիւն ունենալով ընդունել իսլամ² նորա հովանաւորութիւնն էին պարում. նա տեղափոխեց այսուեղ Պարտաւից վաճառականներ եւ անւանեց քաղաքը Մուսավարեկիւց:

Սալման, հասնելով Արաքս եւ Կուր գետերի խառնունքը³, իւր յետեւը թողեց Բարդէջ⁴, անցաւ Կուրը եւ նւաճեց կապազակ. Նորա հետ խաղաղութիւն կապեցին Հարկ տալու պայմանով Ծակեանի եւ Կամիրարանի⁵ տէրերը, Խայզանի ժողովուրդը, Ծարվանի եւ առհասարակ Զարալի⁶ միւս իշխանները, նմանապէս

¹ Ա. Ջ. Հ. Հ. | Ցարդ մայթ է Ցու. մ. ցեղիս ծագման խնդիրը, որի մասին տարբեր կարծէքներ կան: Konst. Porphyr. (687): "Αρχων τῶν Σερβοτοῖων (իմաս Σερβοστιῶν) τῶν λεοφόρων Μαῆηα παιδία. Ισταχρί Աւելորդիք կուսակցութ, ունի-աւել եւ սպառաւնիք կ'ան անէ:

² Պարաբաղի արեւ եւ եան սահմանադլիւս մ., այս մասն Դիեւաստ գիւղի մօս:

³ Jakut կը դնէ Ասրպատականի հիւստային սահմանադլիւս մ. Անօրու եւ Պարտաւի մէջ 14 մղոն է:

⁴ Տես "Հանդէս" էջ 125:

⁵ Աւանդոյն երկիր. Կովկասի սովորական անունն է.

— حبل الحق — կազիկ:

Մասքատի, Շապարանի և Ալբար¹ քաղաքի ժողովուրդը։ Ապա բնակիչներ փակեցին նորա յետեւից գուները։ Նորուն պատահեցաւ Խաքանը իւր հեծելադօրով, որ անցած էր Բալանջար² գետը, եւ Ասլման սպանեցաւ 4000 մուսիմների հետ։ Նոցա պատերազմական կոչը սովորաբար լսելի էր ձականամարտի դաշտում։ Ասլման ի. Ռաբիյա առաջինն էր, որ դատաւոր նշանակեցաւ Կուֆայում (Բաղդատում)։ Եւ Յեաց այստեղ 40 օր առանց դատ ունենալու՝ պատմողը աւանդել է ինձ Օմար ի. Խատարի ասելով։ Ասլմանի եւ Կրտայբայ ի. Մուսիմի մասին ասումը է իրեն Զաւմանե Ալբարհի։

Մենք երկու գերեզմանն ունինք. մէկը Բալանջարում, Միւսը Զինաստանում. ինչ գերեզմաններ . . .
Որ Զինաստանումն է (Հերոսի) յազթութիւններով
է ծածկւած,

Խեկ այս՝ թանձը անձրեւը կ'ոզողէ։

Ասլմանի հետ էր Բալանջարում Քարգայ ի. կար Ալանսարի, որ բերեց նորա մահւան բօմթը Օսմանին։ Երբ Հարիբ նւաճեց Հայաստանի մի մասը, նա զբեց գորա մասին Օսման ի. Օֆֆանին, եւ նորա գիրը հասաւ նորան. տեղեկացնելով նորան Ասլմանի մահւան մասին, նա կարծում էր, թէ Օսման նորան նշանակելու է կառավարիչ ամբողջ Հայաստանի վերայ. բայց ապա տեսաւ, որ նա նորան կարգում է Ասորիքի եւ Միջագետքի սահմանագլխում զինւոր, ի նկատի ունենալով նորա ընդունակութիւնն այսօրինակ յանձնաբարութիւններում, որ նա նորան սովորաբար տալիս էր։ Խեկ Հայաստանի սահմանագլխում կառավարիչ նշա-

¹ Դերբենդ :

² Առաջան քաղաք Հանաց (Աեղծ Խորեն.) Հման. եւս Մ. Կաղանկատուացի Բ. խթ.։ Ին Խորդածեհ։ Խաղաց քաղաքներն են՝ Խոմիկ, Բալանդար եւ Ալբարց (124)։

նակեց Հռովայքայ ի. Եաման Ալարսին։ Հարիր
մեխնեցաւ Պարտաւ եւ ուղարկեց իւր օգնակիցները
(հարկահանները) այս քաղաքի եւ Կարինի մէջ
եղած գաւառները, որպէս եւ Խայզան ապա
նորան հասաւ Օսմանի թուղթը, որով նա հրա-
մայում էր նորան հեռանալ այնտեղից եւ փո-
խանորդ նշանակել Աալտ ի. Զռվար Ալարսին,
որ նորա հետ էր Հարիր կատարեց հրամանը եւ
մերագարձաւ Ասորիք, ասպատակ ավտելով Յանաց
Հոգերի վերայ, եւ բնակեցաւ Հիմում։¹ այսուղից
Մռավիան փոխադրեց նորան Դամիակոս, որտեղ նա
վախճանեցաւ 42 թ. 35 ամաց։ Մռավիան ուղար-
կած էր նորան ֆոյչ՝ Օսմանին օգնութեան, երբ սա
պաշարւած էր, բայց՝ գալով Վագի՛լկույ² նորան
հասաւ Օսմանի սպանման բօժք, ուստի յետ
դարձաւ։

Օսման կառավարիչ նշանակեց Առապատա-
կանի եւ Հայաստանի վերայ Մռավիրայ ի. Շօրային,
բայց ապա հեռացրեց նորան եւ կարգեց նորա փո-
խարէն։ Հայաստանի վերայ Քամի ի. Ռարիոյ ի.
Ռեմայայ ի. արի Աալտ Ազգավին, իսկ բառ այլոյն՝
Ամր ի. Մռավիայ ի. Մռանուաֆիկ Օքայլին։ ոմանք
պատմում են, որ աւ Մռովիրայից յետոյ կառա-
վարեց Հայաստանի վերայ Կիլար ցեղից մեկը 15
Պարի, ապա Օքայլի, ապա Աշաղ ի. Քայլ՝ Ամի ի.
տրի Ցալիրի ժամանակ Հայաստանի եւ Առապա-
տականի վերայ. ապա Արդալլահ թ. Հատիմ թ.
Նուման ի. Ամր Ալբահլի՝ Մռաւիսայի ժամանակ (656
—679) եւ այստեղ էլ վախճանեցաւ. որին յաջորդեց
նորա եղայրը՝ Արդուլ Ազեկ ի. Հատիմ ի. Նուման.
որ նորոգեց եւ ամրացրեց Դուհին քաղաքը, բնորա-
ձակեց նորա տաճարը (մասնիցը), շինեց Նախի-

¹ Emessa Ասորիրում։

² Մեղինայի շրջակայքում։

³ Մեղինայից 5 մղոն հեռաւ դէպի հիւման։

շեւան, վերականգնեց Պարտաւ քաղաքը, որ ըստ
աւանդութեան բնաւ քայլայւած էր, եւ նորա
շուրջը ջրանցք անցկացրեց. նորագեց եւս Փայտա-
կարան, որ աւերւած դրութեան մէջ էր: Իսկ ոյլք
պատճեմ են, որ այս քաղաքը նորոգեց Մուհամ-
մեդ ի. Մըրզան՝ Արդուլմալիք ի. Մըրզանի օրե-
րով, իսկ ըստ ալ Վակիրի՝ Արդուլմալիք շինեց
Պարտաւ Հատիմ ի. Աւուման Ալբահլիք կամ նորա
որդու շնորհիւ: Այս Արդուլմալիք նշանակեց Օս-
ման ի. Վայիթ ի. Օքբայ ի. արի Մուայթին կա-
ռավարիչ Հոյաստանի վերայ:

Ի. Ազգուրայրի¹ խռովութեան ժամանակ
Հայոց պատանիները եւ նոցա ծառաներ վտարան-
ջեցան եւ բնակիչը ապատամբեցան. իսկ երբ
կառավարեց Մուհամմեդ ի. Մըրզան (իսր եղրօր՝
Արդուլ Մալիքի ժամանակ), նա պատերազմեցաւ
նոցա հետ, յաղթեց նոցա, գերեց եւ տիրեց եր-
կրին: Մնացեալներին նու խոստացաւ վճարել՝ ի
նշան յարգանաց՝ աւելի մեծ ունիկ, քան սովորա-
րար կը սահնային զինւորները, ուստի նոքա ժաղո-
վեցան միտտեղ Խլաթ գաւառի եկեղեցիներում. Մուհամմեդ փակել աւեց նոցա վերայ գաները.
պահապաններ դրեց եւ ահ տարածեց վերաները:
Այս պատերազմի ժամանակ գերեցաւ եզիդ ի.
Աւայդի մայրը, Ախուհանի պատրիկի դուռը:

Առաջիման ի. Արդալյան (715—717) կառա-
վարեցրեց Հոյաստանի վերայ Ազի ի. Ազի ի. Ամիր
Ալիինդին. այս Ազին ի. Ամիրնոցանիք էր, որոնք բնա-

¹ Արդալյան ի. Զուրէյը՝ թեկն ածելով խոլիֆու-
թեան շարունակ 13 տարի (680—692) մինչեւ իւր մաշը
վտանգուու որ ապատամբ հանգիստացաւ. Օմայյադների իշխա-
նութեան դէմ, դրաւած ունենալով Մեկկան, որտեղ նա
եղիդ Ա. մաշիդ յետ (683) նայն խակ ասմիրապետ նաևաշեցաւ:
Խոլիֆութեան ներքին խռովութիւնները Հարեւան. յարմար
առիթ ուշաց. և առային Հայերին՝ փորձել թօթափել ուստ-
րի լուծը:

կեցան Ռամիկոյ¹ քաղաքում, հաշտութիւն կապե-
լով Ալի Ի. Արի Տալիբի հետ²: Ապա նու նշանակեց
Օմար Ի. Արդուլ Ազիզին, Փոյտակարանի Ասհը³
Ազիի⁴ ամիրոջը, իսկ այլք աւանդում են, որ Օմարի
ոգնականն էր (վերոյիշեալ) Հատիմ Ի. Նուման,
բայց այս տեղեկութիւնն հաստատ չէ:

Եզիդ Ի. Արդուլմալիք (720—724) կառա-
վարիչ կարգեց Միլաք Ի. Սաֆֆար Ալբահրամին,
որին յետոյ հեռացրեց եւ նորա տեղը դրեց Հարիդ
Ի. Ամր Ալմային: առ յարձակեցաւ Լակղիների
վերայ եւ առաւ Հասմագան⁵ գաւառը:

Ապա Հայաստանում կառավարեց Զարրահ
Ի. Արդալլահ Ալհակամի⁶, Մաղհիլ ցեղեց, որ
նոտաւ Պարտաւում: Կա տեղեկացրեց ամիրա-
պետին, որ այստեղ շափի եւ կշիռքի տարրերու-
թիւն կայ եւ հաստատեց հաւասարութիւն եւ
ճշտութիւն, շինել տալով Զ-Հ-Շ-Ռ կոչւած
շափիր, որով մինչեւ օրս Պարտաւի բնակիչք
տաեւտուր կ'անեն: Ընցնելով կուր գետը, Զար-
րահ առաջացաւ, կորեց Սամուր⁷ գետը, մտաւ

¹ Հնոց Kallinikum, յայտնի առեւտրական քաղաք
Հիւսիսային Միջազգեարևում Եփրատ գետի վերայ:

² Օսմանի խոզխազում մից յետոյ (656) Ալհմ' իրրե:
Մու համացեղի յաջորդ՝ իւր թիկնածութեամբ պատճեռ ե-
ղաւ արիւնահետ պատերազմի. որ ընդ միշտ երկու հակա-
ռակ բանակների բառ անեց խլամական աշխարհը:

³ ՀՀԱՐՔԻ, այժմ՝ Արէն Հայ Աստրայականում, որ
Արքոյ ծովք կը թափի:

⁴ Իտաք Համազան (ՀՃԱՀԱ) պիճակը կը դնէ
կառայից ծովք ափին, Հարաբան քաղաքից անմիջաւուն հի-
մաս. Անորանից վերեւ տարածում են Գիլանի և Շիրվանի
գաշտները մինչեւ Բակույի, Գեղրանենի. Լէկիզիների առհման-
ները եւ երկու գետերի խառնութը: Ապա հեռաւում են
Լիրանի բնակիչք, որոնք շատ անուր բերդ ունին:

⁵ Որ վերեւում յիշուած է:

⁶ ՀՀԱՐՔԻ կամկատի լեռնային գետերից մէկն է, որ
Դերրենադից հարաւ կառայից ծովք կը թափի:

խազարների երկիրը եւ կոտորեց նոցանից մեծ բազմութիւն. գորանից յետոյ պատերազմեցաւ Համազին երկրի բնակիչների հետ եւ խաղաղութիւն կուպեց նոցա հետ այն պայմանով, որ նա նոցա փոխադրէ Խազզան գաւառը, տալով նոցա (բնակելու համար) նորա քաղաքներից երկուոր. Ապա յարձակեցաւ Պատումիկների¹ վերայ, գերեց նոցանից ոմնաց, վերադարձաւ եւ մնաց Ծարէում, իսկ նորա զօրքը ձմեռեց Պարտաւում եւ Փայտակարանում. Երբ Խազարք, անցնելով Արաքսը, մասն երկրի խորքերը, նա ճակատեց նոցա հետ Վարդանի² գաշտավայրում. առքա հեռացած դեպի Արտավիլ. Զարրահ կուեց նոցա հետ և փարսախ Հայուստանին կից տարածութեան վերայ շարունակ Յ օր եւ նահատակեցաւ այս ճակատամարտում իւրայիններով. ուստի գետը Զ-ը-ը-ն կոչւեցաւ, որպէս եւ կամուրջը, որ նորա վերայ էր:

غُوَمِيَكْ Masudi II, 40: عَمِيق Jakut: "بَارِقْ-
لَ-أَرْ-أَرْ" ար նուուշանգիւու է այս (կոտորեց) ծագի վե-
րայ, որուեց կը ժաղովն Խազարք. Արերք, Ախ-
ուարք (Ասմանդարք), Խազզանք, Կուրքք, Բարլանք. Զա-
րանկիրանք եւ Ամերք (گُومِيَكْ). վերջիններու Բար-ել-արտա-
րեց հիւսիս կը բնակին: Kamuss: Ալան' ցեզի եւ աերու-
թեան անուն է . . . գա այն երկիրն է, որ այժմ՝ Պարզանին
կը կոչէ իւ որի մայրաքաղաքն է Կոյմուկ: Այս մեռն Այս-
դիւրը՝ Երերինցից հիւսիս թէ երեւա արարացի մասնեազրերի
աւանդած ցեզի անունն է բար մէջ կը յիշաւածէ:

زَرْنَانْ մեր մատնեազրերի Ա-արդանակերուն է:
Istaxri: "Արաքսը կ'անցնի Ա-արդանի դաների առջեւից . . .
Փայտակարանից մինչեւ Ա-արդան է փարսախ էն: Ըստ
Edrisy (II, 323) այդ տարածութիւնը հաւաքար է 12 փար-
սախի (— 36 մզանի): Ibn Xordadbeh Ա-արդան քաղաքը
է անունէ Ա-արդանականի ծայրագայն առհման (119, 227).
Պարտաւուց 8 կոյսորանով հեռու (122): (1 Փարսախ = 3
արարական մզան = 5½ վերտոն):

Հիշամ կ. Արդուլմալիք (724 – 743) կառավարից նշանակեց Հայաստանի վերայ Մասլամայ ի. Արդուլմալիքին, որ՝ իրեւ առաջապահ զօրք՝ ուղարկեց Սայիդ ի. Ամր ի. Ասվադ Ալհարաշին, նորա հետ միասին խաչակի ի. Մուսլիմ Օքայլին եղբայրներով հանգերձ, եւս Զամ'վանայ ի. Հարիջ ի. Խալիֆին (որ Ամրը ի. Ռարիխայ ի. Ասո'այի որդին էր), Զուֆափին եւ Խալիֆին, որովք Օմայյ ի. Հուրար Սուլամիի որդիքն էին, Ալֆուրատ ի. Ալման Ալրահիլին եւ Ալիիդ ի. Ալքա'քոյ Ալարսին: Այցիդ ճակատեցաւ Խազարների հետ, արտաքսեց նոցա Ալարդանակերտից, որ սոքո պաշարած էին, եւ ի վախուսատ գարձրեց նոցա: Խազարք եկան Մայմազ (առ Բարբառատականի գաւառներից մէկն էր): Երբ Սայիդ կը պատրաստէր կռւել նոցա հետ, նորան հասաւ Մասլամայ ի. Արդուլմալիքի թուղթը, որով նու նորան կը յանդիմանէր, որ՝ նորա գալստեանն շապասելով՝ պատերազմած էր Խազարների հետ. ապա նորան կը յայտնէր, որ (փոխանակ նորա) գօրագրուի է նշակակել Արդուլմալիք ի. Մուսլիմ Օքայլին: Երբ Սայիդ յանձնեց իւր դօքքը (սորան), Մասլամայի հրեշտակը ձերբակալեց նորան, կազանքների մէջ տարաւ նորան Պարտաւ եւ դրեց բանս: Խազարներ հեռացան, հալածւած Մասլամայից, որ սորա մասին գրեց Հիշամին. վերջինն նորան պատասխանեց՝

Դու կը թողնեն նոցա Մայմազում, (թէ Հպետեւ)
նոցա կը տեսնես,

Եւ կը պարես նոցա անհաստատ հոգի վերայ.

Եւ հրամայեց հանել բանոից Ալհարաշին: Մասլամայ խազարադութիւն շնորհեց Խայզանի բնակիշներին, հրամայեց նոցա ամրոցը քանդել եւ նոյն տեղ իրան համար ազարակ շինել, որ մինչեւ այսօր էլ՝ պատնէշատեղին կը կուէի: Զարալի իշխանների հետ հաշտութիւն հաստատեց, իսկ Ծարիմանշահ,

Աիրանշահ, Տարարսարանշահ, Ֆիլանշահ, Զարշանշահ եւ Մազքասաց տէրը (ի նշան Հնազանդութեան) և կան նորա մօտ։ Ազա Մասլամայ արշաւեց Քար (Դերբենդ) քաղաքի վերայ եւ նւաճեց զպին. ամրացում նստած էին 1000 տուն խազարք, որոց նա պաշտեց, նետելով նոցա վերայ քարեր եւ քարի ձեւով պատրաստած երկաթներ։ Երբ ոյդ եւս շօդնեց, նա գիմեց գէպի այն աղբիւրը, որտեղ զից Անուշիրվան ջուր էր տարած գէպի նոցա ջրի պահարանը. Հրամայեց զենուլ եղներ եւ ոչխարներ եւ նոցա կեղոր եւ անդժամի հիմքը՝ աղբիւրի մէջ նետել. մի գիշերւայ բնիթացքում ջուրը որդնեցաւ, հատաւ եւ ապականեցաւ. իսկ երբ գիշեր եղաւ, թշնամիք թողին ամրացր եւ փախան։ Մառամայ ի. Արդուլմալիք բնակեցրեց Քար-էլ-աբւար քաղաքում 14.000 գլուխ Ասորիիք բնակիչներից, նշանակելով նոցա ռոճիկ. մինչեւ օրս էլ Քարի բնակիչք ոյլապէս թոյլ չեն տալիս (նոր) կառավարչին քաղաք մտանել, բայց եթէ նա իւր հետ (բերէ) գրամ՝ նոցա մէջ բաժանելու համար։ Ծինեց ուտելիքի եւ գարու շտեմարաններ, զինատուն, հրամայեց յեցնել ջրի պահարանը եւ պայծառեցրեց քայքայւած քաղաքը։ Մասլամայի հետ էր Մըրզան ի. Մահմեդ, որ նոցա հետմասին պատերազմեցաւ խազարների հետ եւ մեծ քաջութիւն ցոյց տւեց ճակատամարտերում։

Հիշամ կառավարիչ նշանակեց Մասլամայից յետոյ Ասյիզ Ալհարաշին, որ մնաց այսուեղ երկու տարի։ Նորանից յետոյ կառավարեց Մըրզան ի. Մահմեդ, որ բնակեցաւ Ախալ'ում. նա նորոգեց գարսախ քաղաքը, որ Պարտեւից 40, իսկ Տփղիսից 20 փարսախ հեռի է։ Մանելով խազարաց երկիրը Ալանացոց գրան կողմից Ասիդ ի. Զաֆիր Ալուլմամիք Եղիդի հօր՝ եւ Զարալի Բար-

: *Assa foetida, silphium.*

Ել-Շաբաթանդի իշխանաց հետ, Մըրվան յարձակեցաւ Ալաւոնների վերայ, որոնք խաղարաց երկրում էին, գերեց նոցանից 10.000 բնտանիբ եւ բնակեցրեց նոցա Կամեթում: Բայց Ալաւոնք՝ սպաննելով իրանց կառավարչին՝ փախան, եւ Մըրվան, հետամուռ լինելով, որը մատնեց նոցա: Երբ եկաւ խաղարաց իշխանը ահազին բաղմութեամբ, որ Մըրվան, նւաճել էր, թափելով նոցա երկիրը եւ ջւառելով նոցա զէնքի գօրութիւնն, այս բանը լքացրեց նորան եւ երկիրւով լեցրեց նորա սիրոր: Երբ խաղարը Մըրվանին մատեցաւ, ուանորան պատգամ ուղարկեց, որ նորան կամ խոյամ ընդունելու եւ կոմ կռւի հրաւիրէ. Նա պատասխանեց՝ “Ես կրծդունեմ խոյամ, ուստի ուղարկիր ինձ մատ մէկին, որ ինձ ուսուցանելու: Եւ Նա նորան մարդ ուղարկեց, որ ուսոյց նորան: Ապա Մըրվան՝ դաշն կապելով նորա հետ՝ նորան իւր տէրութեան վերայ հաստատելու հիման վերայ, բնակեցրեց նորան խաղարների հետ միասին Լակդինների երկրի տափարակում, Ամանը իւր Շապարանի մէջ:

Դորանից յետոյ Մըրվան մատաւ Սարիր երկիրը, յարձակեցաւ բնակեցների վերայ եւ տիրեց երկրի ամբոցներին. Սարիրի իշխանը հպատակեցաւ նորան եւ խաղաղութիւն հաստատեց նորա հետ ոյն պայմանով, որ նա իւրաքանչիւր տարի 1000 ստրուկ՝ 500 պատանի եւ 500 աղախին, ուեւ մազերով եւ յանքերով՝ նորան մատակարարէ. Եւ Նա կորեց նոցա (մազերի) ծայրերը¹. Եւս պարտաւորեցաւ 100.000 Հ-Պ-Ն² (ցորեն) մատակարարել պետական շտեմարանների համար. Մըրվան առաւ-

1. Ասքարոս թիւնու խորին զնութեան կը պատկեռի. Ասքարեաստեանցը թագաւոր Համբաւրարի (իբրև 2250 կ. Ք.): Իւր նորերս գոտանաւմ՝ որինաց զբրում, Տակեստի մազերը կորել տարբ ծանր պատիժներից մէկը կը համարէ.

2. Modius. Ասքարիրում եւ Եղիսպատաւմ զնութեանք պարձածելի շափ:

նորանից պատահու : Տեւմանի՛ բնակչաց հետ եւս
խաղաղութիւն հաստատեց այն պայմանով , որ նոքա
տարեկան 100 գլուխ ստրուկ՝ 50 պատանի եւ 50
աղախին ուն մազերով եւ յօնքերով՝ (նա կտրեց
մազերի ձայրերը) եւ 20.000 ժառան (ցորեն) պետա-
կան շահմարտանների համար մատակարարեն : Մանեւ-
րով Զիրիկիրան երկիրը . Մրրվան հաշտութիւն
կազեց երկրի իշխանի հետ այն հիմնան վերայ , որ
նու իւրաքանչիւր տարի 50 գլուխ ստրուկ եւ 10.000
ժառան (ցորեն) մատակարարէ : Բայց Համազինի
բնակիչք շկամեցան խաղաղութիւն . հաստատել
նորա հետ . Մրրվան գրաւեց նոցա ամրոցը մի ամիս
պաշարելուց յետոյ , այրեց , աւերեց , իսկ իշխանին
պայման դրեց , որ նա 500 գլուխ ստրուկ մի անգամ
տայ . նորան այլ հնար շկար , եւ նա համաձայնե-
ցաւ) բացի որանից տարեկան 3000 ժառան (ցորեն)
պետական շահմարտանների համար մատակարարել :
Այստեղից Մրրվան եկաւ Աինդան (?) եւ նւաճեց
երկիրը խաղաղութեամբ , պայման դնելով , որ նորա
իշխանը մի անգամ 100 գլուխ ստրուկ նորան մա-
տակարարէ . ուրիշ հնար շունենալով , նա համա-
ձայնեցաւ բացի այդ տարեկան 5000 ժառան (ցորեն)
ուղարկել պետական շահմարտանը : Տարարիստանի
բնակչաց Մրրվան պարտաւորցեց տարեկան 10.000
ժառան մատակարարել , իսկ Զիրանշահի վերայ
տուրք շդրեց նորա գեղեցիկ երգեցողութեան , գո-
վելի գործի եւ մեծ քաջութեան համար :

Դորանից յետոյ Մրրվան մնաց Լակղիների
ամրոցում , որոնք հրաժարեցան նորան որ եւ է
տուրք վճարել . ուստինա այնտեղից մեկնեցաւ խա-
ղարաց իշխանի մօտ , որին սպաննեց նետով մի հո-
վիւ , առանց նորան ճանաչելու : Մրրվան Լակղի-
ների հետ խաղաղութիւն կազեց այն պայմանով ,
որ նոքա 20.000 ժառան (ցորեն) մատակարարեն .

կարգելով նոցա վերայ կառավարիչ խաչքամ ալ Առւլամի՛ին, նա մեկնեցաւ Շարժանի տիրոջ ամբոցը, որ Խիշշ կը կոչւէր եւ ծովին մօտ էր. նա հնազանդեցաւ նորան, իշնելով դաշտային տափարակը. Մըրվան գրեց բնակչաց վերայ 10.000 առողմատուրք: Շերժանի տիրոջ վերայ պարտաւորութիւն գրեց՝ առաջաւոր գնդում դտանւել ամէն անդամ, երբ մուսլիմները արշաւելու լինին խազարաց երկիրը, իսկ վերադարձին՝ յետապահ գնդում. Ֆիլանշահ պարտաւոր էր միայն նոցա արշաւանքին մասնակցել. իսկ Տարաբսարանշահ՝ յետապահ գնդում դտանւել արշաւելիս եւ վերադարձին՝ առաջաւոր զօրքում: Մըրվան եկաւ Շողէից երկիրը եւ պատերազմեցաւ բնակչաց հետ:

Երբ նորան հասաւ Վայիդ ի. Եզիդի սպանման (744 թ.) լուրը, նորա դէմ ապստամբեցաւ Զարիս ի. Նուէյմ աղ Զուգամի. գալով Մուսաֆիր ալ Քասասարու մօտ (որին Զոհակ) Խարիջականն: Բարի (Գերրենդի) վերայ քաղաքապետ էր նշանակել), նա գառա նորան իրան համամիտուա գրեց Մուսաֆիրին կառավարիչ Հայաստանի եւ Ասրպատականի վերայ, իսկ ինքն դազու եկաւ Արտաւիլ. նորա հետ միացաւ քաղաքի գոեհիկ ժողովուրդը. (ապստամբք) եկան Բաջարւանն: եւ դտան իրանց համամիտներ, որոնք միացան նոցա հետ, նոյնպէս եւ Ալարդանակերտում շատերը. նոյնը տեղի ունեցաւ, երբ ապստամբք անցան Փայտակարան: Ապա Մուսաֆիր մնաց Տումանում:

1 Զոհակ ի. կէս Աշշէյրանի. Խարիջականաց զորութուն իւր, որ 745 թ. գրաւեց Բարեկան:

2 Խարիջականք, որոնք և գլխաւոր ազանդների կը բաժանեին, կը նպավեն Օսմանին եւ Ալիին եւ արրազան պարտականութիւն կը համարեն ապստամբիւ ընդհանուր իմանքի դէմ:

3 Ըստ Ջակուի քազաքս կը դտանէր Շամանից աւ հետի:

Մըսվան Ի. Մահմեդ Նշանակեց Խոահակ
Ի. Մուսիմին կառավարիչ Հայաստանի վերայ,
իսկ ինքն շարունակեց իւր մարտը Մուսաֆիրի
հետ, որ (ամրացած) էր Ախալքանի Կիլաբ ամ-
րոցում:

Երբ փոխւեցաւ հարատութիւնն եւ Սաֆիահ
արուլ Արքա (749 – 754) ամիրապետ եղաւ, Մի-
ջազետքի եւ Հայաստանի վերայ կառավարեց Արև-
ջավար ալ Մանսուր. նա ուղարկեց Խորասանից
Մուսաֆիրի եւ նորա համամիաների գեմ զօրա-
պետներից մեկից, որ ճակատեցաւ ապատմբների
հետ, յաղթեց նոցա եւ սպաննեց Մուսաֆիրին։
Փայտակարանի բնակիչք ամրացան Կիլաբ ամրո-
ցում զօրապետ Քիդադ Ի. Ասֆար Փայտակարան-
ցու հետ, բայց ստիպւեցան վայր իջանել՝ իրանց
կեանքը խնայելու պայմանով։

Երբ Մանսուր ամիրապետ եղաւ (754 – 775),
նա կարգեց Եղիդ Ի. Աւայդ Սուլյամիին Հայա-
ստանի վերայ կառավարիչ, որ նւաճեց Ալանացոց
դուռը, դրեց այնտեղ մի գունդ հեծելազօր
տէնէ։ մարդկանցից, հպատակեցրեց Շահնար-
ներին եւ ստիպեց նոցա հարկ վճարել։ Ապա Ման-
սուրի հրամանով Եղիդ ազգականացաւ Խաղարաց
թագաւորի հետ. կինը ծնեց նորան մի որդի, որ
վախճանեցաւ, նոյնպէս եւ մայրը ծընունդքի ժա-
մանակ։ Մանսուր ուղարկեց Եղիդին Շիրուան եր-
կիրը, որ ուներ նախարի եւ աղի հանքեր, եւ դրեց
այն նորա իշխանութեան ներքոյ։ Եղիդ շինեց
Արծէլ՝ մեծ եւ փոքր՝ քաղաքները եւ բնակեցրեց
այնտեղ Պաղեստինի ժողովրդից։

Ինձ պատմել է Մահմեդ Ի. Խամայիլ Պար-
տաւի բոլոր ծերերի ասելով, թէ Շիրուան դաւառի

¹ Այսոպէս կը կոչւեին զինուորներ, որոց անուններն
մասսենի մէջ էր անցկացրած եւ որոնք մշտական ռռնիկ
կը ստունացին։

Համախի (քաղաքը) իւր անունն կը սերէ Համախի ի. Ծուզա՚ից, որ Ծիրուանի իշխան էր՝ Ասյիդ ի. Ասլմ ալ Բահլիի ի Հայո կառավարելու ժամանակ: Ինձ աւանդել է Մահմեդ ի. Խամայիլ ծերերի զբուցելով, թէ Հայերը ապստամբեցան Հասան ի. Քահթարայ Ալթայի կառավարութեան ժամանակ (ի. Աւայդ եւ Բակիար ի Մուսլիմ Օքայի հեռանալուց յետոյ) հայ Մուշեղի (موشەج) առաջնորդութեամբ. ալ Մանսուր ուղարկեց Հասանին օգնական զօրք Ամիր ի. Խամայիլի հրամանատարութեան ներքոյ. Հասան ճակատեցաւ Մուշեղի հետ, սպաննեց նորան, նորաբազութիւնը ցրեցաւ, եւ բարեկարգեցաւ երկիրը: Եյս Հասանի անւամբ կոչւած են Փայտակարանի Հասան գետը, Պարտաւի Հասան այգին եւ Հասանիայ ագարակը:

Հասան ի. Քահթարից յետոյ կառավարեցին հերթով Օսման ի. Օմարայ ի. Խուրայմ, Ռայք ի. Հատիմ Մուհալլարի, Խուզայմայ ի. Խուզիմ, Էզիդ ի. Մազիադ ալ Հայրանի, Օքայդալահ ի. Մահմիդ, Ֆադլ ի. Էտհեայ, Ասյիդ ի. Ասլմ, Մահմեդ ի. Էզիդ ի. Մազիադ: Խուզայմայի կառավարութիւնն ծանր էր. նա հաստատեց Դութեում եւ Նախիջեւանում Երկրաշափ, որ նորանից առաջ (այստեղ) գոյութիւն չունէր:

Հայաստանի իշխանք նստած էին իրանց երկրներում եւ նոցանից ամեն մէկը կը պաշտպանէր իւր գաւառը. երբ այստեղ էր գալիս ամիրապետի ստիկանն, նոքա կը ջանային նորա սէրը գրաւել եւ, եթէ նա նոցա հետ ազնիւ, բայց խիստ կը վարւէր, նորա նորան հարկ կը վճարէին, հակառակ գէպքում նորան հրապարակորէն կը հայ հոյէին եւ կ'արհամարէին նորա հրամանն:

Մամունի (813—833) ամիրապետութեան ժամանակ կառավարեց Խալիդ ի. Էզիդ ի. Մազիադ, որ կ'ընդունէր նոցանից ընծաներ եւ նոցա-

հետ բարեկամաբար կը վարւէր. բայց նորա այս վարմաւնքն նոցա վատթարեցրեց եւ գրգռեց Մամանից նշանակած նորա փոխանորդների գէմ:

Ալմուտասիմ Քիլլահի (833—842) դրեց Հայան ի. Ազի Բագաղիսին, որ յայտնի էր Մամանի բերեա անւամբ, այստեղ կառավարիշ. նու անփոյթ դատանեցաւ երկրի եւ նորա իշխանների վերաբերմամբ, որոց հետ նա մեղմ կը վարւէր, մինչեւ որ զօրացաւ նոցա ամբարշտութիւնն գէպի սուլթանն եւ շարութիւնն կառավարիշների գէմ:

Խաչահակ ի. Խամայէլ ի. Ծուայր, բանի Աւմայա'ի արձակւած ստրուկը, նւաճեց Ալբրէ: Խշխան Սահն ի. Սմբատ յարձակեցաւ Հայդար ի. Կառւս Օվհչինի՝ Հայաստանի կառավարչի՝ վերայ եւ սպաննեց նորա քարտուզարին, որ վշեց հոգին: Ապա այստեղ կառավարեցին սատիկաններ, որոնք կ'ընդունէին երկրի բնակիչներից նոցա աւելորդ ինչ քը եւ կը բաւականանային նոցա գլխահարկի մասնով յարմար գէպքում:

Հաւասացելոց ամբարպետ Ալմուտավակիկի ալա-Ալլահ (847—861) իւր խարիֆութեան երկրորդ տարին կարգեց Հայաստանի վերայ Խևուփ ի. Մահմեդ ի. Խևուփ Ալմարվազին, որ՝ գալով Խլաթ՝ ձերբակալեց տեղի իշխան Բագրատ ի. Աշոտին եւ տարաւ նորան Սամառայ. այն ժամանակ թափուր մնաց երկիրը իւր իշխաններից, աղատանիներից եւ մեծամեծներից:

Խոկ Խևուփի օգնականն՝ Ալայ ի. Ահմադ՝ դիմեց Սիսականի վանքն, որ յայտնի է Բագրատաց վանք անւամբ եւ որ Հայաստանի բնակիչներից միշտ պատւած է եւ ուխտատեղի ծառայած: Ալայ յափշտակեց նորա բոլոր ինչքը եւ սկսեց նեղել իշխաններին. սոքա՝ տեսնելով իրանց անտանելի եւ սսակալի գրութիւնն՝ սկսեցին գրաւոր կերպով հաղորդակցիլ միմեանց հետ, մէկը միւսին գրգռելով անհնազանդութեան եւ աղատամբութեան:

գաղտ մարդիկ ուղարկեցին խութեցիների մօտ (սոքա էր նու-ի-շ- անուամբ յայտնի բարբարուներ են), որոնք գրգեցին նոցա խւուփի վերայ յարձակիլ, որովհետեւ նա էր գերի տարել նոցա իշխան Բագրատին. երկրի իշխաններից եւ մեծամեծներից իւրաքանչիւրը ուղարկեց հեծելազօր եւ հետիւտ զօրագունդ նոցա օգնութեան: Խութեցիք յարձակեցան խւուփի վերայ Տարօնում, մինչ նորա մարդիկ ցրած էին գիւղերում, սպաննեցին նորան եւ յափշտակեցին նորա ամբողջ բանակը:

Հաւատացելոց ամիբապեա Ալմաւտավակեկիլ ապա կարգեց Հայաստանի վերայ կառավարիչ Քուղայ մեծին. սա եկաւ Բիթլիս եւ ձերբակալեց Մուսայ ի. Զուրար'ին, որին հաճոյ էր խւուփի սպանումն եւ որ՝ պահելով Բագրատի կողմն՝ օգնած էր այս իրադործել: Քուղայ պատերազմեցաւ խութեցոց հետ, որի մասնեց եւ գերեց նոցանից մեծ բազմութիւն: Ապա պաշարեց Աշոտ ի. Համզայ ի. Գագիկ Վասպուրականի իշխանին Աղքակում, ստիպեց նորան վայր իջնել իւր ամբոցից եւ տարաւ նորան Ասմառայ:

Քուղայ արշաւեց Ալիքը, յաղթեց խառնակ ի. Խամսյէլին եւ սպաննել տւեց նորան կտապանքների մէջ: Նւաճելով Ալիքը նա (այնտեղ) փոխադրեց Ազուանից բնակիչներից: Առհասարակ խաղաղացրեց Սիսականի Հայերին՝ ապստամբ, խռովարար քրիստոնեաներին եւ այլոց, մինչեւ որ բարեկարգեցաւ երկիրը արդարութեամբ, որ իրան նմանը շուներ: Ապա մեկնեցաւ Ասմառայ 241 թ.

Համայնք թուակ Աշխեռանէ և . . . եւ յազագս խրթնի եւ անհետովանելի խոսիցն եւ բարուցն կոչին (բնակիչք էլերինն) Խամսյէլ (Ա. Է.):

Միջազնոց նուանումներ:

Նախ քան Հայաստան նուանելն Արաբացիք Օմարի խալիքութեան ժամանեակ (634-644) արշաւեցին Խյադ Ի. Պանմի առաջնորդութեամբ Միջազնոյք եւ պատեցին Հայոց Միջազնոց բոլոր զինուոր քաղաքները, հասնելով մինչեւ Խլամի, որի առումն ըստ մեր պատմագրի՝ 20 թ. անդի ունեցաւ: Այս հաստ ածն, որի մէջ մանրամասն կը յիշին առզացի բնակիչներին նուիրած խազազութեան պայմանները, վերին աստիճանի հետաքրքրականն է, լուսաբանուով արաբացաց՝ իրեւ երկրի նոր աերերի՝ յարաքերութիւնն առ քրիստոնեաց եւ այլակրօն բնակիչնք: Ի նկատի է առնելու հարկաւ, որ աեղեկութիւնն հիմնած է բանառ՝ պահազան աղքիւրներից քաղած՝ աւանդութեանց վերայ, որոնք մեծ զգուշութիւն կը պահանջնեն:

Ինձ պատմել է Դաւուդ Ի. Արգուշամիդ, Ռաքքայի՝ դատաւորը՝ իւր հօր, իւր պապի, իսկ վերջինս Մայմոն Ի. Միհրանի ասելով՝ թէ ամբողջ Միջազնոք նւաճել է Խյադ Ի. Պանմ, որին Օմար Ի. Խատտար նշանակեց (այսուեղ) կառավարիչ՝ Արու Օրայդայի մահից յետոյ: Վերջինս նշանակած էր նորան Ասորիքի վերայ, որից յետոյ Օմար Ի. Խատտար գրեց Եղեգ Ի. Արու Սուֆեանին: Ապա կառավարեց Ասորիքում Պաւախայ, իսկ Խյադ՝ Միջազնոքում:

Ինձ պատմել է Հուսեյն Ի. ալ-Ասվադ, թէ՝ ինչպէս նորան աւանդել է Խաչեայ Ի. Ագամ Միջազնոտաց բնակչաց եւ սոքա՝ Ասուլէյման Ի. Աթայ ալ-Քարշիի ասելով՝ Արու Օրայդայ ուղարկեց Խյադ Ի. Պանմին Միջազնոք եւ ինքն վախճանեցաւ այնտեղ. նորանից յետ Օմար նշանակեց Պանմին կառավարիչ:

¹ Λαρετος Νικηφόριον (Steph. Byz. de urbibus et populis; Ptol., Strabo XVI) Nicephorium (Plin.), որ ապա Կալլինիկոս կը կոչվէր, Խփրատ եւ Խալիքի գետերի խոտնուրդի մասու Հարուն ալ-Խաչիդ վերանորոգեց եւ պայծառացրեց քաղաքը, ու բնա փոխադրեց Խալիքների ամեռու:

Ինձ պատմել է Բիկը կ. Հայզամ, թէ՝ ինչ-
պէս նա Կուֆայլ Արդարահ կ. Մուհամմեդից եւ
առ Սուլեյման կ. Աթայից լսել է՝ երբ Կյաղ կ.
Ղանմ՝ Արու Օրայդայից ուղարկւած՝ նւաճեց
Ուռհայ, ¹ նա կանգ առեց քաղաքի դրանց առջեւ՝
մայզ նժոյգը նստած. բնակի չքիսաղաղու թիւն
կապեցին նորա հետ այն հիման վերայ, որ նոցա
մեայ իրենց տաճարը իւր շրջակայք հանգերձ, որ
նորա (Դոր) Եկեղեցի չկառուցանեն, բացի այն, որ
նորա ունին, որ նորա օգնեն մուսլիմներին թշնա-
մեաց դէմ. իսկ ոռքանոցա կը թողնեն այն, ինչ որ
նորա պարտաւոր են ըստ պայմանին. սակայն բնակ-
չաց չի արւի հովանաւորութեան դաշն: Միջա-
գետաց բնակիչք ընդունեցին նոյն պայմաններն,
որ եւ Ուռհայեցիք:²

Մուհամմեդ կ. Սադ կը պատմէ, թէ Վակի-
դի կը հաստատէ այն, ինչ մենք Կյաղի գործոց
մասին լսած ենք, այսինքն՝ Արու Օրայդայ վախ-
ճանեցաւ 18 թ. ժանախախից Ամաւասում,³ կա-
ռավարիչ նշանակելով Կյաղին: Այս ժամանակ
նորան հասաւ Օմարի թուղթը, թէ նա նորան կը
կարգէ Հիմարի,⁴ Քիննասրինին եւ Միջագետաց վե-
րայ. Կյաղ արշաւեց Միջագետք 18 թ. Հարան

¹ Հնաց "Էծսա (Ptol. V, Plin. V, VI, Steph. Byz.: "Էծսա, πόλις Συρίας, Strabo), Edessa (Amm. Mare., Orpha (Cario Chron. V) Հաստ Istaxri անզելութեան, բաղադրու անէր անելի բան 300 վանքեր

² Այս աւանդութիւնն Ուռհայի առման մասին
բաւական կը առարերի երկրորդ աւանդութիւնից (առա-
սուրեւ). որ անելի մանրամասն կը հանդիսանայ:

³ Jakut Պաղեստինի քաղաքներից մէն կ'անւ անէ:

⁴ "Էմսա (Ptol.), "Էմսա, πόλις Θοινίσης (Steph. Byz.), "Էմսորոί (Strabo), Emesa (Amm. Mare.). այժմ՝
Համա:

⁵ Հնաց Խալկիς (Ptol. V, Strabo, Steph. Byz.). Chalkis (Plin.).

ամսի¹ կիսին հինգշարթի օրը 5000 մարդով,² նշանակելով առաջապահ զօրքի վերայ Մայսար ի. Մասրուք ալ-Նաբին, աջ թեւի վերայ Սայիդ ի. Ամր ի. Հիղայմ ալ-Զումահին, իսկ ձախ թեւի վերայ Սաֆվան ի. Մուատտալ ալ-Սուլամիին. Խալիդ ի. ալ-Ալիդ ձախ թեւի ճակատին էր. այլք կը պնդեն առկայն, որ Խալիդ Աբու Օբայդայից յետ այլ եւս ոչ մի դրօշի տակ պատերազմ չէր ելած, այլ կը մնար Հիմանում, ուր նա վախճանեցաւ 21 թ., նշանակելով Օմարին իրեն կտակակատար. ըստ այլոց նա մեռաւ Մեդինայում, առկայն առաջին տեղեկութիւնն աւելի ճիշտ է:

Խյաղի առաջապահ գունդը հասաւ մինչեւ Ռաքքայ, յարձակեցաւ քաղաքի շրջակայքում բնակող խաշնարածների եւ երկրագործների վերայ եւ տարաւ իւր հետ աւար. սոքա փախան, ով կարողացաւ, եւ մտան քաղաք: Խյաղ մերձեցաւ իւր զօրքով Ռաքքային եւ բանակեցաւ Աւոհայի դրանց հանդէպ (քաղաքի դաներից մէկն է, որ իրեւ զօրանոց կը ծառայէ). բնակիչք մի ժամ շարունակ կը նետաձգէին, մինչեւ որ մուսլիմներից սմանք վերաւորեցան. սոքա այնտեղից յետ մղեցան, որ պէս զի թշնամու նետեր եւ քարեր նոցա չհասնին, պորտեցան քաղաքի շուրջը եւ դրին դրանց հանդէպ հեծելազօր գունդերը: Խյաղ եկաւ իւր զօրքի մօտ եւ ուղարկեց հեծելազօր, որ գիւղերից գերիներ եւ մեծ քանակութեամբ ուտելիք բերին: Հունձքը հասել էր. 5 կամ 6 օրից յետ քաղաքի իշխանը (պատրիկը) ուղարկեց Խյաղի մօտ՝ խաղազութիւն խնդրելու. Խյաղ հաշտութիւն կապեց նորա հետ այն հիման վերայ, որ քաղաքի բոլոր բնակիչք, նոցա կեանքը, գոյքը, արտերը եւ քա-

¹ Մահմեդականաց ջրդ ամիսն է:

² Եթէ չիլու է այս թւականն Հայոց Միջազնաց նւաճութեան կարող էր 639 թ. ու շատ ուեզի սևենալ:

դաքը կը ինսպիրին. Իյադ ասաց՝ “Երկիրը մերն է, որովհետեւ մենք նւաճել ենք եւ գրաւել այնու։” Նա թողեց Երկիրը բնակչաց ձեռքում՝ իրեն հարկ (շահ) տալու պայմանով. Նա արտաքսեց այն քրիստոնեաներին եւ Հրեաներին, որոնք ոչինչ չկամեին վճարել, սակայն սոքա թողին իրենց գոյքը մուսլիմներին՝ ^{1/10} մասը (նոցա տալու) պայմանով։ Իյադ դլխահարկ (Նշան) դրեց բնակչաց սորուկների վերայ եւ պարաւորեցրեց նոցանից ամեն մէկին տարեկան մի դենար վճարել (ի բաց առնելով կանոյքը եւ երեխայք). բացի մի դենարից նա դրեց նոցա վերայ եւս մի քանի ուսուցրեն, մի քիչ ձիթենույ իւղ, գինի եւ մեղք. երբ Մուսաւիայ կառավարեց, նա շինեց այս բոլորը դլխահարկ։¹

Բնակիչք բաց արին քաղաքի գռները, եւ երբ նոքա կանգնած էին մուսլիմների հանդեպ հրապարակում, Առահայի դրանց առջեւ, Իյադ դրեց նոցա հետեւեալն։

“Յանուն Աստուծոյ ամենազթասէրի եւ ամենազլրմածի. այսու շնորհեց Իյադ ի. Ղանմ Ռաբքայի բնակչաց այն իսկ օրը, երբ նա քաղաք մտաւ, ապահովութիւն՝ նոցա կենաց, գոյքի եւ եկեղեցեաց նկատմամբ, որ սոքա շպէտք է աւերեին եւ ոչ արհամարեն, մինչեւ որ բնակիչք հարկ կը վճարեն, որ նոցա վերայ կը ծանրանայ, եւ ոչ մի վնաս չեն հասուցանէ (մուսլիմներին). բայց նոքա շպէտք է շինեն (նոր) եկեղեցիք եւ (Հրեաց) տաճար, շպէտք է զործազրեն փայտէ տախտակներ։”

¹ Այսուեղ ֆիզեայ (Նշան) բառի հնագոյն նշանակութիւնն իբրև. գրաւմական իլւսնութիւն պարզ է. գործ հակառակին՝ խորագ (շահ) գեռ հնութեաւ աւելի ընդհանուր նշանակութիւն պէտք է ունենար, իբրեւ եւթիւն, հայտ, ուր հասարակ բնակուն հարկ։

² Հնութեաւ եւ այժմ էլ Հայերի մէջ շատ տեղերում աժամկոչըն՝ զանգակատան վերայ կանգնած՝ փայտէ տախ-

կամ խաչ եւ ոչ զատկի տօնը տօնեն։ Աստւածականատես է եւ նա բաւական է իրբեւ ականատես։ Իյադ կնքեց իւր կնիքով (թռւղթը)։ Կը պատմեն, թէ իյադ պարտաւորեցրեց Ռաքքայի բոլոր եր-շուտեաներին շորս գենար վճարել. ըստ (այլ) վկայութեան՝ Օմար գրեց նորանից յետ Օմայր ի. Սադին, որ նորա կառավարիչն էր, պարտաւորեցնել բոլոր տեղի բնակիչներին շորս գենար վճարել, ինչպէս նա արեց Զահարի(?) բնակչաց հետ։

Իյադ եկաւ խառան¹ եւ բանակեցաւ Բաշուգդայում,² ուղարկելով առաջապահ զօրքը (խառան), որի առջեւ բնակիչք փակեցին քաղաքի, գուները եւ արտաքսեցին նորան այնտեղից։ Երբ իյադ իջնեանեց Բաշուգդայում, խառանի հեթանոս բնակիչք նորա մօտ մարդ ուղարկեցին նորան տեղեկացնելու, որ քաղաքի մի մասը նոցա ձեռքումն է, եւ նորան խնդրելու, որ նա Ուռհայ գնայ, եւ ինչ հիման վերայ Ուռհայի բնակիչք նորա հետ խաղաղութիւն կապեն, նորա գոհ կը մեան (նոյն պայմաններն ընդունելու). իսկ քրիստոնեաների հետ թող նա վարւի այնպէս, ինչպէս նա կամի, մինչեւ նորա նորա մօտ կը գան։ Երբ այս լուրը առան քրիստոնեայք, նորա ուղարկեցին իյադի մօտ՝ խնդրել նորանից նոցա նոյն ողորմութիւնն շնորհել, որ նա հեթանոսաց պարգեւեց, եւ հնազանգեցան նորան։

Իյադ եկաւ Ուռհայ. բնակիչք զօրք գումարեցին նորա գէմ եւ մի ժամ շարունակ կը նետակիներ միմանց զարկելով՝ եկեղեցի կը հրաւիրէ ժողովուրդը։

¹ Κάρχα (Ptol. V, Strabo XVI), Carrae (Amm. Marc.).

² Բառ Jakutի քաղաքս կը գառնիք Ռաքքայ եւ Ասսելայնի (Pisaur, Ptol., Pisaur, Steph. Byz. Resaina, Amm. Marc.) մէջ։

տահարէին մուսլիմներին . երբ կորիչք քաղաքից գուրս երան , մուսլիմները ի փախուստ դարձուցին նոցա եւ ստիպնցին նոցա քաղաք վերադառնալ : Քնակիչք երկար շատանւեցան եւ խնդրեցին իրենց ողորմութիւն եւ խաղաղութիւն շնորհել . Եյադ ընդունեց նոցա աղերսն եւ զբեց նոցա թուղթ , որոյ պատճէնն է :

* Յանուն Աստուծոյ ամենագթասէրի եւ ամենաողորմածի . այս է Եյադ Ի . Ղանմի թուղթը առ Աւոհայի եպիսկոպոսը , թէ գուք ինձ բաց արիք քաղաքի գռները այն պայմանով , որ ամէն մարդ մի գենար եւ մի յուրեն ինձ վճարէ . իսկ գուք ապահով էք ձեր կենաց , գոյքի եւ ստրուկների վերաբերմամբ : Դուք պարտաւոր էք՝ մոլորած (մուսլիմին) ճանապարհ ցոյց տալ եւ ճանապարհների մասին հոգալ , մուսլիմներին նախազգուշացնել (վտանգի գէպքում) եւնոցա ձեր ոյժը (ծառայեցնել) Աստւած ականատես է եւ նա բաւական է իրեւ ականատես :

Ինձ պատմել է Դաւուդ Ի . Արգուշամիդ՝ իւր հօր , իւր պապի ասելով՝ թէ Եյադի թուղթն առ Աւոհայեցիք հետեւեալն է :

* Յանուն Աստուծոյ ամենագթասէրի եւ ամենաողորմածի . այս է Եյադ Ի . Ղանմի եւ նորահետ գտանւող մուսլիմների թուղթն առ Աւոհայի քնակիչք , թէ ես խնայեցի ձեր արիւնը , գոյքը , արտերը , կանայք , քաղաքը եւ ջրաղացք , եթէ դուք կատարէք այն պարտականութիւնն , որ (ես զրի) ձեր վերայ . դուք մեզ պարտաւոր էք մեր ճանապարհների մասին 'հոգալ , հիւրընկալել մեզ , երբ մենք մոլորինք . ականատես են Աստւած , նորահրեշտակները եւ մուսլիմք :

Ապա Եյադ եկաւ Խառան , ուղարկելով Սաֆվան Ի . ալ-Մուտատալին եւ Հարիք Ի . Մասլամայ ալ-Ֆիհրիին Սամուստատ . Եյադ խաղաղութիւն շնորհեց Խառանի բնակչաց՝ Աւոհայեցաց հետ

կապած գաշին հիման վերոյ. բնակիչք բաց արին քաղաքի գոները նորա առջեւ, և նա դրեց այնտեղ մէկին կառավարիչ։ Այստեղից նա գնաց Սամուսատ, ուր նա գտաւ Սավիլանի. ալ-Մուտատալին եւ Հարիբ ի. Մասլամային քաղաքի առջեւ կանգնած։ նոքտ առած էին զիւզօրոյք հանդերձ նոցա բերդերով, որպէս եւ Սամուսատի ամրոցները։ Իյադ խաղաղութիւն կապեց բնակչաց հետ՝ Ուռհայեցոց նւիրած գաշին հիման վերոյ. ապա նա վերադարձաւ Ուռհայ, ուստից նա մեկնած էր։

Ինձ պատմել է Մուհամմեդ ի. Սադ՝ ըստ Ալակիդիի, Մամարի,¹ Զօհրիի աւանդութեան թէ Միջազետքում ոչ մի հնութեան տեղի չձնաց, որ նւաճած չլինէր Օմար ի. Խատտարի ժամանակ իյադ ի. Ղանմ, այն է՝ Խառան, Ուռհայ, Ուարքայ, Քարքիսեայ,² Մծրին³ եւ Սինջար։⁴

Ինձ պատմել է Մուհամմեդ՝ Ալակիդիի, Արդուլահման ի. Մասլամայի, Գուրատ ի. Մալմանի, Զարիտ ի. Հաջաջի ասելով, թէ Իյադ նւաճեց Ռաքքայ, Խառան, Ուռհայ, Մծրին, Մայաֆարեկին⁵, Քարքիսեայ եւ Եփրատի վերոյ գտանւող աւանները, քաղաքները՝ խաղաղութեամբ, իսկ երկիրը՝ բռնութեամբ։ Նոյն Մու-

¹ Այս պատմագրի “Հայուստանի նւաճու մեն” երկը ցաւոք մեզ չէ հասել։

² Հերց Circesium, Κιοκέσιον.

³ Νίσιβις (Ptol.), Νίσιβις, Νάσιβις, Νέσιβις (Steph. Byz.), Nisibis (Amm. Mare.)

⁴ Σιγγάρα (Ptol. V.) •Σιγγάρα, πόλις Ἀραβίας πρὸς τῇ Ἐδέσσῃ Steph. Byz.), Singara (Amm. Mare.), Sangarena (Sext. Ruf.).

⁵ Հայ մասենագրերի “Եփրէկրտ կամ” Մարտիրոսաց քաղաք ի Ծոփու։ Մացուզոլուս (Geizer, Georgii Cyprii descriptio orbis romanis, 911).

⁶ Մեծ քաղաքներին նւիրած “ապահովութեան պայմաններում” ոչ մի խօսքով չի յիւ ի նոցա լրջակայ զիւ-

Համմեդ պատմել է ինձ՝ Աւելիովի, Զաւր Ի. Եղիզի, Ռաշիդ Ի. Ասդի ասելով՝ թէ Իյադ Նւաճեց Միջագետք, քաղաքները՝ խաղաղութեամբ, իսկ երկիրը՝ բռնութեամբ։ Կարծում են, թէ երբ Իյադ Ռաքքայից խառան եկաւ, նա գտաւ քաղաքը գատարել, որովհիետեւ բնակիչը գաղթել էին Ուռհայ. Ուռհայի նւաճումից յետ այստեղ փոխադրւած խառանցիք խաղաղութիւն կապեցին (Իյադի հետ) իրենց քաղաքի համար. Իյադ շնորհեց նոցա նոյն պայմաններն, որ տւած էր Ուռհայեցոց։ Ինձ պատմել է Արու Այուր, Ռաքքայի տղայոց ուսուցիչը, թէ՝ ինչպէս նա լսել է Հաջաջ Ի. Արի Մունի Ռուսաֆիից, իսկ առ իւր հօրից, իւր պապից՝ Իյադ նւաճեց (նախ) Ռաքքայ, ապա Ուռհայ, ապա խառան, ապա Սամուսատ¹, առաջին (այսինքն Ռաքքայի) խաղաղութեան հիման վերայ. Յետոյ եկաւ Արուճ, Ռասկիֆայ² եւ Արքունի երիբը, նւաճեց այս տեղիք եւ խաղաղութիւն կապեց ամրոցաբնակչաց հետ՝ Ուռհայի դաշին հիման վերայ։

Երբ Իյադ լուր ստացաւ, թէ Ասմուսատի բնակիչք ապստամբեցան, նա գնաց եւ պաշարեց քաղաքը, մինչեւ որ առաւ։ Իմանալով, որ Ուռհայեցիք գաշն իսկել են, նա բանակեցաւ քաղաքի առջեւ. բնակիչք բաց արին նորա առջեւ դռները,

զորէից մասին, որոնց դրութիւնն համեմատաբար շատ առանել ծանր պէտք է լինէր ստարի իշխանութեան տակ. զրաւելով երկրի զվարար կեդրոնները երբեմ երկմախ. բայց միւս բացառապէս իրենց ձեռնառ. Խաղաղութեան պայմաններով՝ Արտաքոց հետ եր զենքի զօրութեամբ հնագանդեցնել երկրի ոյլ առանց եւ ամրոցներ։

¹ Σαμόσατα (Ptol., Jos. Flavius VII, Dio Cassius), Σαμόσατα, πόλις Κομμαγηνῆς (Strabo, Steph. Byz.); Samosata (Plin., Amm. Mar.).

² Ρεοκίρα (Ptol.), Κάστρον Ριοκηρᾶς (Gelzer, i bid. 913). Jakut: رأس كنّا (Ուսու կող Փայ) խառանին մաս-

նա ներս մտաւ եւ գրեց այնտեղ իւր կառավարչին
մի զօրագնդով հանգերձ։ Ապա հյադ եկաւ
Մանրէջ¹, որ Եփրատի վերայ է եւ նշանաւոր է
իւր կամուրջով, եւ գրաւեց այն։ Այն Վարդայ՝ որ
է Ռասէլայն քաղաքը, ուր նա գիմեց, գիմադրեց
նորան, ուստի նա թողեց եւ եկաւ Թիլ Մաւզին²,
որ նա նւաճեց 19 թ. Առաջի խաղաղութեան
հիման վերայ։ Իյադ աւզարկեց Հարիր և Մաս-
լամայ Ֆիհրիին Քարբիսեայ, որ առաւ այն՝
Ռաբքայի գաշին հիման վերայ։ Իյադ նւաճեց
Ամիդ³ առանց ճակատամարտի՝ Առաջի խաղաղու-
թեան հիման վերայ, նոյն օրինակ եւ Մայաֆարե-
կին, իսկ կաֆարտութեամբոցը եւ Մծրին՝ կռւով,
նոյն պայմանների հիման վերայ։ Նոյնկերպ Տուր
Աբդին, Մարդին ամրոցը եւ Գարայ⁴, իսկ Քարդայ⁵
եւ Բաղարդայ՝ Մծրինի դաշին հիման վերայ։
Նորա մօտ եկաւ Զաւազանի։ իշխանը եւ
խաղաղութիւն կապեց նորա հետ՝ իւր հողից նորան

¹ Ζηνης Ἱεράπολις (Ptol., Strabo, Gelzer, ibid. 872), Hierapolis (Amm. Marc.), այժմ Մեմրիջ, Առաջի
և Հալէողի մէջ։

² Jakut անի Մասլամ (مَسْلَم) գրաւթիւն։

³ Amida (Theoph. Byz., Amm. Marc., "Ամիդա
արքունիութուն" (Gelzer, ibid. 910)).

⁴ Istaxri և Jakut անին նոյն Նութ գրաւթիւն։
այժմ Kefr Tuth գիւղը. Մարդինից 5 ժամ հարու։

⁵ Մծրինի և Մարդինի միջեւ. Daras castrum quae Anastasiopolis (Theoph. Byz.), Ճարճ (Gelzer, ibid. 912), Ճարճ (Procop.)։ Ինչպէս կ'աւանդէ Պրոկոպ. քա-
ղաքը 501 թ. հիմեց Անաստաս կայսրը. որ խռորով
Անաստաս 572 թ. նւաճեց։

Տ Կարթագա ? (Ptol. V, 17). թերեւս նոյնն է մեր
մասենագրերի Ա-շնայ գիւղը յԱղջնիս։

Դ Jakut կ'անւանէ "գեղեցիկ քաղաք. Հայոց լեռ-
ների, Մելամթի, Ասրպատականի, Գիար Բեկրի և Մոսուլի
միջեւ. որոյ բնակիւք Հայեր են։"

Հարկ տալու պայմանով։ Այս բոլորը կատարեցաւ 19 թ. եւ Մուհամամի՛ օրերից (հաշւած՝ 20 թ. հյադ նւաճեց Արզն՝ Մծրինի խաղաղութեան հիման վերայ եւ՝ անցնելով կիրճից՝ հասա թիթիս, եկաւ Խլաթ եւ հաշտութիւն կապեց քաղաքի իշխանի հետ։ Գալով Առ Հարժու, որ Հայաստանում է, նա չ'անցառ այն, այլ վերադարձաւ եւ գրեց Թիթիսի տիրոջ վերայ նոյն հարկը, որ նա Խլաթի (բնակչաց), մեծամեծաց եւ իշխանի վերայ էր դրած։ Այսեղից եյադ անցաւ Ռաքքայ, ապա Հիմս, ուր նորան Օմար կառավարիշ նշանակեց. վախճանեցաւ 20 թ.

Միջազնոց սահմանագլուխը¹:

Երբ Օսման Ի. Օֆֆան խալիֆ եղաւ (644—656), նա թուղթ գրեց Մուավիային, որով նորան կը նշանակէր կառավարիշ Ասորիքի, իսկ Օմայր Ի. Սադ Անսարիին՝ Միջազնոց վերայ. բայց ապա նա հեռացրեց վերջինիս եւ յանձնեց Մուավիային Ասորիք եւ Միջազնոք նոցա սահմանագլխով հանդերձ, հրամայելով նորան յարձակիլ Աշմուշատի վերայ, որ Չորրորդ Հայքում է, եւ կամ յանձնարարել մէկին այդ դործը։

¹ Արակեդականաց տարբայ առաջին ամփան է։

² Istaxri կ'անանէ անպարհող քաղաք. որոյ արեւածան կողման մի հոյակառ ամրոց կայ. Սերբեա գետի վրայ. Carolus Müller (Պուլեմանու ցացրագրիչ) կ'ենթագրէ Հուց Տիգրանակերտն (Τιγρανοκέτο, Ptol., Strabo, Steph. Byz., Dio Cass.; Tigranocerta, Tacitus, Plinius).

³ Հաստածն կը նկարագրէ Արաբացոց արշաւանքը դէպի Յանահայոց ասհմանագլուխը եւ նոցա երկարածնայ ճակատը Յանաց հետ. որոնցից նորա թափեցին առժամանակ Մալաթիայ. Աշմուշատ եւ կամին ամրոցը Կամին վերայ աեղի ունեցած կուի նկարագրութիւնն մնչ կրծառեցիլք։

⁴ Տես Աշմուշատի մասին ծանօթութիւնն էլ 25:

Մուաւիայ ուղարկեց Հարիր Ի. Մասլամոյ Ֆիհրիին եւ Սաֆվան Ի. Մուաթթալ Սուլամիին, որոնք մի քանի օրւայ ընթացքում նւաճեցին քաղաքը Ռուհայի խաղաղութեան հիման վերայ. Մուաւիայ գրեց Սաֆվանին այնտեղ կառավարիչ, ուր նա վախճանեցաւ Մուաւիայի խալիթութեան ժամանակ (661—680): Այլք կը պետք էն սակայն, թէ ինքն Մուաւիայ արշաւեց Աշմուշատի վերայ երկու զօրապետների հետ միասին եւ գրեց Սաֆվանին այնտեղ կառավարիչ, ուր նա մնաց մինչեւ իւր մահը: Կը պատմեն, թէ կոստանդին կայսրը՝ Մալաթիայում իջեւանելուց յետ՝ բանակեցաւ Աշմուշատի հանդէպ 133 թ., բայց չկարողացաւ ոչինչ անել, այլ միայն տապատակեց շրջակայքը եւ վերադարձաւ: Հարիր Ի. Մասլամոյ Աշմուշատ առնելուց յետ յարձակեցաւ կամկա ամրոցի վերայ, բայց չկարողացաւ ազգել. նոյնպէս եւ Սաֆվան նորանից յետոյ: 188 թ. Մուհամմեդ Ի. Աբդուլլահ Ի. Աբդուլլահման Ի. Աբի Ամրայ Անսարի, որին Աբդուլլահիր Ի. Ալհ Նշանակած էր կառավարիչ Աշմուշատի վերայ, յարձակեցաւ կամկա վերայ եւ առաւ ամրոցը: Աբդուլլահ Ի. Թահիր նւաճեց կամկա Մամաւնի խալիթութեան ժամանակ, որ մնաց մուսլիմների ձեռքում: Աշմուշատի եւ կարինի քրիստոնեայ բնակիչնք, որպէս եւ բագրատ որդի Աշոտի, Խլաթի իշխանն, կը խորհէին անցնել Ցունաց կողմք եւ կը խնդրէին նոցա օդնութիւնն՝ Աշմուշատի գաւառում նոցա պատկանող հողերի համար:

Իյադ Ի. Պանմ ուղարկեց Հարիր Ի. Մասլամոյ Ֆիհրիին Աշմուշատից Մալաթիայ, որ նա գրաւեց. ապա բնակիչնք փակեցին (նորա առջեւ) քաղաքի գռները: Երբ Մուաւիայ կառավարիչ եղաւ Ասորիքի եւ Միջազետաց վերայ, նա ուղարկեց Հարիր Ի. Մասլամոյին, որ նւաճեց Մալաթիայ բռնութեամբ:

Բ. Նըր Մ'ասկավոյ¹:

237 թ. Հայաստանի բնակիչք յարձակեցան իւսուփի ի. Մուհամմեդ ի. իւսուփի վերայ. պատճառը հետեւեալն էր: Երբ իւսուփի եկաւ իւր գաւառը, որ Հայաստանի մի մասն կը կազմէր, (նորամօտ) գնաց իշխաններից մէկը Բագարատ² որդի Աշոտի, որ իշխանաց իշխան անունը կը կրէր. Նա խնդրեց նորանից հովանաւորութիւն, բայց իւսուփի ի. Մուհամմեդ ձերբակալեց նորան եւ կապանքների մէջ ուղարկեց Սուլթանի գուռը, ուր Բագարատ իւր որդու հետընդունեց իսլամ: Բագարատի որդի Աշոտի՝ եղրօր որդին եւ Հայաստանի բալոր իշխանք միացան ընդգէմ իւսուփի, գաշն կապեցին միմեանց հետ եւ երգւեցան արեամբ: Իւսուփի մտերիմք յորդորեցին նորան շմբալ երկրում եւ հաղորդեցին նորան բնակչաց նորա գէմ գաւառութեան մասին. սակայն նա չահսաց եւ մնաց. այն ժամանակ նորան շրջապատեցին բոլոր կողմից: Չիւն իջաւ. երբ իւսուփի քաղաքից գուրս գնաց, մինչ նորա մարդիկ ցրւած էին դործով, բնակիչք ճակատեցան եւ սպանեցին իւսուփին նորա ուղեկիցների հետ միասին. Նորան, ով որ կուին չէր մասնակցում, կ'ասէին՝ “Հանիր զգեստներդ եւ ապրիր մերկ”, սոքա ձգեցին իրենց զգեստները եւ ապրեցան մերկ եւ բորիկ. Կոցանից շատերը մեռան ցրտից, իսկ ոմանց մատները ընկան, եւ ապրեցան:

¹ Fragmenta historicorum Arabicorum, T. II, Ed. de Goeje, Brill, 1871, p. 546—548. Արև. Ամի Ի. Ահմեդ ի. Մուհամմեդ ի. Եսբուր ի. Մասկավոյ. գանձապես եւ մտերիմ առևլթան Ազուգագառուլոյ ի. Բոյեր. բանակը, գիլիսովայ եւ բժիշկ. վախճանեցաւ խորին ծերութեան մէջ 421/1030 թ. (Wüstenfeld, Gesch. der Araber, 182; Abulfeda, Hist. anteis. Ed. Fleischer, p. 203.)

² Հեղինակը ասլիս է անունիս բառարար, իսկ Բելազորի Բէրբուր էւ Բառարար մէջը:

Ակմուտավակելիլ ուղարկեց Բուղայ մեծին Հայաստան՝ խւուփի արեան վրէժը գնելու համար. սա գնաց եւ սկսեց Արդնից. ձերբակալելով Մուսէ ի. Զօւրարին, որ խւուփի սպանման համախոչ էր, Բուղան ուղարկեց նորան նորա եղարց հետ միասին Սուլթանի մօտ, իսկ ինքն բանակեցաւ խոյթում. այստեղ պատերազմեցաւ նա Հայերի բազմութեան՝ խւուփի ի. Մուհամմեդի սպանող ների հետ, յաղթեց նոցա եւ կոտորեց նոցանից 30000 մարդ, իսկ նոցա որդիքը ժողովրդի հետ միասին գերեց եւ վաճառեց:

Ապա Բուղան գնաց Ազրակ գաւառը եւ գերեց Աշոտ որդի Համզայի հայր Աբասի. այն տեղից մեկնեցաւ Գուին եւ յետոյ Թիֆլիս։¹

238 թ. Բուղան յաղթեց Խասհակ ի. Խամայէլին՝ բանի Օմայյայի ստրուկին՝ Թիֆլիսում եւ այրեց քաղաքը: Խասհակ ի. Խամայէլ ամբացել էր Թիֆլիսում, որ ըստ մեծ մասին փայտից էր շինած: Երբ Բուղան յարձակեցաւ քաղաքի վերայ, նա հրամայեց նավթային անօթներ վառել եւ նետել շինութեանց վերայ. քամին բարձրանալով՝ պատեց հրով Խասհակի ամրոցը եւ հարեւան շէնքերը: Թուղթերը եւ Մազրերացիք մտան նորա մօտ, ձերբակալեցին նորան որդու հետ եւ տարան Բուղայի մօտ, որ հրամայեց կապանքների մէջ նորա պարանոցը կտրել, իսկ մարմինն՝ խաչել. քաշաքում այրւեցան մօտ 50000 բնակիչք: Դորանից յետոյ Բուղան յարձակեցաւ Խասհ ի. Խւուփի՝ Ստեփանոսի քրօջ որդու վերայ եւ ճակատեցաւ նորա հետ Փայտակարան քաղաքում. Խասհ ամրացաւ Կրիչ² ամրոցում, Բուղան գրաւեց բերդը,

1. Հմմա. Թուղմայ Արծրունի, (Ք. Պատկանեան, 1887. Ա. Պետերբուրգ) էջ 119—120:

2. Արտաքի ձեռագրի կից ձեւը հարկաւ ուղղելու կույշ (Քիթիլ). Տես Թուղմայ Արծրունի 178 “Եւան ամառ” (յԱղուանս) անուանեալն Քիթիլ:

բռնեց նորան եւ տարաւ՝ նորա որդու եւ Ամբատ
որդի Աշոտի, Աղաւնից իշխանի, եւս Ատրներսէն
որդի Խաչակի հետ միասին։

Դ. Տաբարի:

Արու Զավար Մ.ի Զերիր ատ-Տաբարի ծնած
է 224/838թ. Տաբարիստանի Ամուլ քաղաքում։
Աւու Թափարական ուղեւորութիւնից յետոյ Եգիպ-
տասում, Ասորիքում եւ Իրաքում (Բաբելոնում),
Նա Հաստատեցաւ վերջապէս Բաղդադում, ուր Նա
սկզբում իրեւ ուսուցիչ Խո-Ռիտէ եւ Ֆիշէ՝ ապա
իւր սեպհական գպրոցը հիմնեց։ Նորա գրական
գործունեութիւնն կը տարածուէր ոչ միայն պատ-
մութեան վերայ, ուր նա առաւելապէս իրեւ Հա-
մական կը հանդիսանայ, այլ արդիւնաբեր էր նաև
Ալորանի մեկնութեան եւ իրաւաբանութեան
մէջ։ Վախճանեցաւ Բաղդադում 310/923թ.
(Geschichte der arabischen Literatur von Carl Brockelmann, I. Band, S. 142, Weimar 1898).

Հեղինակի բազմահատոր Համաշխարհային
պատմական երկասիրութիւնն, աշխարհի ստեղծ-
մանից մինչեւ նորա ժամանակից, Հիջրայից յետոյ
իրեւ ժամանակագիր գասաւորած, լոյս է տեսել
մի շարք յայտնի արաբագէտ գիտնականաց խմբա-
գրութեամբ հետեւեալ տիտղոսի տակ՝ Annales
quae scripsit Abu Djafar M. b. Djarir at-Tabari
cum aliis ed. de Goeje, 3 series, Lugd. Bat.
1879 – 98.

Հայաստանի մասին առաջ բերած աեղեկու-
թիւնները՝ թէեւ ոչ հարուստ՝ զգալի կերպով կը
տարբերին Բելազորիի վկայութիւնից, քաղուած
լինելով շատ անգամ բոլորովին տարբեր՝ թէ
գրաւոր եւ թէ անդիր՝ աղբիւրներից։

¹ Հմաս. Թագմայ Արծրունի, Էջ 172–175։

Միջազնոց նուանումներ^{1:}

(Վ, 2505).

Ըստ Այսի միջազնութեան Միջազնութեան նուանեցաւ 17 թ., իսկ ըստ Ի. Խաչակիս՝ 19 թ. յետ Հիջրայի: Օմար գրեց Սադ Ի. Աբու Աւքասին, թէ Աստուած նուանեց Ասորիք եւ իրաք մաւլիմների համար, ուստի ուղարկիր քեզանից մի զօրագունդ Միջազնութեան նշանակիր նորա վերայ երեքից մէկին՝ Խալիդ Ի. Աւովութին, կամ Հաշիմ Ի. Օտբային եւ կամ Իյադ Ի. Ղանմին զօրագլուխ: Սադ՝ ստանալով Օմարի թուղթը՝ ուղարկեց Ղանմին մի գնդով, նորա հետ գնելով Աբու Մուսայ Աշարիին իւր որդու՝ Օմար Ի. Սադի հետ միասին եւ Օսման Ի. Աբու-լ-Ասա Ի. Բիջը Զաքաֆիին: այս բանը տեղի ունեցաւ 19 թ.:

Իյադ արշաւեց Միջազնութեան պաշարեց Աւահայ: Քաղաքի բնակիչք խաղաղութիւն կապեցին նորա հետ զլամահարկ տալու հիման վերայ: Նոյն պայմանով եւ Խառանցիք: Ապա Իյադ ուղարկեց Աբու Մուսայ Աշարիին Մծրին, իսկ Օմար Ի. Սադին՝ Ռասէլայն մուսլիմներից բաղկացած օգնական գնդով: Ինքն բնափիր զօրքով գնաց Դարայ եւ պաշարմամբ գրաւեց քաղաքը: իսկ Աբու Մուսայ տուալ Մծրին: Այս բոլորը կատարեցաւ 19 թ.:

Իյադ ուղարկեց Օսման Ի. Աբի-լ-Ասաին Չորրորդ Հայր: այսուեղ Սաֆֆան Ի. Մուաթթալ Սուլամին նահատակեցաւ տեղի ունեցած մի ճակատամարտի մէջ: Բնակիչք խաղաղութիւն հաստատեցին Օսման Ի. Աբի-լ-Ասաի հետ իւրաքանչիւր բնտանիքից մի գենար վճարելու պայմանով:

^{1:} Այս եւ հետեւեալ հաստուածքն Աբրամատականի եւ Դարրանդի նուանման մասին առաջ կը բերեմ քաղաքածորէն: ի բաց թ ողնելով ինչ ինչ հետաքրքրութիւնից զուրկ մանրամասնութիւններ:

Խակ Ասյիփ կը պատմէ, թէ կյադ Ի. Ղանմ գնաց ալ - Քայքայի հետքերով, երբ Օմար զրեց Սադին, որ նա ուղարկէ ալ - Քայքային 4000 մարդուց բաղկացած գնդով Արու Օրայդային ող- նութեան. նորա ուղեւորեցան Միջագետը գեղի (Եփրատի) ակունքը: Սուհայլ Ի. Աղդի իւր բանա- կով հասաւ Ռաքքայ: Միջագետոց բնակիչնք Եմես- սայում՝ լսելով Կուֆացիների մերձենալը՝ ցրուեցան իրանց գիւղերում. Սուհայլ պաշարեց նոցա, մինչեւ նորա խաղաղութիւն կապեցին: Այս ժամանակ կյադ Միջագետոց Վասեթ քաղաքումն էր: Բնա- կիչնք համաձայնեցան գլխահարկ վճարել:

Արգուլահ Ի. Խորան արշաւեց դեպի Տի- գրիս, եկաւ Մոսուլ եւ անցաւ այնտեղից Մծրին. բնակիչնք ընդունեցին նորան խաղաղութեամբ եւ այնպէս վարուեցան, ինչպէս եւ Ռաքքայի ժողո- վուրդը:

Երբ Ռաքքայի եւ Մծրինի բնակիչնք հնա- ղանգեցան, կյադ առաւ իւր հետ Սուհայլին եւ Արգուլային, գնաց խառան եւ յափշտակեց ինչ որ նորա շրջակայքում գտաւ: Երբ նա բնակչաց մօտ եկաւ, նորա հրաժարեցան նորան իրանց հա- մաձայնութիւնն առաջ գլխահարկի նկատմամբ. կյադ ընդունեց այս, իսկ ով որ համաձայնեցաւ, նա նո- րան մշտական հարկատու նշանակեց:

Կյադ ուղարկեց Սուհայլին եւ Արգուլային Առ.հայ: Բնակիչնք շհամաձայնեցան գլխահարկ վճարել. ցանկացովը նշանակեցաւ մշտական հար- կատու:

(2646) Ի. Խահակ կը պատմէ, թէ 21թ. Օմայր Ի. Սադ Անսարին արշաւեց . . . Միջագետը, իսկ Անսարիայ՝ Անտիոքիայ եւ Աիլիկիոյ. միեւնոյն թւին Արու Հիշամ Ի. Օտրայ Ի. Ռաքքայ Ի. Ար- գուլ-Ծամն խաղաղութիւն հաստատեց Աիլիկիոյի, Անտիոքիայ եւ Մասուսայ Մասրինի բնակչաց հետ:

Ասորապատականի նուանումներ:

(2647, 2660—64:)

Աբու Զավար կը պատմէ, թէ Ասորապատական նուանեցաւ 22 թ. Նոյնպէս ինձ աւանդել է Ահմեգ Ի. Զարիս Առողջի բատ Խաչակը Ի. Այսիի, բատ Աբու Մաշարի՝ թէ Ասորապատական նուանեցաւ 22 թ., ուր կառավարեց Մուղելը Ի. Ընթաց նոյնն կը հաստատէ եւ Վակիրին: Խակ Սայիփ Ի. Օմար կը պատմէ, թէ այս գէպը աեղի ունեցաւ 18 թ. Համադանի, Ռոյի եւ Զորջանի նուանումից յետոյ:

‘Առ այլմ՝ հպատակեցնելով Համագան՝ արշաւեց Ռայ, որ Վաջի-լ-Ռուդի մէջն է: Օմար գրեց նորան, որ նա Սիմակ Ի. Խարաշայ Անուրիին ուղարկէ Ասորապատական՝ Բուկելը Ի. Աբդուլլահին օգնութեան. Կուոյմ սակայն սպասեց, մինչեւ գրաւեց Ռայ, ապա արձակեց Սիմակին, որ գնաց Բուկելի մօտ Ասորապատական, երբ սա արգէն իւր արշաւանքն սկսել էր: Երբ Բուկելը Զարմիզան մտաւ, նորան գիմաւորեց Խաֆանդիար Ի. Ֆառուռուխ զատ՝ անցնելով Վաջի-Ռուդից: այս եղաւ առաջին ճակատը Ասորապատականում. երկու զօրագնդեր իրարու բախեցան. Ասուուած ի փախուստ գարձրեց թշնամու զօրքը, եւ Բուկելը գերեց Խաֆանդիարին, որի հետ միասին նա շրջեց նորա գաւառները, բացի ամրոցավայրերից: Այս ժամանակ նորան հասաւ Սիմակ Ի. Խարաշայ օգնական գնով, նուանելով շրջակայ գաւառները, որպէս Օտրայ Ի. Ֆարբադ հնագանդեցրել էր իրեն ճանապարհի վերայ գտնուող երկրները:

Դորանից յետոյ Բուկելը խնդրեց Օսմանին՝ իրեն արձակել պաշտօնից. Օմար առւեց իւր համաձայնութիւնն այն պայմանով, որ նա՝ նշանակելով իրեն փոխանորդ՝ արշաւէ Դարբանդ՝ Բուկելը դրեց Օտրային երկրի վերայ կուսակալ եւ՝ յանձնե-

լով նորան խափանդիարին՝ ուղղակի գնաց Դարբանդ։ Օտքայ իւր կողմից նշանակեց Ահմակի ի։ Խարաշային կառավարիչ (երկրի մի մասի վերայ)։ Եւ այսպէս Օմար ամբողջ Ատրպատական յանձնեց Օտքայ ի։ Ֆարբագին։

Բահրամ ի։ Ֆառուռուխզադ՝ դարան մտնելով՝ իւր զօրքով սպասեց Օտքային ճանապարհին, մինչեւ նա մօտեցաւ. տեղի ունեցած ճակատամարտում Օտքայ ի փախուստ դարձրեց Բահրամին, որ ապրեցաւ փախատեամբ։

Երբ Օտքայի ձեռքն անցաւ Բուկեյրի իշխանութիւնն եւս, նա զբեց Ատրպատականի բնակչաց հետեւեալ դաշնագիրը։

“Յանուն Աստուծոյ ամենազթառէրի եւ ամենազորմածի. աւասիկ այս պայմանները չնորհեց Օտքայ ի. Ֆարբագ.՝ Օմար ի. Խաթթարի կառավարիչը.՝ Ատրպատականի ժողովրդին՝ նորա դաշտերի, լեռների, արօտատեղերի եւ սարու կների վերաբերմամբ, նաև կրօնաւորներին. բոլոր բնակչաց ապահովութիւն է տրուում” նոցակեանքի, գոյքի, կրօնի եւ հաստատութեանց համար այն պայմանով, որ նոցանից ամեն մէկը զլխահարկ վճարէ ըստ շտփոյ իւր կարողութեան, բաց ի երեխաներից, կանանցից եւ շքաւորներից, որոնք աշխարհական ինչք չունին, եւ բաց ի կրօնաւորներից, որոնք աշխարհական դոյքից զուրկ են։ Այս արտօնութիւնք կը չնորհուին թէ երկրի բնիկ ժողովրդին եւ թէ նորա հետ բնակողներին, որոնք պարտաւոր են զիշեր եւ ցերեկ հիւրընկալել մուոլիմ զօրագնդերից անջատուած զինուորին եւ նորան ուղեցոյցներ տալ։ Ով տարւոյ ընթացքում իւր խաշինքը ժանտախտից կորցրեց, նա աղատ կը մնայ նոյն տարւոյ հարկից։ Ով երկրի մէջ մնայ, նա կը վայելէ նոյն իրաւունքներն, որ եւ երկրի բնակիչք այսուհետեւ, իսկ ով հեռացաւ, նորան ապահովութիւն կը տրուի, մինչեւ նա իրեն ապաստան գտնի։ Թուղթա-

զբեց Զունդուր, վկայ են Բուկեյր ի. Արդուլ-
լահ Լէյթի եւ Սիմակ ի. Խարաշայ Շնարի.
յամին 18:

Դարբանդի նուանումն:

(V, 2663.)

Նոյն 22րդ թ. նուանեցաւ Դարբանդ:

Սոյիփ կը պատմէ, թէ Օմար ուղարկեց Սու-
րաբայ ի. Ամրին՝ որ Զալ-Նուր (Հրաւոր) կը կոչ-
ուէր՝ Դարբանդ. նա զբեց առաջապահ գնդի վե-
րայ Արդուլուահման ի. Ռաբիային (որ նմանապէս
Զալ-Նուր մականունն կը կրէր), մի թեւր յանձ-
նեց Հուզայֆոյ ի. Ասիդ Վիժարին, իսկ միւսը՝
Բուկեյր ի. Արդուլահ Լէյթին. վերջինս Սուրա-
բայի նորա մօտ գալուց առաջ Դարբանդի նուան-
մաքը էր զբաղւած: Սուրաբան զբեց նորան՝ միա-
նալ իւր հետ. աւարի վերայ գնելով Ուլման ի.
Ռաբիային, նա առաջ ուղարկեց Արդուլուահման
ի. Ռաբիային եւ հետեւեց նորան, մինչեւ գուրս
եկաւ Ասրպատականից եւ հասաւ Բուկեյրի մօտ
Դարբանդի շրջակայքում. նորա հետ միասին առաջ
ընթանալով, Սուրաբան մօտ Դարբանդի երկիրը
Օմարի հրամանով, որ նորան օգնութեան ուղար-
կեց Հարիր ի. Մաուամային Միջազետից:

Տարարի:

(2665.) Հայք այսուեղ շեն բնակում, այլ
միայն անցուղարձ կ'անեն: Սուրաբայ ի. Ամր
զբեց հետեւեալ թուղթը՝

“Յանուն Աստուծոյ ամենազթաւէրի եւ
ամենաբարերարի. ահաւասիկ այս պայմանները
շնորհեց Սուրաբայ ի. Ամր՝ հաւատացելոց ամիրա-
պետ Ամր ի. Խարաշայ կառավարիչը՝ Շահըրա-
բազին:¹ Հայաստանի բնակչաց եւ Հայերին. Կա

¹ Դարբանդի (բարի) իշխանին:

պարզեւեց ապահովութիւն նոցա կենաց, ընչից
եւ կրօնին, որոնք վեստի կամ նախատանքի շպէտը
և ենթարկութիւն Հայոց եւ Դարբանդի թէ ընիկ
եւ թէ եկուր ժողովրդի, նաև շրջակայ ազգաբնա-
կութեան հետ նա պայմանաւորեցաւ, որ նորա
օգնեն (մռալիմներին) բոլոր պատերազմներում եւ
հնազանդին միանդամայն նարի՝ բոլոր հրամաննե-
րին, իսկ եթէ նար չլինի վալիի վճիռներին։ Այս
փոխարէն ազատ կը լինի գլխահարկից նա, ով
ընդունեց այս պայմաններն, բաց ի զինուրական
ծառայութիւնից, որ կը փոխանակէ զլիսահարկը։
Ով գոհ լինի սորանով եւ մնայ երկրում, նորա
վերայ կը ծանրանոյ նոյն գլխահարկը, որ եւ
Ըստրամատականի ժողովրդի վերայ։ Նորա պարտա-
ւոր են ուղեցոյց ծառայել (մռալիմնին) եւ նորան
հիւրընկալել մի ամրող օր. եթէ զինուրական
ծառայութիւն անեն, ազատ կը լինին այս պարտա-
կանութիւնից, իսկ եթէ թողնեն (ծառայու-
թիւնն), իրանց վերայ կ'առնեն այս ծանրութիւնն։
Ակայ են Ըստրամահման ի. Ռարիայ, Սալման ի.
Ռարիայ եւ Բուկելյը ի. Ըստրամահ. գրեց Մարդի
ի. Մուքարրինը։

Ապա Սուբաքոյ ու զարկեց Բուկէյլին՝ Մուղան
 (موغان), Հարիր Ի. Մասլամային՝ Տփղիս, Հու-
 ղայիսյ Ի. Ասիդին՝ Ալանաց լեռները եւ Սալ-
 ման Ի. Ռարիային՝ մի այլ կողմ. սոցանից եւ
 ոչ մէկը չնւաճեց իրեն նշանակած երկիրը,
 բացի Բուկէյլից, որ ցըեց³ Մուղանի բնակիչ-
 ներին, որոնք վերադարձան իրենց բնակատեղերը.

ւ Կահովկան, որ զատառորի թշխանու լը ետքը հանգերձեալ էր. զատառոր

نحو الجِزاء من اجَابُ الْيَهُودُ عَنْ ذَلِكَ

3. *Constitutive* *Abnormal* *Pathology* *in* *Hypothalamic* *Pituitary* *Growth* *Dwarfism*.

գլխահարկ վճարելու պայմանով. Նա դրեց նոցա հետեւեալն՝

“Յանուն Աստուծոյ ամենագթառերի եւ ամենաաղորմածի. ահաւասիկ այս պայմանները շնորհեց ի. Արդուլլահ Մուզանի՛ որ Կովկասի լեռներում բնակչաց. ապահովութիւն նոցա կենաց, ընչեց, կրօնին եւ դաւանութեան այն պայմանով, որ ամեն մի չափահաս մի գենար կամ նորա արժեքը վճարէ. գուք պարտաւոր էք մուսլիմին նոիրել ձեր մասերմական խորհուրդը, նորան ուղեցոյց ծառայել եւ հիւրբնկալել մի օր եւ մի գիշեր. իսկ գուք կը վայելէք ապահովութիւն, մինչեւ այս պայմաններն կը կատարէք եւ հաւատարիմ կը մեռք, մենք եւս մեր խօսրին կը մեանք հաստատ. Աստւած օգնական. բայց եթէ գուք այս պայմանները դրժեք եւ որ եւ է նենգութիւն երեւան հանեք, այն ժամանակ չկայ ձեզ ապահովութիւն, բայց միայն եթէ մատնեք բոլոր անհաւատարիմներին, ապա թէ ոչ գուք նոցա համամիտ կը ճանաչէիք: Վկայ են՝ Ըամիմախ ի. Դիրար, Առուսարիս ի. Զունադիր եւ Համալայ ի. Զուվայայ. գրեցաւ 21 թ.,”:

(2674 – 75:) Մուավիայի ժամանակ Հայաստանի բնակիչք ապստամբեցան. Հարիր ի. Մասլամայ՝ որ Դարբանդի կառավարիչն էր եւ այս ժամանակ Արաց երկրում կը գտանէր, գրեց թուղթ Տփղիսի (այս քաղաքը Կովկասի լեռներում է) բնակչաց. ապա պատերազմնեցաւ նոցա հետ, մինչեւ նոքա հնազանդեցան եւ ստացան նորանից ներումն. երկու կողմից կայացաւ գրաւոր համաձայնութիւն, որից յետոյ Հարիր գրեց հետեւեալն.

“Յանուն Աստուծոյ ամենագթառերի եւ ամենաաղորմածի. Հարիր ի. Մասլամայից առ Տփղիսի՝ Արաց Հորմնուղ երկրի՝ բնակիչք ողջոյն. ձեր վերաբերմամբ ես կը փառաւորեմ Աստւած, բացի որից չկայ մի այլ աստւած: Մեզ մօտ եկաւ

ձեր պատգամաւոր Տուֆլին¹, մեզ ծանուցեց ձեր
խոսքը, յանձնեց այն ինչ որ դուք ուղարկած էք
եւ յայտնեց ձեր կողմից ձեր կարծիքը, թէ մենք
ազդ չենք· յիրաւի այսպէս էինք մենք, մինչեւ
հզօրն եւ բարձրեալն Աստւած մեզ Ուշհամմեդի
ձեռօք ուղիղ ճանապարհով տարաւ եւ իսլամի
շնորհիւ մեզ ոչնչութիւնից, ստորութիւնից եւ
տղիտութիւնից յետոյ զօրացուց։ Ապա Տուֆլին
հաղորդեց, որ դուք մեզ հետ խաղաղութիւն կը
ցանկաք. ես եւ հաւատացեալք, որ ինձ հետ են,
ոչինչ շունինք դորա գէմ. ես ուղարկում եմ
Արգուլաւհման Ի. Զազ Սուլամիին, որ մեր
աստւածաբաններից եւ Ղուրանագէտներից ամե-
նակատարեալն է. նորա հետ միտսին կը գնեմ ձեր
ապահովութեան վերաբերեալ թուղթը. եթէ
հածիք՝ նա ձեզ կը յանձնէ, իսկ եթէ չընդունէք,
նա ձեզ բացէիբաց պատերազմ^է յայտնելու, որով-
հետեւ Աստւած չի սիրէ անհաւատարիմեներին։²

"Յանուն Աստւածոյ ամենագթառէրի եւ
ամենաողջրմածի. այս է Հարիր Ի. Մասլամայի
Տփղիսի³ Արաց Հորմուզ Երկրի⁴ բնակչաց նւիրած
թուղթը՝ յապահովութիւն ձեր կենաց, ընչից,
վանօրէից, եկեղեցեաց եւ աղօթ ատեղերի այն
պայմանով, որ դուք հպատակիք եւ ամեն ընտա-
նիք ամբողջապէս մի գենար գլխահարկ վճարէ.
դուք պարտաւոր էք մեզ նւիրել ձեր մտերմական
խորհուրդը եւ օգնութիւնն Աստւածոյ եւ մեր
թշնամեաց գէմ, հիւրընկալել ճանապարհորդին
այն ուտելիքներով եւ խմիչքներով, որ ներեալ
են Գրքի հետեւողներին, նորան ուղեցոյց ծա-
ռայել՝ առանց որ եւ է վեսափ ձեզանից մէկին,
եթէ իսլամ ընդունէք, աղօթք անէք եւ աղքա-

¹ : ² : ³ : ⁴ : ⁵ : ⁶ :

ثεόφιλος. φίλι θεόφιλος. φίλι θεόφιλος.

θεόφιλος. φίλι θεόφιλος. φίλι θεόφιλος.

տաց ողորմութիւն տաք՝ դուք մեր եղբայրներն էք կրօնի մէջ եւ մեր հովանաւորութիւնն կը վայելէք։ Ավ իւր երեսը Աստրծուց, նորա մարգարեից, նորա դռքերից եւ նորա ժողովոդից դարձնէ, մենք նորան բացէիրաց պատերազմ՝ կը յայտաբարենք, որովհ հետեւ Աստած չի սիրէ անհաւատարիմներին։ Ակայ են՝ Արդուլուահման ի. Խալիդ, Հաջջաջ եւ Կյադ, գրեց Ռաբահ։ Ես վկայ կը կոչեմ Աստրծուն, նորա հրեշտակները եւ հաւատացեալներին։ Աստած իրրեւ վկայ բաւական է ու։

(2804) 24 թ. Ա. ալիդ Ի. Օքբոյ արշաւեց Ատրպատականի եւ Հայոց վերայ, որովհետեւ բնակիչք խզեցին խաղաղութեան պայմանները, որ նոքա հաստատել էին Օմարի ժամանակ իսլամականների հետ։ Այսպէս կ'աւանդէ Արի Միհնավի, իսկ ըստ այլոց՝ այս արշաւանքը տեղի ունեցաւ 26 թ.

Նիշամ Ի. Մուհամմեդ կը պատմէ ըստ աւանդութեան Արի Միհնավի, թէ Ա. ալիդ Ի. Օքբոյ (որ ամիրապետ Օսմանի ժամանակ կուֆայի կառավարիչն էր) արշաւեց Ատրպատականի եւ Հայոց վերայ. իւր մօտ կոչելով Սալման Ի. Ռաբիայ Բահլիին, նա ուղարկեց նորան իւր առաջապահ գնդի հետ, իսկ ինքն ամբողջ զօրքով առաջ ընթացաւ եւ մտաւ Ատրպատական, ի նկատի ունենալով անցնել Հայաստան։ Նորա հրամանով Արդուլուահ Ի. Շուրայլ Ի. Աֆվ Ահմասի 4000 զօրքով ասպատակեց Մուշան, Բաբար¹ եւ Թայյլասան, վնասեց բնակչաց գոյքին եւ աւարի առաջ։ Ժողովուրդը թագնւեցաւ նորանից, իսկ նա դերեց նոցանից շատերին եւ եկաւ Վալիդ Ի. Օքբոյի մօտ. վերջինս խաղաղութիւն կապեց Ատրպատականի բնակչաց հետ՝ 800.000 դրամ վճարելու։

¹ Jakut ա. մէ յ. յ.՝ Տարթ (I, 174) գրութիւնն, որ ա. ելի՛ հաւանական կը թէ ուի։

պայմանով, համաձայն նորա եւ նուզայֆայ ի. Խամանի մէջ 22 թ. տեղի ունեցած դաշնագրութեանն երբ Արդուլահ ի. Շուրայլ իւր աւարառութիւնից անվնաս վերադարձաւ, Վալիդ սուլարկեց 24 թ. Սալման ի. Ռարիայ Բահլիին 12.000 զօրքով Հայք, որ կաղապտեց, սպանեց, գերեց եւ վերադարձաւ աւարով Վալիսի մօտ:

Տարարի:

24 թ. Օսման հրամայեց Մասվիային՝ ուղարկել Հարիր ի. Մասլամային Ռոորիքի ժողովրդի հետ Հայաստան. Մասվիայ կատարեց նորա հրամանն Հարիր՝ լուր ոռնելով, որ յոյն Մավրիանը 80.000 յոյն եւ թուրք զօրքով նորա դէմ է գալիս, դրեց այս բանի մասին Մոռավիային, սա տեղեկացրեց Օսմանին, իսկ Օսման գրեց Սայիդ ի. Ալասին, հրամայելով նորան օգնել Հարիր ի. Մասլամային. Սայիդ ուղարկեց Սալման ի. Ռարիային 6000 մարդ:

31 թ. Հարիր ի. Մասլամայ Ֆիհրի նւաճեց Հայաստան՝ ըստ Վակիդիի աւանդութեան:

32 թ. Սայիդ ի. Ալաս Նշանակեց Սալման ի. Ռարիային Բալտնջարի սահմանադրիսի վերայ, տալով նորան օգնուկից գունդ Հուզայֆայի առաջնորդութեամբ եւ մի այլ գունդ Ռոորիքի ժողովրդից բազկացած՝ Հարիր ի. Մասլամայ Ֆիհրի հրամանատարութեան ներքոյ:

Օսման գրեց Սայիդին՝ ուղարկել Սալմանին Բար (Դարրանդ), իսկ Արդուլահման ի. Ռարիային (որ Բարի հանգեստ կը զտանւէր) հրամայեց այնտեղից հեռանալ. սակայն նա չհեռացաւ Բալանջարից, այլ Օսմանի ամիրապետութեան թ. թւին եկաւ պաշարեց Բալանջար, քաղաքի առջեւ դնելով մ-ջ-ն-է+ եւ -ր-ր-ր-ր (քարանեա) մեքենաները, այնպէս որ ոչ ոք չէր կարող մօտենալ առանց վնասւելու կամ սպանելու: Թուրքերի

նշանակած օրը Բալանջարի բնակիչնք դուրս եկան քաղաքից, որոնց հետ միանալով թուրքերը ճակատեցան. Արդուլուահման ի. Ռարիայ, որ Զ-Հ-Ն-Ր կը կոչւէր, սպանեցաւ, իսկ մուսլիմները փախտեամբ ցրւեցան զանազան կողմեր:

66թ. Մուխտար գրեց Արդուլահ ի. Հարազին կառավարիչ Հայաստանի վերայ:

67թ. Մոսար ուղարկեց Մոհալար ի. Արու Սաֆարին կառավարիչ Մաւսիլի, Միջագետի, Ատրպատականի եւ Հայաստանի վերայ:

73թ. Օսման ի. Վալիդ չորս հազար զօրքով յարձակեցաւ Յունաց վերայ Հայաստանի սահմաններում եւ՝ թէեւ Յոյները 60.000 էին հալածեց նոցա եւ կոտորեց նոցանից մեծ բազմութիւն:

81թ. Արդուլմալիք ուղարկեց իւր որդի Օբայդալահին, որ առաւ Կարին:

90թ. Մասլամայ ի. Արդուլմալիք արշաւեց թուրքերի վերայ եւ՝ հասնելով Բար Ատրպատականի նահանգում՝ առաւ երկրի բերդերը եւ քաղաքները: Նոյն արշաւանքն նա կրկնեց հետեւեալ տարի:

90թ. Արբատ ի. Վալիդ ասպատակեց Յունաց երկիրը, հասնելով միշտեւ Արզն:

98թ. Սուլէյման արշաւեց Յունաստան եւ բանակեցաւ Դարիկում,¹ առաջ ուղարկելով Մասլամային. Յոյները՝ ահաբեկ լինելով՝ հեռացան Հայաստանից:

99թ. Թուրքերը արշաւեցին Ատրպատական եւ սպանեցին մուսլիմներից մեծ բազմութիւն:

102թ. Օմար ի. Հուրայր յարձակեցաւ Յունաց վերայ Հայաստանի սահմաններում, հալածեց նոցա եւ գերեց նոցանից մեծ բազմութիւն:

104թ. Զարրահ ի. Արդուլահ Հակամի՝ Հայաստանի եւ Ատրպատականի կուսակալը՝ ար-

¹ Բայ յակուտ-ի Հալեբից ու Հեռի:

շաւեց թուրքաց երկիրը, նւաճեց բալանջար եւ
նորա ամրոցները, հալածեց թուրքերին եւ նետեց
նոցա ծովը, գաղթեցնելով բնակիչների մի մասը:

105թ. Զարրահ արշաւեց Ալանաց վերայ,
հասնելով մինչեւ Բալանջարի մօտ գտանւող
քաղաքները եւ բերդերը, որոնցից մի քանիսը նա
նւաճեց եւ գաղթեցրեց բնակիչների մի մասը:

106թ. Հաջջաջ ի. Արդուլմալիք արշաւեց
Ալանաց վերայ, որոնք հպատակեցան նորան հարկ
տալու հիման վերայ:

110թ. Մասլամայ ի. Արդուլմալիք արշաւեց
թուրքերի վերայ: Անցնելով Ալանաց Դռնից, նա
պատահեցաւ խաքանին եւ՝ շնորհելով նորա զօրքի
բաղմութեանն՝ պատերազմեցաւ նորա հետ դրեթէ
մի ամիս. Ասուած ի փախուստ գարձրեց խա-
քանին:

111թ. Թուրքերը արշաւեցին Ասրպատա-
կան, սակայն Հարազ ի. Ամր յետ մղեց նոցա:

111թ. Հիշամ նշանակեց Զարրահ ի.
Արդուլահ Հակամիին կառավարիչ Հայաստանի
վերայ:

112թ. Թուրքերը ներս խուժեցին Ալանաց
Դռնից: Զարրահ ի. Արդուլահ Հակամի Ասորիքի
եւ Ասրպատականի ժողովրդից բաղկացած գնդով՝
թէեւ թւով ոչ լիակազմ՝ ճակատեցաւ նոցա հետ
եւ նահատակեցաւ իւրայիններով Արտաւիլի գաշ-
տում: Նորա տեղ կառավարեց նորա եղբայր
Հաջջաջ ի. Արդուլահ Հայաստանի վերայ:

113թ. Մասլամայ ի. Արդուլմալիք նւաճեց
խաքանի իշխանութեան տակ գտանւող քաղաք-
ները եւ բերդերը, սմանց սպանեց, սմանց
գերեց:

115թ. Հիշամ դրեց Մըրուան ի. Մո-
համմեդին կառավարիչ Հայաստանի եւ Ասրպատա-
կանի վերայ:

17թ. Մըըուան ի. Մուհամմեդ, Հայաստանի կուսակալը, ուղարկեց մի զօրագունդ Ալանաց երկիրը, որ առաւ երեք բերդեր, եւ մի այլ՝ Տումանչահի երկիրը, որի բնակիչը հնագանդեցան:

132թ. Խառանի բնակիչը խուռն բազմաթեամբ քարկոծ եցին Ապյիի ի. Հիշամին, Սուրահիլ ի. Մասլամայ ի. Արդուլմալիքին, Արդուլմալիք ի. Բիշը Տաղաբիին եւ Զորբորդ Հոյոց իշխան Կուշանին:¹

132թ. Արու Արբաս դրեց իւր եղբայր Արու Զավարին Միջազետքի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ կուսակալ:

132թ. Միջազետք, Հայաստան եւ Ատրպատական կը կառավարէր Արդուլահ ի. Մուհամմեդ:²

133թ. Հայաստանի կառավարիչն էր Աալհ. ի. Առւրայհ:

134թ. Զավար հեռացրեց Աալհ ի. Առւրայհին իւր պաշտօնից եւ նորա տեղ նշանակեց Եղեղ ի. Առայդին:

135թ. Հայաստան կը կառավարէր Եղեղ ի. Առայդ:

137թ. Հայաստանի կառավարիչն էր Հասան ի. Քահթար:

145թ. Քար-Էլ-արւարի թուրքերը եւ Խաղարները արշաւեցին Քարից Հայաստան եւ կոտորեցին մուսլիմներից մեծ բազմութիւն:

147թ. Աստարիսան Խուռարազմին արշաւեց թուրքերի բազմութեամբ Հայաստանի սահմաններում ապրող մուսլիմների վերայ, գերեց նոցանից եւ քրիստոնեաներից մեծ բազմութիւն, մտաւ Տփղիս եւ սպանեց Հարբ ի. Արդուլահ Առավանդիին:

¹ Թերեւա պատահն ան ան արքաւազութեան է:

² Զավարի ողնական Փոխիառավարիցը:

148թ . Մանսուր ամիրապետը ուղարկեց Հումիդ ի . Քահիթարին Հայաստան պատերազմելու թուրքերի հետ , որոնք սպանել էին Հարրի . Արդուլահին եւ աւերել Տփղիս . ի . Քահիթաց եկաւ Հայաստան եւ վերսոյ հասաւ այն ժամանակ , երբ թուրքերը իրանց ուղանելը կը բառնային , եւ որի մատնեց բոլորին :

153թ . Մանսուր գրեց Հայաստանի վերայ Բակեար ի . Մուսլիմ Օքայլին կառավարիչ :

158թ . Հայաստանի կառավարիչը գրեց Մանսուրին , որ զօրքը խռովել է նորա գէմ , ջարդել գանձարանի գրանց փականքները եւ յափշտակել , ինչ որ այնտեղ կար . Մանսուր իւր պատասխանի մէջ հետեւեալ դատաստանն արեց՝ թող մեր յանդիմանութեան արժանի կառավարիչը հեռանայ պաշտօնից . եթէ գու խելօք լինէիր , զօրքը չէր խռովի , եւ եթէ գու թոյլ չդատանւէիր , նա չէր կողոպտէ գանձարանը :

163թ . Մահգին գրեց իւր որդի Հարունին կուսակալ ամբողջ Մաղրիբի , Ատրպատականի եւ Հայաստանի վերայ , նշանակելով հարկերի վերայ վերակացու Զարիս ի . Մուսային , իսկ գործեր վարելու օգնական՝ Եահեայ ի . Խալիդ ի . Բարմակին :

163թ . Արդուլկարիր ի . Արդուլհամիդ ի . Արդուլուահման ի . Զէյյդ ի . Խալթթար արշաւեց Հագաղի գոնից :¹ Նորա գէմ ելաւ Միքայել պատրիկը 9000 զօրքով , որի մէջ էր եւ Թաղազար հայ իշխանը . Արդուլկարիր՝ զգալով իւր նւազութիւնն՝ խոյս աւեց կուից եւ վերադարձաւ , Մահգին կամենում էր նորա զլուխը հատանել

¹ Հակոբ կ'անունէ բերդուաղաք Մալովիայի եւ Մարտիկ մէջ :

* Այլ ձեռագիր ունի թարազ (ձարա) ձև , որ թերեւ թորոս անուան աղաւաղաւ է :

բոյց՝ զիջանելով նորա թախանձանքին՝ պահեց նորան բանտում:

172թ. Հարուն Ռաշիդ յետ կոչեց Եղիդ ի. Մազեադին Հայաստանից եւ նորա տեղ գրեց Օբայդալահ ի. Մահմիդին:

176թ. Հարուն նշանակեց Ֆադլ ի. Եահային կուսակալ Զարալի, Տաբարիստանի, Դմբաւենդի, Կումիսի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ:

182թ. Ֆադլ ի. Եահայ կութեան առաւ խաքանի՝ Խազարաց թագաւորի՝ գուստը, որը սակայն մեռաւ Պարտաւում: Նոյն ժամանակ Հայաստանի կառավարիչն էր Սայիդ ի. Սալմ ի. Քուայրայ Բահլի:

184թ. Խազարք արշաւեցին խաքանի գստեր պատճառով Բաբ - Էլ - արւարից, յարձակեցան (Հայաստանի սահմաններում ազրող) մուսլիմների եւ քրիստոնեաների վերայ եւ գերեցին նոցանից աւելի քան ինչպէս պատմում են՝ 100.000 մարդ, երկրին հասուցանելով այնպիսի ազէտներ որոց նմանը իսլամութեան (պատմութեան) մէջ տակաւին լուած չէր: Ռաշիդ գրեց Հայաստանի եւ Ատրպատականի վերայ Եղիդ ի. Մազեադին կառավարիչ, տալով նորան ուժեղ զօրք, իսկ խուզայմայ ի. Խազիմին ուղարկեց Մծբին՝ Հայաստանի բնակիչներին օգնութեան:

185թ. Եղիդ ի. Մազեադ վախճանեցաւ Պարտաւում: Հարուն նշանակեց նորա տեղ Ասադ ի. Եղիդին:

205թ. Մամուն ամիրապետը գրեց Խսայ ի. Մուհամմեդ ի. Աբուխալիդին կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ, որ պատերազմեցաւ Բաբեկի հետ:

209թ. Մամուն նշանակեց Սադաքայ ի. Ալի Մարուֆ Բազուրարին կառավարիչ Հայաս-

տանի եւ Ատրպատականի վերայ, որ պատերազմցաւ Բարեկի հետ:

222թ.: Օշին՝ իմանալով, որ Բարեկ իւրայիններով փախել է (Հայաստան), տեղեկացրեց Հայոց իշխաններին եւ մեծամեծներին, թէ Բարեկ փախստեամբ եկել է Հայաստանի գաւառներից մէկը, նոցա անմիջապէս կից, եւ հրամայեց նոցանից ամեն մէկին հսկել իւր գաւառի վերայ, չժթողնել ոչ ոքի անցնել, այլ եկողին ձերբակալել եւ նորան տեղեկացնել այդ բանի մասին։ Բարեկ մտաւ Հայոց լեռները, առանց ծանօթ լինելու տեղի հետ, մինչ բոլոր հայ իշխանները հսկում էին իրանց գաւառների ճանապարհների վերայ։ Եթէ մէկը անցնելու լինի, բանեն նորան։ Առհել ի։ Սմբատ որ լեռներումն էր, (լուր առնելով Բարեկի թագստեան տեղի մասին), շտապեց իւր զօրագնդով նորա մօտ եւ ասաց նորան՝ “Ե՞կ ինձ հետ իմ ամրոցը, որ քեզ ապաստան կը լինի, իսկ ես՝ քո ծառան։ մնացիր այնտեղ քո ուղեկիցների հետ, ապա կ'մտածես քո անելիքը։” Բարեկ համաձայնեցաւ այն պայմանով, որ նա իւր եղբօրը ուղարկէ ի։ Ատեփաննոսի ամրոցը, իսկ ինքն գնաց ի։ Սմբատի հետ նորա ամրոցը։ Հետեւեալ առաւօտ Աբդուլլահ մտաւ ի։ Ատեփաննոսի ամրոցը, իսկ Բարեկ մնաց ի։ Սմբատի մօտ։ Աշրջինս իմացրեց Օշինին, թէ Բարեկ գտանելում է նորա գղեակում ողջանդամ։ Օշին ուղարկեց Աբու Ասյիդին եւ Բուղբարին ի։ Սմբատի մօտ, տալով նոցա մի նամակ առ նա եւ հրամայելով նոցա, որ յանձնեն այդ նամակը ի։ Սմբատին տեղացիներից մէկի հետ եւ շհակառակեն նորա խորհրդին, որ նա նոցա կը տայ։ Նորա կատարեցին նորա հրամանը։

1 Այս ընդորձակ հատածածը թարգմանում եմ՝ քաջուածորէն, որտեղ նա Հայոց պատմաւթեան հետ կազ ունի։

Ի. Սմբատ առաջ Բարեկին։ «Տեղս ախորժելի է, իսկ ամրոցի օդը քեզ համար ծանր է. գնանք առաւտեան ժամին որսին՝ Բարեկ պատասխանեց»։ «Եթէ քեզ հաճոյ է, պատրաստութիւն տես, որ առաւտ զնանք»։ Ի. Սմբատ տեղեկացրեց Սայիդին եւ Քուղարին իւր որոշման մասին եւ Հրամայեց, որ նոցանից մէկը գարան մտնի լեռների այս ինչ տեղում, իսկ միւրը՝ այս ինչ տեղում՝ իրանց զօրագնդով։ Երբ ի. Սմբատ եւ Բարեկ առաւտեան գնացին (որսի), ի. Սմբատ ուղարկեց մի սուրհանդակ Սայիդի եւ մի այլ սուրհանդակ Քուղարի մօտ, որոնք նոցա հետ միասին եկան այն տեղը, ուր գտանւում էին Բարեկ եւ ի. Սմբատ, զննեցին Բարեկին, ցած իջան եւ՝ պահելով մէկը նորա մի կողմը, միւրը՝ նորա միւս կողմը ձերբակալեցին նորան։

Իսկ Աբգուլահ՝ Բարեկի եղբայրը՝ գնաց Խայ ի. Խւսուփ ի. Ստեփաննոսի մօտ։ Երբ Օշին ձերբակալեց Բարեկին եւ նորա մարդիկը, նա սկսեց պտրել Աբգուլահի թագստեան տեղը եւ իմանալով, որ նա ի. Ստեփաննոսի մօտ է, գրեց նորան, որ նա ուղարկէ Աբգուլահին իւր մօտ։ Ի. Ստեփաննոս կատարեց նորա Հրամանն, եւ Օշին բանտարկեց նորան Բարեկի հետ մի տան մէջ, Հրամայելով պահապաններին հսկել նոցա վերայ, իսկ ինքն տեղեկացրեց Մուտասիմ ամբապետին եղելութեան մասին։

235թ. Մուտավակիկիլ յանձնեց իւր որդի Մուտազզին խորասան, Տաբարիստան, Ուայ, Հայաստան, Ատրպատական եւ Քարս։

236թ. մեռաւ Աբու Սայիդ Մուհամմեդ ի. Խւսուփ՝ Հայաստանի եւ Արպատականի կառավարիչը։ Մուտավակիկիլ գրեց Խւսուփին նորա հօրիշխած հպատակ երկրների վերայ, ապա նշանակելով նորան հարկերի եւ հողերի վերայ։ Խւսուփ

գնաց իւր գաւառը եւ սկսեց կառավարել, ուղարկելով իւր օգնականներին երկրի բոլոր կողմերը:

Հայերի յարձակումն իւսուփի ի. Մուհամմեդի վերայ:

Հայերի յարձակման պատճառը հետեւեալն էր: Երբ իւսուփ գնաց Հայաստան իւր գաւառը, նորա մօտ եկաւ Բագրատ ի. Աշոտ, որ իշխանաց իշխան կը կոչւեր, եւ խնդրեց նորան՝ հաստատել նորան իշխանութեան մէջ. բայց իւսուփ ձերբակալեց նորան եւ կապանքների մէջ ուղարկեց ամիրապետի գուռը, ուր Բագրատ իւր որդու հետ բնդունեց իսլամութիւն: Այն ժամանակ Բագրատ ի. Աշոտի եղբօր որդին եւ Հայ իշխանք դաշն կապեցին իւսուփի գէմ:

Չիւն իջաւ եւ ծածկեց Տարօն քաղաքը, ուր կը դտանւէր իւսուփ. երբ ձիւնը դադարեց, Հայերը բոլոր կողմերից եկան եւ պաշարեցին իւսուփին եւ նորա մարդիկը քաղաքում: Իւսուփ գնաց քաղաքի գուռը եւ այնտեղ տեղի ունեցած կաւում սպանեցաւ իւր բոլոր ուազմիկներով Հանգերձ: Նորան, ով կուրին չէր մասնակցում, Հայերը առում էին: «Հանիր զգեստերդ եւ ապրիր մերկու Շատերը նոցանից հանեցին իրանց զգեստները եւ սպրեցան մերկ եւ բորիկ, ոմանք մեռան ցրտից, ոմանց մատերը ընկան, եւ ապրեցան:

Երբ իւսուփ ուղարկեց Բագրատ ի. Աշոտին, Հայ իշխանք դաշն կապեցին եւ երդւեցան արեամբ՝ սպանել իւսուփին: Նոցա հետ համաձայնեցաւ եւ Մուսայ ի. Զուրար, որ ամուսնացած էր Բագրատ: Գատեր հետ: Խոկ Սաւագ ի. Արդուլհամբիդ Զահհամբին հակառակ էր, որ իւսուփ ի. Արև Սայիդ այնտեղ մնայ եւ իմացրեց նորան իշխաններից նորան հասած լուրերի մասին: սակայն իւսուփ շանսաց: Առամսողան ամսին եկան Հայերը եւ

պատեցին քաղաքի պարիսպները։ Զիւնը տասը կանգունի շափ կը ծածկէր քաղաքի բոլոր շթջակը, Խլաթ, Դուին եւ ամբողջ աշխարհը։ Սորանից առաջ իւսուփի ուղարկել էր իւր մարդիկը իւր գաւառի գիւղերը։ Երբ սոքա խումբ խումբ ցրւած էին զանազան կողմեր, նոցա վերայ յարձակեցան հայ իշխանք խուժանի բազմութեան հետ եւ կոտորեցին նոցա մի օրւայ ընթացքում։ Երբ Հայերը մի քանի օր շարունակ պաշարեցին քաղաքը, իւսուփի նոցա գէմ ելաւ եւ ճակատեցաւ, մինչեւ որ սպանեցաւ։

Մուտավակիկիլ ուղարկեց Բուզայ Շարարիին Հայաստան՝ իւսուփի արեան վրէժը զնելու համար. մտնելով Հայաստան Միջագետքից, նա նախ ձերբակալեց Արզնում Մուսայ ի. Զուրարին (Նորա եղբայրներն էին՝ Խամայէլ, Սուլէյման, Ահմեդ, Խասյ, Մուհամեդ եւ Հարուն) եւ ուղարկեց նորան ամիրապետի գուռը. իսկ ինքն բանակեցաւ Խոյթի յեռներում։ Խոյթեցիք Հայաստանի այն բնակիչներնեն, որոնք սպանեցին իւսուփի ի. Մուհամեդին. Բուզայ պատերազմեցաւ նոցա հետ, յաղթեց, սպանեց նոցանից 30.000, գերեց նոցանից մեծ բազմութիւն եւ բնակեցրեց Հայաստանի զանազան մասերում։ Գալով Աղբակ գաւառը (որ Աստպուրականին կը պատկանի) նա գերեց Աղբակի իշխան Աշոտ ի. Համզայ Արտ Արքասին եւ վերաշնեց նախիջեւան։ Ապա եկաւ Դուին, ուր մի ամիս մնալուց յետոյ գնաց Տփղիս։

Բուղան յաղթում է Խամանակ ի, Խսմայէլին եւ այրում Տփղիս։¹

238թ. շաբաթ օրը՝ առաջին Ռարի ամսից 10 օր առաջ՝ Բուզան ուղարկեց Զերակ թուրքին.

¹ Հմման. Թուֆնայ Արծրունի, հրատ. ք., Պատկենանի, Պետերբուրգ, 1887, էջ 172—175։

որ անցաւ կուր գետը։ Այս գետը Բաղդադի Ասրայ գետին հաւասարման է, և անցնում է քաղաքի միջից, այնպէս որ Տփղիս նորա արեւմուեան, իսկ Սուզդարքի նորա արեւելեան կողմե է մնում։ Բուզայ բանակեցաւ արեւելեան ափում։ Զիրակ՝ անցնելով կուրը մտաւ Տփղիսի հայտնաշու, Քաղաքը ունի հինգ գուռ, որոնք են՝ Մայդանի գուռ, Հին գուռ։ Փոքր գուռ, Միջին գուռ և Սուզդարքի գուռ. Բուզան ապա ուղարկեց քրիստոնեայ Արու Արքան Ապղիին¹ հայ բնակիչների մէջ ապրող արարների եւ պարսիկների մօտ։ Երբ Զիրակ հասաւ Մայդանի մօտ, իսկ Արու Արքան Միջին գուռը, խահակի ի. Խամայէլ եկաւ Զիրակին բնդգէմ եւ կռւի հրաւիրեց նորան։ Բուզան բարձրացաւ մի բլուրի վերայ, որ քաղաքի հանդէպ Սուզդարքի մօտ կը գտանէր, տեսնելու համար, թէ ինչ են անելու Զիրակ եւ Արու Արքան. ապա նա ուղարկեց նավթակիրներ, որոնք՝ վառելով կուպրը՝ նետեցին քաղաքի մէջ. կուպրից քամին սառտկացաւ։ Խահակի ի. Խամայէլ վերադարձաւ քաղաք տեսնելու հրդեհը, որ պատել էր նորա պալատը եւ շրջակայ շինութիւնները. այս ժամանակ նորա վերայ յարձակեցան թուրքերը եւ Մուղարիքացիք (Ափրիկեցիք), գերեցին նորան իւր որդի Օմարի հետ եւ բերեցին Բուզայի մօտ, որ հրամայեց տանել նորան եւ կապանքների մէջ զլիստել Հասակ գուան հանդէպ.² Նորա գլուխը

¹ "Եշին Մայդան" կուր գետին կից բաժանում է ներկայում մա հայ եւ թուրք թաղերը քաղաքի հարաւարեւելու մասում։

² Այլ որինակներ անին՝ Ապրագի կամ Ապրէի Ապրատի, Քարազի (الوارني, الوارني, القارني)։ Հաս մեր պատմագրի Արու Արքան նոյն անձաւ որութիւնն է, որ հաստածիս վերջում իիւում է Ամրատի ի. Աշուա անձամբ։

³ Հաս թուզայ Արծրունոյ՝ Սահակ որդի Խամայէլի իւրըն իւր կամքը գնաց Բուզայի մօտ միրարի առաջնորդութեամբ։

բերեցին Բուղալիին եւ ապա դրեցին Հասակ գուան
վերայ, իսկ մարմինը նետեցին Կուր գետը: Կա մի
ծերունի էր փոքր հասակով, գեր, մեծ զլիսով, որ
կը ներկէր մուգագոյն Հ-Ե-Յ-Ա-Լ. Նորա դլիստման
վերայ հսկողն էր Ղամեշ, Բուղալի փոխանորդը:
Քաղաքում այրեցան մոտ 5000 մարդ, որովհետեւ
հրդեհը կուպրի անդադար վառելուց օր եւ զիշեր
կը շարունակւէր: Առաւօտեան եկան Մուղարիբացիք
եւ գուրս բերեցին, ով գեռ կենդանի էր, իսկ
մռածների հանդերձները հանեցին: Խառհակի
կինը, որ Սարիբի իշխանի գուստըն էր, մնացել էր
Առղդաբիլում, որ Տփղիսի արեւելեան կողմն է
գտանւում: Այս քաղաքը շնուել է Անուշիրուան
թագաւորը, իսկ Խառհակ ամրացրել էր, նոր...
շուրջը փռս փորել եւ քաղաքի մէջ դրել Խու-
թեցիներից եւ այլոց պահակ զօքը: Բուղան
շնորհեց բնակիհներին ներումն այն պայմանով, որ
նոքա իբանց զէնքերը վայր դնեն եւ զնան, ուր
կամենան:

Ապա Բուղան ուղարկեց Զիրակին քաղ-
մաթիւ զօքըով Գարդման ամրոցը (որ գտանւում
է Տփղիսի եւ Պարտաւի մէջ). Զիրակ առաւ
ամրոցը, գերեց նորա իշխան Կարիչին: Եւ բերեց
նորան (զլիստոր) բանակը: Ինքն Բուղան ար-
շաւեց Խառյ ի. Խոսուփի, Առեփաննոսի քրոջ
որդու վերայ, որ գտանւում էր Փայտակարանի
Քթիշ՝ ամրոցում (նորա եւ Փայտակարանի մէջ
տասը, իսկ նորա եւ Պարտաւի մէջ յիսուն
փարսախի է). Բուղան պատերազմեցաւ իշխանի
հետ, առաւ ամրոցը, ձերբակալեց եւ գերեց

¹ Բնագրում՝ Քիմշէն (կոթու):

² Բնագրի կետադրութիւններ ունենալու միաւ է. գու-
խանակ Ակազիշ, (կիշ) կարգակու և Ակակշ (կիշ).
Հմայ. Թովմայ Արծրունի էջ 178 (Քթիշ):

Նորան, նորա որդուն, հօրը, եւս Արու Արբան վազիին, որի անունն էր Ամբատ ի. Աշոտ, նորա հեռ միասին Աղուանից իշխան Մուտիայ ի. Առաջ ի. Ամբատին, նաեւ Արքներուն ի. Խաչակի Խաչանիին:

238, 239, 240թթ. Ալի ի. Խաչեայ հայր արշաւեց Յունաց վերայ:

248թ. Ալի ի. Խաչեայ վերադարձաւ Ասորիքի առհմանագլխից եւ Նշանակեցաւ կառավարիչ Հայաստանի եւ Արպատականի վերայ:

249թ. Օմար ի. Օրբյդալլահի սպանումից յետոյ Յոյները եկան Միջագետքի առհմանագլուխը, բաղձալով խլել այստեղ գտանեազ մուսիմների հողերը: Առնելով ոյս լուրը՝ Ալի ի. Խաչեայ (որ Հայաստանից եկել էր Մարտիրոսաց Քաղաքը) նոցա գէմ ելու քաղաքի եւ Ասլաւլայի բնակիչների բազմութեան հետ եւ նահատակեցաւ մատ 400 մարդու հետ ռամադան ամսին:

251թ. Ալոյ ի. Ահմեդ՝ Բուղայ Շարարիի օգնականն՝ զեկուցում գրեց Հայաստանի հարկերի եւ հողերի մասին, պատմելով, ինչ որ պատահել էր (նորա) երկու հարկահանների հետ ոյս գաւառը շրջելիս, որոնց անունները նոյնիշեց. ժողովուրդը յարձակեցաւ նոցա վերայ. ոյնպէս որ նոքա ստիպւած եղան մանել մի ամրոց. բայց ամրոխը գրեց նորա առջեւ. Հ-Ղ-Ա-Ն-Ե- եւ սկսեց նեղել. հարկահանները դուրս եկան ամրոցից փախատեամբ եւ յայտնի չէ, թէ ինչ եղան. իսկ ամրոցը մնաց ապստամբների ձեռքում:

257թ. Մուտամիդ ամբրապեար պատղամաւորներ ուղարկեց Խայ ի. Շայխի մօտ, առաջարկելով նորան հանգիստ կերպով հեռանալ Ասորիքից եւ ստանձնել Հայաստանի վարչութիւնն: Խայ ի. Շայխ համաձայնեցաւ եւ դնաց Ասորիքից Հայաստան:

260թ. սպանեցաւ Ալոյ ի. Ահմեդ Ասրպատականում:

285թ. Մուտագիզ ամիրապետը դրեց Առևիամելեղ ի. Աբու Սաջին կառավարիչ Ասրպատականի եւ Հայաստանի վերայ:

Դ. Եարութի:

Հեղինակի անունն է՝ Ահմեդ ի. արի Եարուր ի. Զաֆար ի. Ալահը ի. Ալաթիչ Արբասի. Նա թոռն էր Ալաթիչի, խալիք Մանսուրի արձակւած ստրուկի, որ կառավարչի պաշտօն վարեց Հայաստանում, Ատրպատականում եւ Եգիպտոսում, լինելով գաղտնի շիհիթ: Նորա թռոն նոյն գաւանութեանն կը պատկանէր, ազրելով մինչեւ 260/873թ. Հայաստանում, ապա Խորբասանում, որտեղից նա անցաւ Հնդկաստան, Եգիպտոս եւ ապա Մաղրիբ: Նորա մահւան թիւը յայտնի չէ:

Թէեւ Եարութիի գործը “Արբասեանների պատմութիւն”, ախտզանն է կրում, սակայն իսկապէս ներկայացնում է տիեզերական պատմութիւններկու համորով, որոնցից առաջինն նախիսլամական ժամանակի, իսկ երկրորդն՝ Ահմեդի եւ Նորա յաջորդների պատմութիւնն մինչեւ 259/872թ. կը պարւնակեն: (De Goeje, Travaux de la 3ème sess. du congr. intern. des orient, Leiden, 1879, II, 153—166. C. Brockelmann, Geschichte d. arab. Literatur, B. II, 226.)

Ազրելով Հայաստանի սահմաններում եւ մօտ շփւելով տեղացիների հետ, որոնցից նա անշուշտ քաղել է իւր պատմական նիւթը, հեղինակ արժանահաւատ ազրիւր կը հանդիսանայ երկրին քաղաքական պատմութեան համար, երբեմն առրերւելով ոյլ արաբացի մատենագրերից, երբեմն հարստացնելով նոցա տեղեկութիւնները

Նոր մանրամասնութիւններով։ ‘Առա գործը լոյս է աեսել հետեւեալ տիտղոսի տակ’ Ibn-Wādhih Al-Jāqubī Historiae, 1. 2. Ed. M. Th. Houtsma. Lugduni, 1883.

Այստեղ առաջ բերւած հաստածանրում կարեւոր համարեցի ի բաց թաղնել այն ամենը, ինչ որ անմիջական կապ չունի Հայաստանի պատմութեան հետ, բացի այն հաստիկուոր տեղեկութիւններոց, որոնք որոշ չափով կը բնորոշեն երկրիս քաղաքական - աշխարհագրական դիրքը շրջակայ իշխանութեանց վերաբերմամբ։

Արդաշիր թագաւորը պատերազմեցաւ պարսից արքայ Արտաւանի հետ, սպանեց նորան և կոչւեցաւ Արդաշիր Շահանշահ։ Ապանա արշաւեց Միջազգեաք, Հայաստան եւ Արքապատական։

Երբ Փաղեղ (որդի Արիրի, որդի Արփաքաստի, որդի Սեմի, որդի Կոյի) բաժանեց երկիրը Կոյի սերնդի մէջ, Ամուրի (որդի Տուրիլի), որդի Ցարեթի, որդի Կոյի սերունդը գաղթեց գեղի հիւսիս - արեւելքը. այստեղ բաժանեցաւ Կառամայի ցեղը, (գնաց) գեղի հիւսիս եւ ատրածւեցաւ (զանազան, երկրներում), Հիմնելով բազմաթիւ տէրութիւններ, որոնք են՝ Բորջան¹, Գիլեմ², Տարար³, Թայլիսան, Գիլան, Ֆիլան, Ալանք, Խաղարք, Ծովգելք եւ Հայք։ Խաղարք կ'իշխէին Հայոց գաւառների վերայ. նոցա թագաւորը խաղան կը կոչւէր, որի սատիկանը՝ Եղիզ Աղարշ (Բալաշ) անւամբ՝ կը կառավարէր Աղուանք, Անք, Ալապօւրական եւ Ախաւական երկրները, որոնք Զարրորդ Հայք կ'անւանէին եւ որո մի ժամանակ նւաճած էր կաւագ պարսից թագաւորը։ Անո-

¹ De Goje (Առյնանեց) կը թարգմանէ Հայութաբարուն

² Տարարիստան։

շիրւան կը տիրէր երկրի վերայ հարիւր փարսազի շափ մինչեւ Ալանաց դուռը, որտեղ կային 360 քաղաքներ. պարսից թագաւորը գրաւեց Բաբելոնարք, Տարարսարան եւ Բալանջար, կառուցեց Կարին եւ այլ բազմաթիւ քաղաքներ, ուր նա պարսիկներ բնակեցրեց: Ապա Խազարք յետ խլեցին այն, ինչ որ պարսիկները նոցանից առել էին. Հայաստան մի առ ժամանակ մեաց նոցա ձեռքում, մինչեւ Յոյները յաղթեցին նոցա եւ դրեցին Զորորդ Հայոց վերայ մարզպան¹ տիտղոսով թագաւոր: Բազմաթիւ (Հայ) իշխանները ցըւեցան իրանց առհմական անառ իկ ամրոցներում եւ գղեակներում:

18 թ. Աբու Օրայդայի ի. Զառուահ ուղարկեց Եյադի ի. Ղանմ Ֆիհրիին Միջադեռք, որ անդադար պաշարմամբ նւաճեց Ռաֆքոյ, Արում, Աւոհայ, Մծրին եւ երկրի այլ քաղաքները՝ առանց պատերազմի, դնելով նոցա վերայ հողահարկ, իսկ իւրաքանչիւր ասրուկի վերայ՝ 4, 5 եւ 6 գենար:

22 թ. Նւաճեցաւ Արապատական Մուղեյրայի ի. Ըստաջնորդութեամբ:

31 թ. Օսման ուղարկեց Հարիր ի. Մասլամայ Ֆիհրիին Հայաստան եւ ապա Սալման ի. Ռաբիայ Բահլիին՝ նորան օգնութեան: Երբ նա եկաւ Հարիրի մատ, երկուսի մէջ վէճ ծագեցաւ պատերազմական փառքի համար. պատճառը հետեւեալն էր. Հարիր ի. Մասլամայ նւաճել էր Հայաստանի մի մասը, երբ Օսման դրեց Սալմանին կառավարիչ երկրի վերայ, որը եկաւ Փայտակարան. բնակիչք դիմաւորեցին նորան եւ խազաղութիւն կապեցին նորա հետ. այնտեղից նա անցաւ Պարտաւ, որի ժողովուրդը հաշտութիւն հաստատեց նորա հետ

1 Լաւագոյն է հարկաւ մարզպանը (Արզիան) քահանարիան (Ալորիան) կարդալ:

յայտնի պայմանների հիման վերայ: Խսկ Հարիբ ի.
Մասլամոյ նւաճեց Ալիքը: Սալման ապա գնաց
Ծարւան, որի իշխանք հնազանդեցան նորան, ոյն-
տեղից անցաւ Մասքտաց երկիրը, որի բնակիչք
նոյնեւերպ վարեցան: Եղին օրինակին հետեւեցին
Լակղիների իշխանն, Ծապարանին եւ Ֆիլանի ժողո-
վուրդը: Խազարաց թագաւոր խաքանը պատահե-
ցաւ Սալմանին բազմաթիւ զօրքով Բալանջար գե-
տի մատ եւ սպանեց նորան եւ 4000 մարդ նորա-
զօրագնդից: Օման նշանակեց Հուզայֆայ ի,
Եման Արսիին կառավարից (Հայաստանի վերայ):
որին ապա արձակեց եւ նորա փոխարէն դրեց Մո-
ղիր ի. Ծորային:

Մուհամմեդ ի. Մըրրուան արշաւեց Հայոտ-
տան, որովհետեւ բնակիչք ապատամբել էին,
(ոմանց) սպանեց, (ոմանց) գերեց: Երկրի իշխանք
եւ աղատանիք աղերսանօք դիմեցին նորան, եւ նո-
ներեց նոցա, խստանալով նոցա (շնորհել) իշխա-
նական աստիճան: Երբ այս առթիւ նորա ժողո-
վեցան Խլաթայ գաւառի եկեղեցիներում, նո-
հրամայեց փայտ կուտել եկեղեցիների շուրջը,
փակել գռները եւ այրել եկեղեցիք, հրոյ ճարակ
առնելով բոլոր բազմութիւնն: Մուհամմեդ ի.
Մըրրուան մնաց Հայաստանում մինչեւ իւր մահը:

102 թ. Օմար ի. Հուրայր պատերազմեցաւ
Յունաց հետ Զորբորդ Հայքում եւ Հալածեց
նոցա, գերելով նոցանից 700 մարդ:

103 թ. Թուրքերը ասպատակեցին Ալանաց
երկիրը. նոցա հետ պատերազմեցան Արդուլուահ-
ման ի. Առևէյման կալրի եւ Օման ի. Հայեան
Մարրի:

104 թ. Եղիդ ուղարկեց Քառուահ ի. Աբ-
գուլլահ Հակամիին Թուրքերի դէմ, որ պատերազ-
մեցաւ նոցա հետ, առաւ Բալանջար եւ գերեց մեծ

բազմութիւն։ Հասնելով Բուրաս՝ գետին, նա շարունակեց իւր ճանապարհը, մինչեւ որ Աղուանից գետի մօտ պատահեցաւ խաքանի՛ խազարաց թագաւորի՝ որդուն, ճակատեցաւ նորա հետ, հալածեց նորան, սպանեց նորա ռազմիկները եւ գերեց մեծ բազմութիւն։ Առնելով Բաղանջար, նա շրջեց զանազան գաւառներ, պարելով խազարաց թագաւոր խաքանին, մինչեւ հասաւ Դուինի գետը Աստրպատական գաւառում։ այստեղ տեղի ունեցած ճակատամարտում սպանեցաւ Զառուահ իւր ամբողջ զօրադնդով հանդերձ։

105թ. Սայիդ ի. Արդուլմալիք ի. Մըրուան ասպատակեց թուրքաց երկիրը, իսկ Զառուահ ի. Արդուլլահ Հակամիարշանց գէպի Ալանաց դուռը, մինչեւ անգամ անցաւ Բարից։

107թ. Հիշամ գրեց Մասլամոյ ի. Արդուլմալիքին կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ, նորա առաջապահ գնդի հետ ուղարկելով Սայիդ ի. Ամր Հարաշիին։ Սայիդ, պատահելով խազարաց զօրքին, որ իւր հետունէր 10,000 գերի մուլիմները, ճակատեցաւ նորա հետ, հալածեց նորան, սպանեց շատերին եւ ազատեց գերի մուլիմներին, տիրելով բազմաթիւ քաղաքների։ սպանեց նաև խաքանի որդուն, որի դլաւիր նա ուղարկեց Հիշամին, առանց Մասլամոյի հաւանութիւնն հարցնելու։ Այս բանը սակայն շարժեց Հիշամի բարկութիւնն, որ յանգիմանական թուղթ գրեց նորան, հեռացրեց նորան պաշտօնից եւ դրեց նորա տեղ Արդուլմալիք ի. Մուօլիմ Օքոյլին, Հրամայելով նորան՝ կապանքների մէջ գնել Յայիդ ի. Ամր Հարաշիին եւ բանատրկել նորան Կապա-

1 Բայս երեսութիւն՝ Արագ (արար-ալ-բաս) անւան ազաւագութեա. Եարդարաւ է - ۱۵-- փախանակ; ۱۶--۱۷-- ալ-رás.

զակ քաղաքում։ Երբ Մասլամայ եկաւ Կապաղակ, հրամայեց իւր մօս բերել Հարաշիին, պախարակեց նորան, պատառեց նորա շքանշանը եւ ուղարկեց նորան Պարտաւի բերդը։ Հիշամ թղթով յանդիմանեց Մասլամայի այս վարժունքը եւ պատգամ ուղարկեց նորա մօս, որ՝ հանելով Ասյիդ ի. Ամր Հարաշիին բանտից, բերեց նորան Հիշամի մօս։

Մասլամայ անցաւ Խաղարաց գաւառները եւ մասւ Աիրք, որ նա նւաճեց, կոտորելով բնակիչներին. այնուհետ եկաւ Ծարուան, որի ժողովուրդը խաղաղութիւն կապեց նորա հետ, որպէս եւ Մասլամի բնակիչք։ Իւր հեծելազօր գունդը նա ուղարկեց Լակզիների երկիրը, որը հնագանդեցաւ նորան, եւ մի այլ գունդ՝ Տարարսարան (Տարարիստան), որն մանապէս հաշտութիւն հաստատեց նորա հետ։ Անցնելով երկրներ, առանց որ եւ է թշնամական գիմազրութեան պատահելու, նա հասաւ Արգան գաւառը, ուր նորան գիմազրեց խաղարաց թագաւոր խաքանը։ Մասլամային կուղեկցելին նևաճած երկրների իշխանք. նա գրեց Մըրուան ի. Մուհամմեդին առաջապահ գնդի վերայ. երկու բանակներ իրարու բախեցան եւ ճակատեցան շարունակ մի քանի օր։

Հիշամ նշանակեց Մասլամայի տեղ Մըրուանի. Մուհամմեդին, որ արշաւեց Սարիրի թագաւորի ամրոցը. այս զահը¹, որ սոկուց էր շինւած, բատաւանդութեան Անուշերուանն էր ուղարկել նորան, որի համար (երկիրը) կոչւեցաւ Սուրէ²։ Իշխանը խաղաղութիւն կապեց Մըրուանի հետ նորան 1500 սեւամազ սարուկ տալու պայմանով։ Այսուղից Մըրուան անցաւ Տումանշահի եւ ապա Զիրիկրանի երկրները, որի իշխանք խաղաղութիւն կապեցին

¹ Սուրէ արար. Քահ կը նշանակէ։ Սորիր էշխանութիւնն կը դասնեւէր ու ծովի հարու-արեւ ելեան ափին։

նորա հետ . գալով Համազին , նու պատերազմեցաւ
ընակիշների հետ եւ սպանեց մեծ բազմութիւն :

109թ . Մասլամայ ի . Արդուլմալիք յարձա-
կեցաւ թուրբաց վերայ , իոլեց նոցանից Ալանայ
գուռը եւ ճակատեցաւ խաքանի հետ :

111թ . Թուրբերը արշաւեցին Արապատա-
կան , ուր Հարազ ի . Ամր Թույ պատերազմեցաւ
նոցա հետ եւ հալածեց նոցա :

112թ . Թուրբերը արշաւեցին Արտաւիլ .
Զառոռահ ի . Արդուլահ դիմաւորեց նոցա եւ կռւի
մէջ սպանեցաւ թուրբաց իշխանից :

117թ . Մըրուան ի . Մուհամմեդ ասպատա-
կեց թուրբաց երկիրը , իսկ 122թ . արշաւեց Հայ-
աստան : 123թ . ասպատակեց Հայաստանի Ֆիլան
եւ Մուղան գաւառները :

126թ . Մըրուան հեռացաւ Հայաստանից .
ոչանակելով երկրի վերայ կառավարիչ Ասիմ ի .
Արդուլահ ի . Եղիդ Հալալիին , իսկ Բար-Էլ-արւարի
վերայ , Խաչակի ի . Մուսլիմ Օքայլին : Ապա ամբողջ
Հայաստան անցաւ Խաչակ ի . Մուսլիմի ձեռքը :

127թ . Մըրուան լուր ստացաւ , որ Զահակ
ի . Քէյս Հարուրի տիրել է Իրակին . այստեղից նո
անցաւ Միջագետք , եկաւ Մոսուլ , ապա Մծբին ,
որտեղ էր Արդուլահ ի . Մըրուան , եւ պաշարեց
քաղաքը : Մուսաֆիր , Խաչակ ի . Մուսլիմի Բարի
վերայ դրած օգնականն , համախոհ էր ապստամբ-
ներին . Զահակ դաշն կապեց նորա հետ Հայաստանի
վերաբերմամբ , որի բնակիչք սպանել էին երկրի
կառավարիչ Ասիմ ի . Արդուլահ ի . Եղիդ Հալա-
լիին , եւ ուղարկեց նորան այնտեղ :

133թ . Արու Արբաս գրեց Մուհամմեդ ի .
Սուլին կառավարիչ Հայաստանի վերայ . որ բազ-
մանեւ զօրքով գնաց այնտեղ : Մուսաֆիրի . կազիր
տիրում էր ամբողջ երկրի վերայ , փոխանակելով
Խաչակ ի . Մուսլիմ Օքայլին . Մըրուանի օգնա-
կանին . Մուհամմեդ ի . Սուլ պատերազմեցաւ նորա

հետ, սպանեց նորան եւ ստանձնեց կառավարչութիւնն երկրի վերայ: Փայտակարանի բնակիչք, թռղւելով քաղաքը, առաջնորդութեամբ Ալարդ ի. Ասֆառն Սամիր (որ Սամ ի. Լիվայի որդիներից մէկն էր) մտան Արևարտ ամրոցը. նոցա հետ միացան զանազան սրիկաներ եւ ուղաք: Մուհամեմեդ ի. Սուլ նոցա գէմ ուղարկեց Սալհ ի. Սարիհ Ախնդիին, որ սպալարեց ամրոցը եւ սպանեց նոցանից մեծ բազմութիւն:

134թ. Արու Արբաս Նշանակեց իւր եղբայր Զաֆարին կուսակալ Միջազետքի, Մառուիլի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ: Զաֆար դրեց Հասան ի. Քահթար Թայիրն Միջազետքի, իսկ Եղիդ ի. Աւայդ Սուլամիին Հայաստանի վերայ. սպա հեռացրեց վերջնին, նորա փոխարէն Նշանակելով Հասան ի. Քահթարին Հայաստանի վերայ:

141թ. Արու Զաֆար դրեց Հայաստանի վերայ Եղիդ ի. Աւայդ Սուլամիին. իսկ Ատրպատականի վերայ՝ Եղիդ ի. Հատիմ Մուհամեդին կառավարիչ: Խազարք արշաւեցին Հայաստան եւ յարձակեցան Եղիդ ի. Աւայդ Սուլամիի վերայ, որը տեղեկացրեց Արու Զաֆարին, թէ Խազարաց թագաւոր Բատ Թարխան մեծ բազմութեամբ նորա վերայ է դալիս, ի փախուստ դարձնելով նորա օգնականին. Արու Զաֆար ուղարկեց նորա մատ Զարրայիլ ի. Եահեայ Բաշալիիին՝ Ասորիքի, Միջազետքի եւ Մառուիլի ժողովրդից բազկացած 20,000 զօրքով: Խազարք յարձակեցան մուսլիմների վերայ եւ կոտորեցին նոցանից մեծ բազմութիւն, մինչ Զարրայիլ եւ Եղիդ ի. Աւայդ փախուստամբ սպրեցան Խիրու: Արու Զաֆար, լուր առնելով, թէ Խազարք յաղթաւթիւն են տարել եւ մտել մուսլիմների երկրները, արձակեց 7000 բանտար-

¹ Հասա Հակոբի ամրոց Հայաստանում: Շասուարանի ձոփի հանգեցու:

կեայներ, բացի այդ գումարեց իւրաքանչիւր գաւառ-
սից մեծ բազմութիւն, նոցա հետ միասին ուղար-
կեց մշակներ եւ վարպետներ եւ վերաշխնել տուեց
կամիս, Մուհամեմեգիայ, Բար Վար, եւ այլ քա-
ղաքներ՝ մուսլիմների պաշտպանութեան համար,
բնակեցնելով այնտեղ զինուորներ, որոնք յետ մղե-
ցին թշնամուն եւ հալածեցին նորան։ Մուսլիմները
դորացան այս քաղաքներում, հաստատելով եր-
կրում։

Ապա Ծանարք արշաւեցին Հայաստան։ Ա-
րու Զավար ուղարկեց Հասան ի. Քահիմարին կա-
ռավարիչ երկրի վերայ, որ պատերազմեցաւ նոցա
հետ. սակայն բաւական զօրեղ չլինելով նա տե-
ղեկացրեց ամիրապետին թշնամու բազմութեան
մասին։ Արու Զավար ուղարկեց նորա մօտ Ամիր ի.
Խամայէլ Հարազիին 20.000 զօրքով, որ՝ պատա-
հելով Ծանարներին՝ ճակատեցաւ նոցա հետ սաստ-
կապէս. կռիւր տեւեց մի քանի օր. Աստուած պար-
զեւեց Ամիրին յաղթութիւն թշնամու վերայ, որ
կոտորեց նորանից մի օրւայ ընթացրում 16.000
մարդ։ Դորանից յետոյ նա գնաց Տփղիս, սպանել
տւեց իւր հետ եղած գերիները եւ ուղարկեց ամեն
կողմ պտրելու Ծանարներին։

Արու Զավար դրեց ապա Աշտիհին, իւր
արձակւոծ սուրուկին, կառավարիչ Հայաստանի
վերայ, որ մնաց այստեղ Արու Զավարի ամբողջ
ամիրապետութեան ժամանակ։

Մահիի մահից յետոյ Հայաստան անկա-
եւ մնաց այս գրութեան մէջ նաեւ Մուսայի ժա-
մանակ։ Ռաշիդ դրեց խուզայմայ ի. Խազիմ Տամի-
միին Հայաստանի վերայ, որ մնաց այստեղ մի տարի
եւ երկու ամիս, կարգ եւ խաղաղութիւն հաստա-
տելով երկրում, եւ բնակիչներ հնազանդեցան նո-
րան։ Ռաշիդ նշանակեց նորա փոխարէն իւ-
սուփ ի. Ռաշիդ Սուլամիին, որ գաղթեցրեց այս-
տեղ Նազարների մի բազմութիւն. սոքա տիրեցին

արեւելեան Հայաստանին, բազմանալով Խոռոչիք ժամանակը: “Նորանից յետոյ Ռաշիդ նշանակեց Եղիդ ի. Մազեադ ի. Զահիդ Շայյանին, որ գաղթեցրեց Աներիայ ցեղը (Միջազետքի) բոլոր կողմերից, այնպէս որ նոքա Հայաստանին տիրեցին. առ հասարակնա հաստատ կարգի տակ դրեց Երկիրը. մինչեւ որ խռովութիւնը միանգամայն վերացաւ:

Ռաշիդ ապա գրեց կառավարիչ Արդուլիարի ի. Արդուլհամբիդին. Զէյդ ի. Խամբթար Ադառի որդիներից մէկին, որ կը բնակեր Խառանում. Նա եկաւ Հայաստան Դիար Մողարի բնակիչներից բազկացած գնդով, սակայն մնաց այստեղ միայն 4 ամիս, ապա ամբողապետը նորան հեռացրեց եւ նշանակեց նորա փոխարէն Ֆադլ ի. Խահեայի. Խալիդ Բարձմակին: Ֆադլ եկաւ Հայաստան իւր զօրագնդով, ուղեւարուեցաւ դէպի Բարեկարւար եւ յարձակեցաւ Համազին ամրոցի վերայ, սակայն՝ հալածւելով բնակիչներից՝ հեռացաւ եւ գնաց Խրակ, իւր փոխանորդ նշանակելով Օմար ի. Այսուբ կանանիին եւ ուղարկելով Արու Սարահին՝ հարկ ժողովելու երկրից, իսկ Խառանցի Այջիդ ի. Մուհամմեդ Լահարիին՝ պատերազմելու բնակիչների հետ: Պարտաւի ժողովուրդը յարձակեցաւ Արու Սարահի վերայ եւ սպանեց նորան Հայաստան ապօտամբեցաւ, ուր երեւեցաւ Արու Մուսլիմ Շարի:

Ֆադլ դրեց Խալիդ ի. Եղիդ ի. Ռևայդ Առաջամբին Հայաստանի վերայ, ուղարկելով նորա մօս Արդուլմալիք ի. Խալիֆ Հարաշիին 5000 զօրքով հանդերձ, որ ճակատեցաւ Արու Մուսլիմի հետ Ռոյանում¹, սակայն Արու Մուսլիմ հալածեց նո-

¹ Istaxri (Ed. de Goeje, Lugduni, 1870, 206) Առաջա (الرُّوْبَانْ) կը թւէ Տարարիստանի քաղաքների շարքում: Ինագորիս Առաջա (الرُّوْبَانْ) ընթերցու մէ սիսւ է:

բան, վերադարձաւ Կիլար ամրոցը եւ տիրեց նորան։
Առաջիդ գրեց Արքաս ի. Զարիր ի. Եղիդ ի.
Զարիր ի. Արգուլահ Քաջալիին Հայաստանի վերայ. Պարտաւ գալիս նորա վերայ յարձակեցան Փայտակարանի բնակիչնք, եւ նա ստիպուած եղաւ պաշտպանիլ նոցանից Պարտաւի պարիսպներում, ուղարկելով Եմեսացի Մադանին 6000 զօրքով Արու Մուսլիմի գէմ. երկու բանակներ միմեանց բախեցան եւ ճակատեցան. Եմեսացի Մադան սպանեցաւ, իսկ Արու Մուսլիմ գնաց պաշտեց Դուին շորս ամիս շարունակ, ապա վերադարձաւ Փայտակարան եւ մնաց այնտեղ, միանգամայն իշխելով Հայաստանի վերայ։

Առաջիդ ուղարկեց Եահեայ Հարաշիին 12,000 զօրքով եւ Եղիդ ի. Մազեադ Շայրանիին՝ 10,000 զօրքով, հրամայելով վերջինիս յարձակիլ Հայաստանի, իսկ առաջնին՝ Ատրպատականի վերայ, որին կ'ափրէր Մուհամմադ Տամիմին. Հարաշին պատերազմեցաւ նորա հետ, ի վախուսաւ գարձրեց նորան եւ խաղաղացրեց երկիրը. Ապա գնաց Հայաստան՝ Եղիդ ի. Մազեադի հետ միանալու Արու Մուսլիմ Շայրի գէմ մզած պատերազմում. առկայն երր նաևել հասաւ, Արու Մուսլիմ մեռաւ, որին փոխարինեց Սական ի. Մուսայ Փայտակարանցին... (անունն պակասում է) ստրուկը. նորա բնակատեղն էր Փայտակարան։ Լուր առնելով Եահեայ Հարաշիի գալուտեան մասին, նա ուղարկեց նորա գէմ Խոալի ի. Սականին բնտիր հեծելազօրով հանգերձ. Հարաշին ճակատեցաւ նորա հետ, զերեց նորան եւ արշաւեց Փայտակարան. երր ոյս գոյժք հասաւ Սականին, նա վախուսեամբ ապրեցաւ. Կիլար ամրոցը։ Փայտակարանի բնակիչնք եկան Հարաշիի մօտ աղերսանօք՝ շնորհել նոցաներումն, նա մտաւ նոցահետ քաղաք, ներեց նոցա եւ քանդել ուեց քաղաքի պարիսպները։ Իսկ Սական գնաց Եղիդ ի. Մազեադի մօտ 8000 զօրքով, խնդրելով նորա հո-

վանաւորութիւնն . Եղիդ ուղարկեց Նորան Առաջդի մօս :

Երբ խաղաղացաւ երկիրը , ամիրապեալ գրեց Մուսայ ի . Խասյ Հաշիմիին նորա վերայ կառավարիչ , որ մեաց այնաել մի տարի : Կրկին Հայաստանի իւր գաւառներով յուզեցաւ և ապստամբեցաւ : Մուսայ տեղեկացրեց Ուաշիդին այս բանի մասին , որ ասաց . “Միայն Հարաշիին յարմար կ’համարեմ Հայաստանի համար ” . ապանու հեռացրեց Մուսայ ի . Խասյին և ուղարկեց Հարաշիին կառավարչի պաշտօնով , որ միայն այն ժամանակ վայր գրեց զէնքր , մինչեւ երկիրը միանդամայն խաղաղացաւ :

Ուաշիդ Նշանակեց Ահմեդ ի . Եղիդ ի . Ուսոյդ Սուլամիին կառավարիչ . երբ Նա Հայաստան եկաւ , նորա գէմ ապստամբեցան երկրում ապրող խորասանցիք , որոնք Հարաշիի հետ և նորանից առաջ եկած էին . խմբւելով նորա գէմ նորա սկսեցին նորա հետ կռւել , թէ՝ “քեզ ոչ լսել , ոչ հնազանդիլ կամինք” : Այժմ ժամանակ Ուաշիդ Նշանակեց Այիդ ի . Աալմ ի . Քոսայրայ Բահիլիին . երբ Նա Հայաստան եկաւ , դօքքը մի քանի ամիս նորան հնազանդեցաւ , ապա մրացաւ իշխանների հետ : Բար-Էլ-արւարի բնակիչք ապստամբեցան նորա գէմ եւ յարձակեցան նորա օգնականի վերայ . Այիդ ի . Աալմ ապանել Էր Նոստ իշխան Նազմ ի . Հաշիմին , որի որդին՝ Հոյուն ի . Նազմ՝ յարձակւելով Այիդի օգնականի վերայ Բար-Էլ-արւարում եւ ապանելով նորան , ապստամբութեան գլուխ բարձրացրեց . ապա գրեց եղելութեան մասին Խաղարաց թագաւոր խաքանին , որ եկաւ նորա մօս ահագին զօրքով , յարձակեցաւ մուսլիմների վերայ , ապանեց եւ գերեց մեծ բազմութիւն . հասնելով Կուր գետի կամրջին , Նա գերեց (այսակ ապրող) մուսլիմներին , ապանել առեց բոլորին , նաև կանանց եւ երեխաններին , եւ այլք երկիրը :

Առնելով այս գոյժը, Առաշիդ ուղարկեց Բաւ-
նազարին (?)¹, Հրամայելով նորան ձերբակալել
Ասյիդ ի. Առլմին. Եթի նա տեղ հասու, Ասյիդ
ուեց նորան պարզեւներ, որ նա հաճութեամբ ըն-
դունեց. Առաշիդ իմացաւ այս բանի մասին եւ ու-
ղարկեց Կասր ի. Հարիր Մուհամբարին կառավարչի
պաշտօնով, առկայն շատով հեռացրեց նորան եւ
նշանակեց Ալի ի. Խաջ ի. Մուհանին: Նորա վատ
վարմունքի պատճառով Ծարուանի բնակիչք ապ-
ստամբեցան նորա գէմ, եւ առհասարակ ամրողջ
երկիրը յուղեցաւ: Այն ժամանակ Առաշիդ նշանա-
կեց Եղիդ ի. Մազեադ Ծայրանիին կառավարիչ
միաժամանակ Հայաստանի եւ Ասրպատականի վե-
րայ, որի գալովին զօրքը հանդարտեցաւ եւ երկիրը
խաղաղացաւ եւ բարեկարգեցաւ. Նա հաշտեցրեց
Կազարներին եւ Եմենացիներին, (բարի. յոյսեր
ուեց իշխանաց ժառանգներին եւ Կախարարներին:
Կորանից յետոյ Առաշիդ դրեց Խուղայմայ ի.
Խաղիմ Տամիմիին կառավարիչ, որ ձերբակալեց
Կախարարներին եւ իշխանաց ժառանգներին եւ
զիխատել ուեց նոցա. առհասարակ նա վատ վար-
եցաւ նոցա հետ Զորջան եւ Ծանարը ապստամ-
բեցան. Նորա ուղարկած զօրագունդը թշնամին
կոտորեց. ապա նա յղեց նորա գէմ Ասյիդ ի.
Հայդամ ի. Ծորոյ ի. Զահիր Տամիմիին բազմաթիւ
զօրքով, որ պատերազմեցաւ Զորջանի բնակչաց եւ
Ծանարների հետ, արտաքսեց նոցա երկրից եւ
վերադարձաւ. Տփղիս: Խուղայմայ մնաց (Հայաս-
տանում) մի տարուց սակաւ. Առաշիդ հեռացրեց
նորան եւ նշանակեց Առլէյման ի. Եղիդ ի. Ասամ
Ամիրիին, որ մի բարի եւ անհոգ ձերունի էր եւ
այն աստիճան թոյլ, որ նորա հրամանն անզամ

¹ Անունս առանց կէտադրութեան է:

² Քերեւու այլ ձեռագրի շեմ ընթերցու մեջ գերա-
գասելու է:

անկատար էր միում, եւ երկիրը նորա իշխանութեան առկից իսկ երանելու մատ էր։ Առաջիդ նշանակեց Արքաս ի. Զուֆար Հայալիին, որի վերայ յարձակեցան Ծանհարք, եւ նուպատերազմեցաւ նոցագէմ։ Առաջիդ ուղարկեց Մուհամեդ ի. Զուհայր ի. Մուսայր Դարրիին, որ Առաջիդի վերջին կառավարիչն էր Հայաստանի վերայ։

Ամբուազետ Ամին նշանակեց Ասիդ ի. Եղեղի. Մազեազին Հայաստանի վերայ կառավարիչ, որ մեկնեցաւ իւր պաշտօնաւանը։ Երկրի գաւառներից մէկին տիրել էին Խաչեայ ի. Ասյիդ, որ Առաւտօնեան աստղ՝ կը կոչւէր, եւ խմայէլ ի. Հայիր. Մրրվան ի. Մուհամեդ ի. Մըրվանի արձակւած ստրուկը. երկուքն էլ Աթրումն էին։ Ասիդ խորամանկութեամբ ձերրակալեց, բայց ապա ներեց եւ արձակեց նոցա։ Առհասարակ նարարեմիտ եւ վարւեցող մարդ էր։ Մուհամեդ Ամին հեռացրեց նորան եւ գրեց Խառհակ ի. Առլէյման Հաշիմիին Հայաստանի վերայ, ուղարկելով այնուեղ նորա որդի Ֆադլին նորան օգնական։

198 թ. Հայաստանին տիրել էին Արդուլմալիք ի. Զահհամի Սուլամի եւ Մուհամեդ ի. Խատար։

212—213 թ. Մամուն նշանակեց Թահիր ի. Մուհամեդ Ամանանիին կառավարիչ Հայաստանի եւ Առպատականի վերայ. իսկ ուլուք կը պատմեն, թէ նորան ուղարկեց Հարզամոյ ի. Այսն Համազանից՝ իրաք ուղեւորելիս։ Թահիր, դալով Ապրդանակերտ, Առպատականի գաւառը, գրեց հոյ իշխաններին եւ զօրապետներին, որոնք Մամունին հպատակեցան։ Հայաստանի կառավարիչն էր մինչեւ իւր հեռանալն Խառհակ ի. Առլէյման, որին (կուսակից) էին՝ Օմար, Հաւզուն, Կերսեհ, Ազուանից իշխան Արդուլման եւ իշխաններից շատերը։ Խառհակ ուղեւորեցաւ դէպի Պարտաս նորա բնակիչների վերայ յարձակւելու դիտաւորու-

թեամբ՝ իւր որդուն (չըհաստոցած) հարկերի պատճառով։ Մամունի կառավարիչ Թայյիր ուղարկեց ապատամբների գեմ Զահիր ի. Աինան Տամբմինքազմաթիւ զօրքով. երկու բանակներ՝ միմեանց պատահելով՝ ճակատեցան մի ամբողջ օր։ Խաչակի ի. Աուլէյման իւրայիններով փախաւ, իսկ նորա որդի Զաֆար ի. Խաչակի ի. Աուլէյման գերեցաւ եւ այլ գերեալների հետ ուղարկւեցաւ Մամունի մօս։

Թայյիր մնաց (այստեղ) միայն կարձ միջոց-ապանորա գէմմարշաւեց Արդուլմալիք ի. Զահհափ Աուլամին, որ՝ ապատամբելով Փայտակարանի բնակիչների հետ հանգերձ պաշարեց Թահիրին Պարտաւ քաղաքում. Թահիր մնաց պաշարւած մի քանի ամիս շարունակ։ Լուր առնելով այս բանի մասին, Մամուն նշանակեց Աուլէյման ի. Ահմեդ ի. Աուլէյման Հայիմին կառավարիչ։ որ՝ զայով Հայաստան, մինչ Թահիր գեռ պաշարւած էր, ազատեց եւ արձակեց նորան։ Արդուլմալիք խնդրեց ներումն, եւ խազաղեցաւ երկիրը։

Մամուն ապա գրեց Հատիմ ի. Հարզամայ ի։ Այսանին Հայաստանի վերոյ։ Երբ նա այստեղ եկաւ, երկրում խռովութիւն կր տիրէր ազանգաւորների եւ բազմաթիւ կրօնական կուսակցութիւնների մէջ, որոնք մէկը միւսին կուսորելով միմեանց բնաջինջ առնելու մօտ էին. ապա հաշտեցան միմեանց հետ։ Հատիմ ի. Հարզամայ մնաց Հայաստանում միայն կարձ միջոց, որովհետեւ առնելով իւր հօր Հարզամայի մահւան լուրը նա հեռացաւ Պարտաւից եւ բնակեցաւ Կիսալում, ուր նա վերաշննեց ամրոցը եւ ամեն ջանք զործ գրեց ապատամբելու։ Այս նպատակով նա թղթակցեց Հայ իշխանների եւ զօրապետների, նաեւ բարեկի եւ Խուռռամիայի¹ (բնակիչների) հետ,

¹ Լեռներ եւ նոյն անունի քաղաք Զաբալաւմ, ուր բանակեցաւ Բարեկի։

սուրացնելով նոցա մօտ ամիրապետի հեղինակութիւնն. Բարեկ խուռասամբացիների հետ հանդերձ ապստամբեցաւ եւ տիրեց Առրազատական գաւառին:

Առնելով այս լուրը Մամուն դրեց Հայաստանի վերայ Եահեայ ի. Մատաղ ի. Մուսլիմին, բենու Զահիի արձակւած ստրուկին . . . (պակասորդ): Եահեայ ի. Մատաղ քանիցս պատերազմեցաւ Բարեկի հետ, սակայն ըսկարողացաւ ճակատամարտում նորան յաղթել: Տժգոհ Եահեայի գործունէութիւնից, Մամուն նշանակեց զօրապետ Խոյ ի. Մուհամեդ ի. արի Խալիֆին Հայաստանի եւ Առրազատականի վերայ: Երբ նա իւր պաշտօնատեղը եկաւ, նորան ներկայացան Մուհամեդ ի. Պավլադ եւ այս եկրների իշխաններից շատերը, իրանց պատրաստի յայտնելով պատերազմելու Բարեկի գէմ. նա գրաւեց մի նեղանցը, ուր ճակատեցաւ նորա հետ Բարեկ եւ Հալածեց նորան: Խոյ փախստեամբ վերադարձաւ Առրազատականից Հայաստան, ուր նորա գէմ ապստամբեցաւ Ասվադ ի. Արդուլչամիդ Զահիհաֆի. Թէեւ Խոյ խստացաւ նորան նշանակել կոռավարիչ Հայաստանի վերայ, սակայն նա մերժեց, (ցանկալով) նորա հետ պատերազմել. Խոյ ճակատեցաւ նորա հետ եւ Հալածեց նորան ոչ առանց ջանքի: Հայաստան բարեկարգեցաւ շնորհիւ Խոյ ի. Մուհամեդի:

Մանուն ապա նշանակեց Զարիք ի. Ալի ի. Ասդաքայ Ազգիին, բայց որովհետեւ նա անգործունեայ հանդիսացաւ, ամիրապետը դրեց (նորա փոխարէն¹) իրն Համիդ Թուռեցուն: Առնելով իւր հեռացման լուրը Զարիք ապստամբեցաւ եւ երբ Մուհամեդ ի. Համիդ եկաւ իւր պաշտօնատեղը՝ յարձակեցաւ նորա վերայ. սակայն Մուհամեդ

¹ Քնոգրում պահառում է՝ “Մուհամեդը անունը, որ Հետեւեալի հիման վերայ անշաւը այսուղ կըելու” է:

կոտորեցնորա կուսակիցներին, իսկ իրան Զարիքին: որ ներումն խնդրեց, ուղարկեց Մամունի մօտ, Մուհամեդ մեաց այսոտեղ, մինչեւ որ նա մաքրեց երկիրը նորան սարսափի մէջ պահող ապստամբներից:

Երբ 214թ. Մուհամեդ ի. Համբու սպանեցաւ (Բարեկից), Մամուն նշանակեց Արգուլահ ի. Թահիրին կառավարից Զարալի, Հայաստանի եւ Ասրպատականի վերայ: Ազա ամիրապետը գրեց Արգուլայ ի. Ահմեդ ի. Եղիդ ի. Աւայդ Սուլամին Հայաստանի վերայ, որ ուղեւորւեցաւ իւր պաշտօնատեղը: Մուհամեդ ի. Խտար¹, որ Ծանարաց օգնութեամբ տիրել էր Ալիքրին, ճակատեցաւ նորա հետ եւ հայածեց նորան: Արովչեաւ Արգուլայ պատերազմելու ոչ կարգը գիտէր եւ ոչ էլ շնորհը ունէր, ուստի Մամուն նշանակեց (նորա փոխարէն) Խալիդ ի. Եղիդ ի. Մազեազին: Խալիդ նախ արձակեց Իրաքում բանտարկւած իւր ազգականներին, ապա մեկնեցաւ Միջազետք, ուր նորա հետ միացաւ Ռարիայ ցեղից մեծ բազմութիւն: Երբ նա Հայաստան եկաւ, Խլաթում նորան ներկայացան Սավազ ի. Արգուհամբ Զահիչամին, որին տիրել էր Եղիդ ի. Հիսն: վերջինս վախսու այնտեղից եւ եկաւ Կիսալ, ուր նա մեաց: Խալիդ (պատգամ) ուղարկեց Մուհամեդ ի. Խտարի մօտ, որ նորա մօտ եկաւ իրան ներելու խնդրանոք, նորան հնագանդելու պայմանով: Խալիդ ներեց նորան:

Խալիդ ապա արշաւեց Ծանարների գլուխ յարձակեցաւ նոցա վերայ Ալիքրում, հալած եցնոցաւ աւարի առաւ նոցա խաշինքը. յետոյ նա նոցա խաղաղութեան կոչեց՝ 3000 ձի եւ 20,000 ոչխար (իրան) առլու պայմանով: Ակասին կարմ միջոցից

¹ Տես վերև. էջ 15:

յեաոյ (պակասորդ) . . .¹ : Քայլսեցիք նոցա հետ միաս-
ուն յուղեցան եւ ապստամբեցան խալիդի դէմ,
որոնց հետ էր նաև Ալի ի . Խաչեայ Հայաստան-
ցին . խալիդ գերեց նորան եւ այլ գերեալների հետ
հանգերձ ուղարկեց Մամանի մօս :

Մաման դրեց Արգուլահի ի . Մասադ Ասդիին
կռավարիշ Խալիդի փոխարէն , որ միայն կարմ
միջոց մեաց այստեղ մինչեւ իւր մօսիք : Ամիբազեար
կռավարեցիք նորա որդի Ալիին երկրի վերայ .
սակայն վերջինս յուղւած գրութեան մէջ լինելով
Մաման նշանակեց Հասան ի . Ալի Բաղթղիսին , որ
Մամանի կը կոչւէր : Երբ նա իւր պաշտանատեղը
եկաւ , երկիրը տակուին խռովութեան մէջ էր . նա
պատերազմեցաւ² . . . ամրոցի բնակիչների հետ եւ
տիրեց նորան : Դուրին վերադառնալով նա մեաց
այստեղ եւ գրեց Տփղիսեցի Խաչակի ի . Խամայէլ
ի . Ծայիրին՝ (իրան) տուրք³ ուղարկել . բայց որով-
հետեւ Խաչակ այս պահանջը մերժեց եւ նորա
պատգամին շընդունեց . նա ինքն արշաւեց Տփղիսի
վերայ : Երբ նա քաղաքին մօտեցաւ , Խաչակ (նոր-
ան) բնդառաջ ելաւ եւ նորան տուրք առեց : Հա-
սան ապա վերադառնալու այնտեղից :

222թ . Օշին գրեց Հայոց եւ Ասրաբաստա-
կանի իշխաններին՝ որոնել Բարեկին , խռովանալով
1,000,000 դրամ⁴ նորան , «վ նորան (իւր մօս)
բերէ : Բարեկ գնաց իշխաններից մէկի մօս , որ
Սահէ ի . Ամրուտ կը կոչւէր . վերջինս ձերբակալեց
նորան եւ տեղեկացրեց Օշինին ոյս բանի մօսին :

¹ Հետեւ Խալիդ իւստարին համաձայն կը լուս է . Կերպ
խցեցին խռովադութիւնը :

² Ենթած առանց կէտադրութեան լինելով գժարին
է նորա նոյն խակ ենթագրելի ընթերցութեան :

³ Մ-ւ կը բազկառնար բնաւան . խակ իւրէլ՝ հակառակին
դրամական տուրքից :

⁴ 20-25 արծաթ . դրամ — մի ասկէ գինար :

223թ. Օշին՝ Աւրպատական վերադառնաւ-
յով՝ զրեց Սամարքանդցի Մուհամեդի ի. Առևլէյման
Աղգիին Հայաստանի վերայ կառավարիչ, որ գնաց
իւր պաշտօնատեղը։ Աահալ ի. Ամբատ, որ ապստամ-
բել էր Աղուանքում եւ տիրել գաւառին, այսուղ
միասին գիշերելիս հալածեց նորան։ Աւրգանա-
կերում ապստամբեցաւ Մուհամեդի ի. Օրոյդալ-
րահ Աւրգանակերտցին, որի գէմ Օշին ուղարկեց
Մունկաջուրին՝ նորա հետ պատերազմելու։ Ապա
Օշին նշանակեց Մուհամեդի ի. Խալիդ Բուխարա-
խալույին Հայաստանի վերայ, որ՝ գալով այսուղ՝
պատերազմեցաւ Շանարենի հետ եւ արշաւեց
Տիղիս։ Խահակի ի. Խամոյէլ նորան ընդ առաջ ելաւ
եւ սիրով ընդունեց նորան։ Հայաստանի վերայ
ապա նշանակեցաւ Ալի ի. Հուսէյնի ի. Աիրայ Քայ-
սեցին, որին երկրի ժողովուրդը նորա թուրութեան
պատճառով արհամարհանոք՝ Արր, կը կոչէր։

Մուտափիմ զրեց Խալիդի ի. Խզիդին Հայաս-
տանի եւ Գիար Ռաբիայի մի մասի վերայ։ Գալով
Հայաստան Խալիդ լուր ստացաւ, որ երկրի բոլոր
իշխանները՝ սաստիկ երկիւղ կրելով նորանից՝ ամ-
րացել են (իրանց ամրոցներում) եւ ամեն պատրաս-
տութիւն տեսել դիմադրելու։ Այս բանի մասին
անզեկացրեց Հայաստանի փոստի կառավարիչ
Մանուռի ի. Խայ Սարիին ամիրապետ Մուտափի-
մին, որ յետ կոչեց Խալիդին եւ վարչութեան
իրաւունքը յանձնեց Ալի ի. Հուսէյնին։ սակայն
վերջինս մնաց (այսուղ) միայն միքանի օր, որով-
հետեւ զօրքը Պարտաւում նորա գէմ խռովեցաւ,
պահանջելով իւր ռոճիկը։ Նա պատասխանեց. ‘Ես
ոչինչ չունիմ։ իւշ որ կայ, երկրի ժողովրդի մաս
է., եւ նա պահանջեց (ռոճիկը) երկրի բնակիչնե-
րից։ սակայն նոքարնդ գիմացան եւ ամրացան իրանց
ամրոցներում։ Ապա միմեանց հետ թղթակցելուց
յետոյ նորա միասին գումարեցան եւ պաշարեցին
Ալիին Պարտաւում։ Մուտափիմ ուղարկեց Համբ-

դու ի. Ալի ի. Արագլին Հայաստան, որ գնաց Կայիշեւան. այսուեղ նորա մօտ եկաւ Եղիգ ի. Հիմն նրան ներելու խնդրանքը . . . (պակասորդ):

230 թ. Հայաստան ապստամբեցաւ: Արագի բնակիչը, երկրի իշխանք եւ մեծամեծները խռովեցան, իսկ Զարալի եւ Բաբ-էլ-աբւարի պետերը տիրեցին սահմանակից երկրներին. սուլթանի իշխանութիւնն թուրլացաւ:

Ամիրապետ Հարուն Արագիք նշանակեց Խանիդ ի. Եղիգ ի. Արագեադին կառավարիչ (Հայաստանի վերոյ), նորա իշխանութեան առկ դնելով հիւսիսային Արարիոյ աւազու մասն, եւս կցելով Դիար Ռարիոյ ինչ ինչ քաղաքներ. Խալիդ մեկնեցաւ մեծ զօրքով: Առնելով այս լուրը երկրի իշխանք ահարենկ եղան եւ աեզեկացրին նորան, որ նոքա չեն դադարել հնազանդ լինել (ամիրապետին), ուղարկելով նորան ընծաներ. Խալիդ պատառխանեց՝ Ես մեղաւորից միայն ընծայ կ'ընդունեմ. այս բանը սաստկացրեց նոցա գժգոհութիւնը: Խալիդ հրամայեց (Տփղիսի իշխան) Խանհակ ի. Խամայէլին նորա մօտ գալ. բայց որովհետեւ նա չ'անսաց, Խալիդ արշաւեց նորա վերայ եւ արդէն նորան յաղթելու մօտ էր, երբ հիւանդացաւ եւ կարճ միջոցից յետոյ մեռաւ. (նորա մարմինը) դագազի մէջ տարւեցաւ Գուլին եւ այնտեղ թաղւեցաւ: Նորա ընկերները ըրեցան, եւ ամրադջ երկիրը անկարգ դրութեան մէջ մնաց:

Արագիք գրեց Առևհամեդ ի. Խալիդին նորա հօր փոխարէն, որ պատերազմեցաւ Ծանարների եւ Խանհակի հետ, մինչեւ նոցա հալածեց եւ արտօքսեց (երկրից). այնուհետեւ Հայաստան բարեկարգ վիճակի մէջ էր:

¹ Առաջ Տարարին՝ Արայ. Արգուլուհի Առևհամեդ Բիլլահին:

235 թ. (Զավար) Մուտավակելիլ յանձնեցիւր որդի Խրբահիմ Մուսյիդ Բիրահին¹ Ասորիք, Հայաստան եւ Արագածատիան, տալով նորանքարտուղար Մուհամեդի ի. Ալի Մարտուֆին: Միաժամանակ Մուտավակելիլ հրամայեց, որ Խրբահիմ քրիստոնեայ բնակիչներին օգնութեան կոչէ սուրբանին վերաբերեալ գործերում, իսկ եկեղեցիք աւերէ:

(237 թ.) Հայաստան ապատամբեցաւ. բազմաթիւ տեղացի իշխաններ եւ այլք խռովեցան եւ տիրեցին իրանց գաւառներին: Մուտավակելիլ նշանակեց Արու Սայիդ Մուհամեդի ի. Խւուփին կառավարիչ, որ զնաց իւր պաշտօնատեղը: Կարսմահից յետոյ, որ առանց հիւանդութեան առաջացաւ, Մուտավակելիլ զրեց նորա որդի Խւուփին կառավարիչ: Գալով Հայաստան նա թուզիժ զրեց հայ իշխաններին, որացից ոմանք պատասխանեցին (նորան հնապանդելու) համաձայնութեամբ. Բազարատ² որդի Աշոտի գնաց նորա մօս իրան ապահովութիւն նորբելու խնդրանօք, սակայն Խւուփի ուղարկեց նորան Մուտավակելիլի մօս եւ... (պակասորդ): Խւուփի հետ ճակատեցաւ Յովեան որդի³... եւ սպանեց նորան: Այն ժամանակ երկիրը ապատամբեցաւ:

1 Ըստ Տարարին՝ Արու Արդու Բահ Մուտագ Բիրլոհին:

2 Արարացի մասնագրերի մօս հազարիւս է անունիս մարտուր Հայերէն ձեւը, որ տալիս է այսուեզ Եպութիւն: Զարմանալի է, որ մեր պատմագրերը միւսների շետ համամատ վերին առարկանի հասուլ կամուր է նկարագրում խութեցաց ապատամբութիւնը եւ Տիգրիսի առաջնորդ:

3 Այսպէս կը կարգամ, համաձայն Թուվանց Արծրունու պայտաթեան Նայ ու կետազրած անունս (Աբ Ծեղ գերեալուն ի լւանէն խութեց Յավեան անունը Էջ 188, Հրատ. Ք. Պատկանեանի, Վետերբութք 1887): Եպութիւն յիշում է Հերոսի նաև Հայրանունը, որ առկայն ազաւազման պատմառով դժարին է որոշել:

Առատավակելին ուղարկեց Բուզայ մեծին :
Երբ նա Աղձնիք եկաւ, նորան ներկայացաւ Առև-
սայ ի . Զուրար, որ տիրել էլ Քիթլիսին, իրան
ապահովութիւն շնորհելու խնդրանօք . սակայն
Բուզայ կապանքների մէջ դրեց նորան եւ ուղարկեց
Առատավակելինի մօտ : Այնանդից նա գնաց Աղբակ
կոչւած գաւառը եւ պաշարեց Աշոտ որդի Համ-
զայի . ապա ներեց նորան եւ ուղարկեց Սամառայ ,
ուր նորան գլխատել եւ խոշել տւեց հասարակաց
դռան հանդէալ :

Բուզայ դրեց Խամհակ ի . Խամոյէլին , "Ո
տիրել էր Տփղիսին, նորա մօտ գալ . սակայն Խամ-
հակ պատաօխանեց , որ նա Առվլթանի հնազան-
դութիւնից դուրս եկած չէ . եթէ նա ինչք կամի ,
նա ինչքով կարող է նորան օգնել , իսկ եթէ նա
(ռազմիկ) մարդ կամի , նա մարդիկ կ'ուղարկէ նորա
մօտ , եւ թէ նա անհարող եղաւ նորա մօտ գալու :
Բուզայ արշաւեց նորա վերայ , ճակատեցաւ , յաղ-
թեց նորան եւ կարել տւեց նորա գլուխը , "Ո նա
ուղարկեց Առվլթանին :

Բուզայ արշաւեց Շանարաց վերայ եւ պա-
տերաց մեցաւ նոցա հետ , սակայն Շանարք ի վա-
խուսած զարձրին եւ հալածեցին նորան . Բուզայ
փախստեամբ տապրեցաւ նոցանից եւ սկսեց հալա-
ծել այն բնակիչներին , որոնց նա ապահովութիւն
էր շնորհել , կոտորելով նոցանից մեծ բազմութիւն :
Առօք դիմեցին Յանաց կայսեր , խաղարաց խոքա-
նին եւ Ալառնացոց իշխաններին , որոնք մեծ բազ-
մութեամբ միասին գումարեցան : Բուզայ տեղե-
կացրեց այս բանի մասին Առատավակելին , "Ո
նշանակեց երկրի վերայ Առևհանգ ի . Խալիկ ի-
շղիդ ի . Մազեազ Շայբանին : Նորա գալովել խռո-
վարարները հանգստացան , ստանալով նորանից
(կեանքի) ապահովութիւն :

249 թ . Առատավակելին ամիրապեալ դրեց
հայտառանցի Ալի ի . Խահետին Հայտառանի վե-

բայ, որ խռովեալ գրութեան մէջ էր. Ալին գնաց
Մարտիրոսաց քաղաքը: Յոյնք յարձակեցան եւ
տիրեցին մուօլիմների երկրի կիսին. այն ժամանակ
երկրի բնակիչնք զումարւեցան Ալի ի. Եահեա'ի
մօտ, դրդելով նորան ե. պահանջելով՝ պատե-
րազմիլ Յունաց հետ: Ալի արշաւեց նոցա հետ,
ճակատեցաւ յունաց զօրքի հետ սաստիապէն եւ
սպանեցաւ: Յոյնք իրրեւ մեծ յաղթութեան նշան
վերցրին նորա մարմինը:

Ե. Իրն-Էլ-Աթիլ:

Իրն-Էլ-Աթիլ Շոյրանի (հեղինակիս լրավին
անունն էր՝ Խղզեղզին Արուշասին Ալի ի. Արուշ-
կարամ Մուհամեդի. Մուհամեդի. Արդուլկարիմ
ի. Արդուլվահիդ) ծնել է 555 թ. Միջազեաքի
Զեղիրէ ի. Օմարում: 576 թ. նա դաղթեց իւր
հօր հետ, երբ վերջինս իւր վարած կառավարչի
պաշտօնից զրկուեցաւ, Մոսուլ, ուր նա իւրգիտական
կրթութիւնն վերջացրեց: Այստեղից նա քանիցս
այցելեց Բաղդադ՝ երբեմն իրրեւ ուխտաւոր, երբեմն
եւս իրրեւ Մոսուլի իշխանի գեսպան, լսելով այս-
տեղ ամենայայտնի ուսուցիչներին: Ապա նա
ճանապարհորդեց Ասորիքում եւ յաճախեց Երաւ-
անդէմ, ճանապարհորդէն ուսումնատիրելով՝ ժողովրդ-
գական աւանդութիւններ, հին եւ նոր պատ-
մութիւն եւ արարացոց տոհմարանութիւնները:
Վերադառնալով Մոսուլ նա իրեն միանգամայն
նւիրեց գիտական պարապմունքների. նորա տունը
եղաւ ժողովարան տեղացի եւ ճանապարհորդ
գիտնականների համար: 627 թ. նա գնաց Գամաս-
կոս, այնտեղից Հալէպ, ապա վերադարձաւ կրկին
Մոսուլ, ուր նա մեռաւ 630 թ.

Հեղինակիս գլուխ գործոց է՝ Համաշխարհային
պատմութիւն աշխարհիս ստեղծումից մինչեւ
628 թ., որ հրատարակած է Carolus Johannes

Tornberg հետեւեալ տիտղոսով՝ Ibn-el-Athiri Chronicon quod perfectissimum inscribitur, Vol. 1—12 und 13, 14 Indices. Lugduni Bat. 1867—74. Հասկանալի է, որ Իբն-Էլ-Աթիր իւր ընդարձակ գործը ի կատար ածելու համար շատ անգամ դիմել է պատրոստի արաբացի աղքիւրներին. այսպէս Հայաստանի պատմութիւնը նուրառացի շատ տեղեր քաղել է Բելազորիից եւ մասամբ եւս Տաբարիից. այս հատւածները եւ Հարկաւ աւելուրդ համարեցի կրկնել, առաջ բերելով մեր հեղինակի նոր կամ տարբեր վկայութիւնները:

Արտաշիր որդի Պատգակի արշաւեց Զարալի, Ատրպատականի, Հայաստանի եւ Մասունի մերայ եւ տիրեց ոյս երկրներին զէնքի զօրութեամբ:

Ափխազք, Բանաջարք, Բալանջարք եւ Ալանք միասին գումարուեցան՝ Անուշիրվանի երկրները ատրպատակելու համար եւ արշաւեցին Հայաստան՝ աւարտութեաննպատակով։ Ճանապարհը առանց խոշնոգոտի էր, որովհետեւ Անուշիրվան սպասեց, մինչեւ նոքա երկրի խորքը մտան. այն ժամանակ նա ուղարկեց նոցա գէմ մի քանի զօրագնդեր. որոնք ճակատեցան նոցա հետեւ կատարեցին նոցա. բացի 10.000 զերեալներից, որոնց նա բնակեցրեց Ատրպատականում։

Ոերոզ արքայ կառուցել էր Առլի եւ Ալանաց կողմերում շինութիւն՝ իւր հողերը նորանով պաշտպանելու համար. իսկ նորա որդի Կայսար բազմացրեց շինութիւնների թիւր։ Անուշիրվան կառուցեց Առլ եւ Զորջան գաւառներում բազմաթիւ շինութիւններ եւ ամրոցներ՝ իւր բոլոր հողերը նոցա միջոցաւ պաշտպանելու համար։ Աիջիուր (?) խաքանը արշաւեց նորա երկրի վերայթուրքերը հզօր էին, խազարք, Ափխազք եւ Բալանջարք հարուստ էին եւ կը հնագանդ էին.

խաքանին։ Արշաւելով ահազին բաղմութեամբ խաքան պահանջեց Անուշիրվան թագաւորից տուրք, հակառակ գեղքում սպառնալով նորան։ սակայն Անուշիրվան իրան պարտաւոր չը համարեց նորա պահանջը (կատարել), ի նկատի ունենալով իւր երկրի եւ Հայաստանի ամրութիւնները, եւ խաքան վերադարձաւ, բաւականալուով բազմոթիւ գերիներով. թէ եւ նա յարձակեցաւ Անուշիրվանի վերայ. սակայն ոչինչ չկարողանալով անել վերադարձաւ յուսախար։

17 թ. նուաճեցաւ Միջազետք։ Սադ ի-Արու-լ-Վարքաս զօրք ուղարկեց Միջազետք. Կյազի. Ղանմ իւր գնդով արշաւեց այն կողմը, ուղարկելով Սուհայլ ի. Ազինն Ռաքքայ. Միջազետքի բնակիչը՝ այս լուրը առնելով կուֆացիներից՝ Եմեսայից փախել էին իրենց քաղաքները։ Սուհայլ բանակեցաւ քաղաքի՝ հանդէպ եւ պաշարեց նոցա, մինչեւ նորա խաղաղութիւն խնդրեցին, պատգամ ուղարկելով այս բանի համար Կյազի մօտ (որ բանակի էր Միջազետքի Վասիթ քաղաքում)։ Նա համաձայնեցաւ խաղաղութիւն շնորհել, եւ նորա ընդունեցին հպատակութիւն։ Արդուլահ ի-Կարան Մասուլից արշաւեց Մծրին, որի բնակիչը խաղաղութեամբ նորան ընդառաջ ելան եւ նոյնեկերպ վարուեցան, ինչպէս Ռաքքայի ժողովուրդը. թուղթ ուղարկելով Կյազին։ վերջինս համաձայնեցաւ եւ խաղաղութիւն հպատակեց նոցա հետ։

Ռաքքայ եւ Մծրին առնելուց յետոյ Կյազի միացնելով Սուհայլին եւ Արդուլահին իւր գնդի հետ՝ դիմեց Խառան, որի ժողովուրդը յօժարեցաւ նորան զլխահարկ տալ. Կյազի ընդունեց։ Ապա նա ուղարկեց Սուհայլին եւ Արդուլահին Առաջ, որի բնակիչը նմանապէս համաձայնեցան զլխահարկ տալ։ Միջազետքի նւաճումն ամենահեշտն էր միւս երկրների համեմատ։

Խոկ ի. Խառնակ կը պատմէ, որ Միջազնոք նուաճեցաւ 19 թ.։ Օճար զրեց Աադ ի. Արու-լ-Վագրասին, թէ՝ Աստուած Հապանդեցրեց Ասորիք եւ Խրաք (Բարելոն). այժմ զօրք ուղարկիր Միջազնոք։ Աադ ուղարկեց Եյադին, որ բանակեցաւ իւր գնդով Ուռհայի հանդէսպ. բնակիչք նոյն խաղաղութեան պայմանները կապեցին նորա հետ, որ եւ Խառնաճցիք։ Եյադ ուղարկեց Արու Մուսային Մծրին, որ հպատակեցաւ, իսկ ինըն արշաւեց Դարայ եւ առաւ քաղաքը։ Ապա նա ուղարկեց Օսման ի. Արու-լ-Ասին Զորրորդ Հայր։ որի ժողովուրդը պատերազմեցաւ նորա հետ (Սաֆիան ի. Մուտթմալ նահատակեցաւ կռուի մէջ), բայց յետոյ խաղաղութիւն հաստատեց նորա հետ։ Հարկ տարու պայմանով։

Եյադ նուաճեց Աամուսատ եւ արշաւեց Արուն, Ռասակիֆոյ եւ Ապիտակ երկիրը, որոնց բնակիչք Խառնաճին շնորհած պայմաններով խաղաղութիւն հաստատեցին. բայց երբ Աամուսատի ժողովուրդը դաւաճանեց, նա գնաց պաշարեց եւ առաւ քաղաքը։ Ապա զիմեց Եփրատի վերայ գտանուած Մանրէզ կամուրջը եւ նուաճեց այս քաղաքը նորա շրջակայքով հանգերձ։ Գալով Ռասա-էլ-Այն՝ որ է Այն Վարդայ՝ եւ գտնելով ոյսանեղ զիմադրութիւն, նա թողեց քաղաքը։ գնաց Թիլ Մավզին եւ նուաճեց քաղաքը Ուռհայի պայմանների հիման վերայ 19 թ.։ Այնտեղից նա եկաւ պաշարեց Ամիգ, որի ժողովուրդը պատերազմեցաւ նորա հետ, բայց ապա Ուռհայի խաղաղութեան պայմանները ընդունեց։ Եյադ նոյներազ նուաճեց Մարտիրոսաց քաղաքը եւ Կաֆարսութ, գնաց Մծրին, որի բնակիչք զիմադրելուց յետոյ Ուռհայի խաղաղութեան պայմանները ընդունեցին։ Ապա նա առաւ թուր Աբգին, Մարգին ամրոցը, յարձակեցաւ Մասուլի վերայ եւ գրաւեց նորա ամրոցները։ Աակայն (այլք) պատմում են,

որ նու այնուեղ շը հասած նորա մօս եկաւ Զավ-
զանի իշխանը և խաղաղութիւն հաստատեց նորա
հետ: Խյագ այստեղից անցաւ Արդի և նուածեց
քաղաքը, մատ ապա կիրճը, գուրս ելաւ այն-
տեղից (գիմելով) գէպի Քիթթիւն, եկաւ Խլաթ,
որի իշխանը խաղաղութիւն կազեց նորա հետ, և
հասու մինչն Հայաստանի Աղե Զքերը: Վերա-
դառնալով Ռաքքայ նու գնաց Հիմն և այնուեղ
մեռաւ 20 թ.:

25 թ. Օսման գրեց Վալիի (ի Օքբային)
Առաջի վերայ կառավարիչ, իսկ Օտբայ ի. Ֆար-
քադին յետ կոչեց Ասրպատականից: Արովհետեւ
այս երկրի բնակիչք խզեցին խաղաղութեան պայ-
մանները, Վալիի յարձակեցաւ նոցա վերայ 25 թ.::
Առաջապահ զօրքի հրամանատար նշանակելով
Արդուլահ ի. Շուրայլ Ահմասիին, նա ուղարկեց
նորան առպատակելու Մուղան, Բաբար¹ և Թույլա-
սան²: Արդուլահ յաղթեց, աւարի առաւ և
գերեց: այն ժամանակ Ասրպատականի ժողո-
վուրդը խնդրեց խաղաղութիւն, և Վալիի սահ-
ցաւ՝ Հաւղոյի վայի շնորհած խաղաղութեան պայ-
մաններին հրամաձայն³ 800,000 գրամ:

Դորանից յետոյ Վալիի ուղարկեց Ալման
ի. Ռահբիայ Բահլիին Հայաստանի բնակիչների
դէմ 12,000 զօրքով, որ առպատակեց, սպանեց:
գերեց և վերադարձաւ Վալիի մօս՝ հարուստ
աւարով: Վերջինս՝ նոյնապէս յաղթաւթեամբ և
աւարառութեամբ վերադարձաւ լինելով՝ գիմեց
գէպի Մոսուլ և բանակեցաւ Հադիզայում⁴. այս-

¹ Jakut ունի Մուղան, Տարբիկ յ. Հ. թ. 6.
Թույլասան:

² Jakut կ'անուանէ խաղարաց երկրի մօս:

³ Համ Տարարիի այս պայմանագրութիւնը ունի
անեցաւ 22 թ.:

⁴ Jakut կ'անուանէ փոքր քաղաք Տիգրիսի վերայ
Զար գետին մօս:

աեղ նորանե հասաւ Օսմանի թռողը, թէ
Մուավիա ի . Արու Սուֆիան իւձ կը դրէ՝ 'Ես
լուր ստացոյ, որ յոյնք մեծ բազմաթեամբ կ'ար-
շաւն մուլիմների գէմ. ես կարծում եմ, որ նա
նոցա օգնութեան կուղարկէ կու ֆայբներից, իսկ
ու ուղարկիր թշնամու գէմ մի քաջ եւ սրտոտ
մարդ 8 կամ 9.000 զօրքով այնտեղից, ուր քեզ
կը հասնի իմ թուղթը: Ողջոյն ու Վալիդ դարձաւ
գէպի զօրքը, աեղեկացրեց նորան (այս) բանի
մասին եւ ուղարկեց Սալման ի . Ռարիա Բահրին
8.000 զօրքով հանդերձ: Սալման արշաւեց եւ
մասւ Ասորիքի ժողովրդի հետ յունաց երկիրը,
ուր նա՝ իւր զօրքը բաժանելով մի քանի գնդերի
ասպատակ սփռեց, աւերեց ինչ որ կամեցաւ եւ
առաւ բազմաթիւ ամրոցներ:

Այլք կը պատմեն, որ Սոյիդ ի . Առ ուղար-
կեց Հարիր ի . Մասլամային Սալման ի . Ռարիայի
հետ հանդերձ մուլիմներին օգնութեան. պատ-
ճառն այն էր, որ Օսման գրեց Մուավիային՝ ու-
ղարկել Հարիր ի . Մասլամային ասորիքի ժողովրդի
հետ Հայաստան. Մուավիա ուղարկեց, եւ Հարիր
գնաց պաշարեց Կարին եւ այնպէս նեղեց քաղաքի
բնակիչներին, որ նոքա ինզրեցին իրենց ինոյել՝
գաղթելու կամ հարկ տալու պայմանով. նոցանից
շատերը գաղթեցին եւ բնակեցան յունաց
երկրում¹ . . . :

31. թ . ըստ սմանց Հայաստան նուածեց
Հարիր ի . Մասլամայ :

42 թ . Հայաստանում մեռաւ Հարիր ի .
Մասլամայ Ֆիհրի, որին Մուավիա դրել էր կառա-
վարիչ երկրի վերայ :

73 թ . Արդուլմալիք դրեց իւր եղբայր Մու-
համեդին կառավարիչ Միջազետքի եւ Հայաս-

1 Հարունակութիւնը բառացի բազուած է բեկո-
չութիւց:

տանի վերայ, որ ասպատակեց երկիրը եւ նորամեց թշնամուն։ Հայաստանի թէրէն՝ ծովակը ընդհանուրի սեպհականութիւն էր կազմում, եւ ովինչ կամենում էր, որսում էր այնտեղից։ Մուհամեդ արգելեց ծովակում որսոլ եւ նորա վերայ նշանակեց մի մարդ, որ նա որսոյ եւ վաճառէ, ստանարով նորանից գինը։ Ապա այդ իրաւունքը անցաւ նորա որդի Մըրրվանին . . . Այս թէրէնը աշխարհի հրաշքներից մէկն է, որովհետեւ նորա միջի մանր ձկները ամեն տարի տօնավաճառի ժամանակ անցնում են այս ծովակից նորա մէջ թափուղ գետը, եւ նոցա մեծ բազմութեամբ ձեռքերով բռնում են. իսկ երբ վերջանում է տօնավաճառը, այլ եւս ոչինչ չեն գտնում։

82 թ. Մուհամեդի. Մըրրվան յարձակեցաւ Հայերի վերայ եւ հալածեց նոցա. երբ նորա խաղաղութիւն խնդրեցին, նա համաձայնեցաւ եւ դրեց նոցա վերայ Արու Շէյխի ի. Արդուլահին։ Աակայն Հայք նորան գաւաճանեցին եւ սպանեցին։ Ամեք պատմում են, որ նա սպանեցաւ

83 թ.

84 թ. Մուհամեդի. Մըրրվան ասպատակեց Հայաստան։

85 թ. Մուհամեդի. Մըրրվան ասպատակեց Հայաստան, մեաց այնտեղ ամսոր, եւս ձմեռեց։

88 թ. Մասլամայի. Արդուլմալիք եւ Արասի. Վալիդի. Արդուլմալիք արշաւեցին յունաց երկիրը. Վալիդ գրել էր Հայաստանի կառավարչին՝ հրաման՝ տեղեկացնել յունաց թագաւորին, որ խաղարք եւ Հայոց լեռնական իշխաններից այլք համաձայնել են միմեանց հետ՝ նորա

1 Աանոյ ծով։ Հման։ Բնելազորիի տեղեկութիւնը նշ (վերեւ էջ 42—43). ըստ որում Հարիք ի. Մասլամայ ծովը թշնամեց բնեղ հանուրի սեպհականութիւն։

երկրի վերայ աշշաւելու . Հայաստանի կառավարիչը կատարեց հրամանն : Ապլիդ պարտաւորեցը Ասորիքի ժաղավրդին՝ զօրք ուղարկել Հայաստան, բաղմացրեց (պատերազմական) մեքենաները եւ մեկնեցաւ Միջագետքի կողմերը, որտեղից զիմեց յունաց երկիրը : Մուսլիմները ճակատեցան յունաց հետ, որքա հարածական եղան, բայց ազա՝ յետ գալով՝ ի փախուստ գարձոցին մուսլիմներին : Հասուած հալածեց յոյներին, որոնք մտան թուան քաղաքը . մուսլիմները պաշարեցին եւ առան այն առաջին թումադայ¹ ամօնին :

91 թ . Ապլիդ յետ կոչեց իւր հօրեզրայր Մուհամեդի . Մըրվանին Միջագետքից եւ Հայաստանից եւ նշանակեց այս երկրների վերայ իւր եղբայր Մասլամոյի ի . Արդուլմալիքին : Մասլամոյ յարձակեցաւ թուրքաց վերայ Ասրապատական դաւառում եւ հասաւ մինչեւ Բաբ, նուաճելով քաղաքներ եւ ամրացներ, որոնց առջեւ հռչակ, հռչակ (պատերազմական մեքենաներ) դնել առւեց :

101 թ . մեռաւ Մուհամեդի . Մըրվանի . Հակամ, Արդուլմալիքի եղբայրը, որ կառավարեց Միջագետք, Հայաստան եւ Ասրապատական եւ բաղմիցո ասպատակեց Յանաստան եւ Հայք :

102 թ . Օմարի . Հուրայր յարձակեցաւ յունաց վերայ Հայաստանում, Միջագետքի եւ Երաքի սահմաններին կից :

104 թ . մուսլիմների զօրքը Զուրայր Նահրանիի հրամանատարութեան ներքոյ Հայաստանից մտաւ խաղարաց երկիրը . Խաղարք, որոնց օդնութեան եկան Քաֆջաք եւ այլ թուրք ցեղերը, մեծ բազմութեամբ գումարուեցան եւ՝ պատահելով մուսլիմներին Մարզ Հիջարայ (քարքարոս Հովիտ) կոչուած տեղում՝ ճակատեցան նոցա հետ սաստ-

1 Մուհամեդականաց Հ-րդ ամիսն է :

կապէս։ Մուսիմներից սպանեցաւ մեծ բազմութիւն, իսկ խաղաղք տիրեցին նոցա բանակին եւ աւարի առան ինչ որ այնտեղ կար։ Զուրայտի հետ հանգերձ մուսլիմները փախստեամբ եկան Ասորիք Եզերի ի. Աբուլմայիքի մօտ։

Խաղարք՝ վառուելով (մուլիթերի) երկրներին տիրելու ցանկութեամբ՝ միասին գումարուեցած Այն ժամանակ Եղիդ ի. Արդուլմալիք Նշանակեց Զառուահ ի. Արդուլմահ Հակամիին կառավարիւ Հայաստանի վերայ, տուեց նորան բազմաթիւ զօրք եւ հրամայեց նորան յարձակիլ եւ ասպատակել խաղարաց եւ այլ թշնամի երկրները: Զառուահ մեկնեցաւ: Առնելով այս լուրը խաղարք հեռացան եւ բանակեցան Բար-Էլ-արուարում: Իսկ Զառուահ եկաւ Պարտաւ եւ մնաց այստեղ հանգիստ առնելու իւր զօրքի հետ, ապա՝ անցնելով Կուր գետը, արշաւեց խաղարների վերայ: Գիշերը նա հրամայեց բանակը վերցնել, արտգ ճանապարհ դնաց եւ հասաւ Բար-Էլ-արուար քաղաքը, այնպէս որ խաղարք նորան չը տեսան: Մանելով թշնամու երկիրը նա ցիրցան ուղարկեց հեծելագնդեր աւարի առնելու բոլոր շրջակայիշը. նոքա հետեւեալ օրը վերադարձան աւարով:

Խաղարք իրենց իշխանի որդու հետ դուրս
ելան ջառահի գէմ. երկու գնդերը՝ պատահելով
Արան՝ գետի մօտ՝ սաստիկ պատերազմ դրին
միմեանց հետ. ջառահի ողեւորում էր իւր
մարդիկը, եւ կոփը վառեցաւ. Խաղարք ի վա-
խուսա դարձան, եւ մուլիմերը հայածեցին նոցա,
սպանելով եւ գերելով նոցանից մեծ բազմութիւն.
Ջառահի դիմեց ապա Քայանջար, խաղարների

նշանաւոր ամրոցը, եւ բանակեցաւ այնտեղ... Խաղաքը փախստական եղան, եւ մուլիմները տիրեցին ամրոցին զէնքի զօրութեամբ առաջի Ռարի ամսին:

107 թ. Հիշամ յետ կոչեց Զառուահի ի. Արդուլահի Հակամիին Հպյաստանից եւ Առազատականից եւ զրեց այնտեղ իւր եղբայր Մասլամայ ի. Արդուլմալիքին։ Մասլամայ նշանակեց կառավարիչ Հարազ ի. Ամր Թային, որ նուաճեց թուրքաց երկրից մի գաւառ բազմաթիւ քաղաքներով հանդերձ։

112 թ. սպանեցաւ Զառուահի ի. Արդուլահի Հակամի. պատճառը հետեւեալն էր. ինչպէս պատմեցինք, նախ քան նա խաղարաց երկիրը մտաւ, վերջիններս ի փախուստ գարձան, հալածուելով նորանից. ապա խաղաքը եւ թուրքերը միացան Ալանաց երկրում եւ՝ պատահելով Զառուահի ի. Արդուլահին, որ իւր հետ ուներ Ասորիքի ժողովուրդը, ճակատեցան սաստիկ բախմամբ, որ մարդ երբ եւ իցէ տեսած էր. զօրքը կանգուն մնաց, թէեւ խաղաքը եւ թուրքերը թուով առաւել էին մուսլիմներից։ Զառուահի իւրայիններով նահատակեցաւ Արտաւիլի դաշտում։ Հպյաստանի վերոյ կառավարեց նորա եղբայր Հաջուաչ ի. Արդուլահի։ (Այլ պատմում են, որ Զառուահի սպանեցաւ Բալանջարում)։

Խաղաքը՝ Զառուահի մահից յետոյ նուաճման տենչանըով վառուած՝ շատպով դիմեցին (մուլիմների) երկիրները եւ մօտեցան Մոսուլին։ Մուլիմների զործը ծանրացաւ։ Առնելով այս լուրը Հիշամ կոչեց իւր մօտ երանելի Հարաշիին... Հարաշին մեկնեցաւ. որ քաղաքի մօտից նա անցնում էր, ոտի էր կանգնեցնում նորա բնակիչներին, եւ ով սրբազն պատերազմ կը ցանկար, նա տալիս էր իւր հաւանութիւնն։ Այսկերպ շարունակ

գործելով՝ նա եկաւ Արդան՝ քաղաքը, ուր նորան
արտասուելով՝ զիմաւորեցին Զառուահի մարդիկը
մեծ բազմութեամբ, ապա նա եկաւ Խրամի, որ նո-
րան զիմագրեց. Հարաշին պաշարեց եւ առաւ քա-
ղաքը, բաժանելով նորա աւարք իւր զինուորների
մէջ. Խլաթից մեկնելով նա տիրեց մի զինի մրոսի
ամրոցների եւ բերդերի, մինչեւ եկաւ Պարտաւ,
ուր բնակեցաւ:

Նոյն ժամանակ խաքանի որդին Առրպատաւ-
կանում էր՝ ասպատակելով, աւարք առնելով, գե-
րելով եւ սպանելով. Առրպանակերտը նորանով
պաշարուած էր. երկիւղ կրելով, որ նա կը տիրե
քաղաքին, Հարաշին գաղտ մարդ ու զարկեց վար-
դանակերտացիների մօտ՝ նոցա իմացներու իւր նոցա
մօտ գալստեան մասին, պատուիրելով նոցա համ-
բերել... Խաղաքը հեռացան քաղաքից, եւ երբ
Հարաշի իւր գնդով այնտեղ եկաւ, գտաւ քաղաքը
թափուր թշնամուց. Խաղաքը մեկնելով զիմեցին
Առտաւիլ, սակայն այնտեղից եւս հեռացան, իսկ
Հարաշի բանակեցաւ Բաջարվանում. նորա մօտ
եկան խառնիխուռան բաղմութեամբ ռբէ-դ (սպի-
տակ) պարսիկները եւ ողջաւնեցին նորան, ասելով՝
“Քեզ վայել է, ով առաջնորդ սրբազան պատե-
րազմում եւ աւարասութեան մէջ” Հարաշին
հարցրեց. “Ես ի՞նչ գործ ունիմ այդ բանի հետ,
նորա պատասխանեցին.” Խաղարաց զօրքը բաղկա-
ցած է 10.000 մարդուց, նոյա հետ են 5.000 զերի
կամ շղթայած մուսիմներ ազնուական անից. բա-
նակած են շորս մզսն հեսի: Հարաշին չուեց զիշե-
րով եւ հասաւ թշնամուն զիշերուոյ վերջին, երբ
նա զեռ քնած էր. նա սփռեց շորս կոզմ իւր
մարդիկը, որոնք շրջապատեցին խաղարներին ար-
շալուսին. արեւը երեւալիս մուսիմները իրենց
սրերը նոցա գէմ մաշեցին եւ կոտորեցին բոլորին,

* Աճա Արդան:

եւ ոչ մէկը շապրեցաւ։ Ապա Հարաշին ազատեց գերի մուսկիմներին եւ բերեց նոցա իւր հետ քաջարվան։

Երբ խաղարաց թագաւորի որդին լուր առաւ, թէ ինչ արեց Հարաշին խաղարաց զօրքի հետ, ևս սաստիկ յանդիմանեց եւ պախարակեց նոցա, առնուանեց նոցա թղթը եւ տկար եւ հետզհետէ վառեց նոցա մէջ կուռի ցանկութիւն, այնպէս որ խաղարք նորան խորհուրդ տուին՝ ժողովել իւր մարդիկը եւ դնալ պատերազմիլ Հարաշիի հետ։ Կա զօրք գումարեց Աստրապատական գաւառից, եւ նորա հետ միացաւ մեծ բազմութիւն։ Հարաշին նորա դէմ ելու, եւ երկու բանակներ՝ պատահելով միմեանց Քարգանդ¹ գաւառում, բախնեցան սաստկապէս։ Խաղարք՝ լինելով թուով առաւել՝ գերեցին մուսկիմներին։ Հարաշին քաջալերեց իւր մարդիկը, հրամայելով նոցա համբերել, եւ նոքա կրկին կորի նետեցան եւ արիաբար ճակատեցան թշնամու հետ։ Երբ խաղարներից գերուած մուսկիմները օգնութեան կոչեցին, նոքա ցնծութեան ազաղակ եւ ուղմական կոչ արձակեցին, որով մէկը միւսին պատերազմելու քաջալերեցին։ շկար մէկը, որ շլար, դժալով գերիներին։ Թշնամին մեծ կորուստով ի վերջոյ ի փախուստ գարձաւ եւ՝ հալածուելով մուսկիմներից հասաւ Արտա² գետը։ այսուեղ մուսկիմները յետ գարձան եւ ժողովեցին թշնամու բանակի ինչքը եւ աւարը, արձակելով գերիներին եւ

¹ Աստրապատականի զուստներից մէկը։ որի համանուն քաղաքը՝ ըստ Խաչիկի տեղեկութեան՝ Արտա-իլից 10 փարստի հետի կը դանուէր։

² Իման Արտար։ Հեղինակիս յիշած Աշ- Ար Ար միանդամայն համապատասխան է մեր ժողովրդական Արտա-իլի։ ասրբերուում է միւս արտարացի մասնագրերի սովորական աւագան (կարգա աւագան) այլայլած ձեւից։

կապեալներին, որոնց մեծ բազմութեամբ բերին
Բաշարվան:

Հարաշին այստեղ ստացաւ Հիշամի թռողիւր,
որով նա հրամայում էր նորան իւր մատ գալ, նշա-
նակելով իւր եղբայր Մասլամայ ի. Աբդուլմալիկին
Հայաստանի եւ Ատրպատականի վերայ: Գալով (իւր
պաշտօնատեղը) Մասլամայ արշաւեց ստատիկ ձև-
ուային ժամանակ թռուրքերի գէմ եւ անցաւ Բա-
րից, նոցա հետամուռ լինելով:

114 թ. Հիշամ ի. Աբդուլմալիք դրեց Մրր-
վան ի. Մուհամեդ ի. Մրրվանին, իւր հօրեղբօր-
որդուն, Միջագետքի Ատրպատականի եւ Հայաս-
տանի վերայ կառավարիչ: Ալերջինս գտանում էր
Մասլամայի զօրքի հետ Հայաստանում: Մրրվան
մտաւ խաղարաց երկիրը, ապատակեց եւ աւերեց,
աւարի առաւ եւ գերեց, հանելով մինչեւ երկիրի
սահմանները, ուր նա մնաց առ ժամանակ մի, մին-
չեւ թշնամուն նուաճեց եւ պատժեց նորան: Ապա
մտաւ Սարիր թագաւորի երկիրը, որի բնակիչների
հետ նա պատերազմեցաւ եւ առաւ նորա բերդերը.
թագաւորը նորան հպատակեցաւ եւ խաղաղութիւն
կապեց՝ նորան 1000 ստրուկ, 500 այր եւ 500 կին
սեւ մազերով (տալու), եւս 100.000 հա-² բար
(քաղաքը) մատակարարելու պայմանով: Մրրվան
հաշութիւն հաստատեց Տումանի բնակչաց հետ՝
100 զլուի կիսակէս³, եւս 20.000 հա-² տալու
պայմանով: Նմանապէս Զիրիկիրանի իշխանը, որի
երկիրը նա մտաւ, հաշութիւն կապեց նորա հետ:
Գալով Համզին, որի բնակիչք նորան գիմազրեցին,
նա պաշարեց եւ առաւ նոցա ամրացները:

¹ Տարարին (ահե՛ա վերեւ) Հիշատակում է այս դէպքը
115 թ.

² Ա. Ելացնելու: Է՛ զարի եւ ցորեն:

³ Լմա՛ 50 այր եւ 50 կին:

Առաջ ան նա նուածեց խաղաղութեամբ . Թիրչանշահին նա պարտաւորեցրեց տարեկան 10.000 ժամ- Բար մատակարարել : Ապա Մըրվահ բանակեցաւ Լակզի իշխանի բերդի հանդէպ , որ հրամարեցաւ նորան հարկ տալ եւ գնաց պարելու խաղաղոց թագաւորին , սակայն սպանեցաւ նետով մի հովիսից , որ նորան չճանաչեց : Այն ժամանեակ Մըրվան խաղաղութիւն հաստատեց լակզի բնակչաց հետ եւ դրեց նոր ովերոյ մի կառավարիչ , իսկ ինքն գնաց Շարուան բերդը , ծովի ափին , որ նորան հպատակեցաւ , այնտեղից Շովզդէք , որի ժողովրդի հետ նա պատերազմեցաւ եւ ապա վերադարձաւ :

117 թ . Մըրվան ի . Մուհամեդ , Հայաստանի կառավարիչը , ուղարկեց երկու դօրագունդ , որոնցից մէկը նուածեց Ալաններից երեք բերդ , իսկ միւսը բանակեցաւ Տումանշահի երկրում , որի ժողովուրդը նորա հետ խաղաղութիւն հաստատեց :

118 թ . Մըրվան ի . Մուհամեդ արշաւեց Հայաստանից եւ մտաւ Ուռնիսի : Երկիրը երեք կիրճերից . Ուռնիս փախաւ խաղարաց մօտ եւ մտաւ մի ամրոց , որ Մըրվան պաշարեց , դնելով նորա տաջեւ բաղնիք : Ուռնիս սպանեցաւ . սպանողը ուղարկեց նորա գլուխիր Մըրվանին , որ ցոյց տուեց այն ամրոցարնակներին . սոքա անձնատուր եղան նորա դատաստանին . Մըրվան սպանել տուեց ռազմիկներին , իսկ կանանց գերի տարաւ :

119 թ . Մըրվան ի . Մուհամեդ արշաւեց Հայաստանից եւ մտաւ Ալանաց երկիրը , այնտեղից շուեց գնաց խաղարաց երկիրը . անցնելով Բարձու-

Հ Բելոգորի (առեւ վերեւ)՝ Թարարտարանշահ : Խնայոյան :

1 Թուի թէ Աղուանից երկրու մ:

Հարի¹ եւ Ասմանդարի² մօտից նա հասաւ Ապիտակ
(քաղաքու)³, ուր գտանւում էր խարանը. վերջինս
փախաւ նորա առջեւ:

120 թ. Հայաստանի եւ Առրպատականի
կառավարիչն էր Մրրվան ի. Մուհամեդ:

121 թ. Մրրվան ի Մուհամեդ արշաւեց
Հայաստանից եւ եկաւ Սարիրի տոհմական բերդը,
սպանեց, գերեց. զալով երկրորդ բերդը նա նմա-
նապէս սպանեց, գերեց: Ապա մտաւ Վասումիկ ամ-
րոցը, որտեղ կը գտանուէին թագաւորի գուսարը
եւ նորա աթօնուր. թագաւորը այնտեղից փախստա-
կան բնկաւ Խիզաջ ամրոցը, ուր էր նորա ոսկեհուռա-
մթուր. Մրրվան հետեւեց նորան. այն ժամանակ
թագաւորը խաղաղութիւն կապեց նորա հետ՝ տա-
րեկան 1000 ստրուկ եւ 100.000 բազու նորան տա-
րու պայմանով: Մրրվան ապա մտաւ Ազրութիւն արան
երկիրը, որի իշխանը հաշտութիւն հաստատեց
նորա հետ, որպէս եւ Տուման երկիրի իշխանը: Գա-
յով Համզին երկիրը նա պաշարեց նորա ամրոցը մի
ամիս շարունակ, մինչեւ (բնակիչք) խաղաղութիւն
կապեցին: Մասդագ (?) երկիրը Մրրվան նուածեց
խաղաղութեամբ: Աիրանում բանակելիս նորա հետ
հաշտութեան դաշն կնքեցին Տարարսարան, Ֆիլան
եւ ծովագիւայ բոլոր գաւառները, որոնք Հայաստա-
նում Տարարիստանի հանդէպ կը գտանուին:

126 թ. Եղիդ գրեց Մուհամեդ ի. Մրրվա-
նին կառավարիչ Միջագեազի, Հայաստանի, Մո-

¹ Խակու կ'անուանէ Բար-Էլ-Աբուարի (Դերրենդի) մասւ Հմեմ. Բաւ-Էլ-Շերամուկ զիւ զը Դերրենդից Հո-
րուս, ոյժմ երկամթու զու կայսարան:

² Istaxri յիշում է Խոսքարց մայրաքաղաք Խափի (Հաշտարիսան) եւ Բար-Էլ-Աբուարի մէջ: Ու բեմ Բալքանզա-
րից հիւսիս:

³ Խակու կը յիշէ Բերտ քազար խաղարաց երկրում.
սպարելու. և Դերրենդից հիւսիս ոյժմ մասն պէտրովսկ քա-
զարի մատերը:

սուլի եւ Ասրապատականի վերայ, նշանակելով (նորա որդի) Մըրգանին դատաստանական դործերի վարիչ եւ տալով նորան մի գաւառ:

132 թ. Ուսհայում Սայիդ ի. Հիշտմ եւ նորա հօրեղբօրորդին այլ բանատարկեալների հետ հանդերձ սպանեցին բանդապետին եւ գուրս ելան բանդից: Խառանի բնակիչք խուռն բարձութեամբ կոտորեցին նոցա, ի թիւս որոց եւս Չորրորդ Հայոց իշխան կուշանին:

132 թ. Արու-լ-Արբա (ամիբապետը) զրեց իւր եղբայր Արու Թափարին Միջազեաքի, Հայատանի եւ Ասրապատականի վերայ կառավարիչ:

133 թ. (Արու-լ-Արբա) Ասիֆահաչ ուղարկեց իւր եղբայր Մանսուրին կառավարչի պաշտանով Միջազեաք. Ասրապատական եւ Հայատան: Կառավարչի օդնականն էր Արու Թափար ի. Մուհամեդ ի. Ալի:

133 թ. յունաց կոյսր կառանդին արշաւեց քալի-քալա (Արդին) եւ բանակեցաւ Խիսու դաշտում, առաջ ուղարկելով կուշան հային, որ պաշարեց քաղաքը: Բնակիչներից երկու հայ եղբայրներ պեղեցին պարսկի աւերակ տեղը. կուշան իւրոյիններով ներս մտաւ, տիրեց քաղաքին եւ ոպանեց այրերին, իսկ կանանց զերեց:

134 թ. Հայատանի կառավարիչն էր Եղիդ ի. Ուսայդ:

145 թ. Թուրքերը եւ Խազարները արշաւեցին Բաբ-էլ-աբւարից եւ կատորեցին մաւլիմներից մեծ բազմութիւն Հայատանում:

147 թ. Աստարինան Խարապմը թուրքաց գրոհակներով յարձակեցաւ մաւլիմների վերայ Հայատանում, գերեց մաւլիմներից եւ քրիստոնեաներից մեծ բազմութիւն եւ մասս Տփղիս: Մանաւր աւղարկեց թուրքերի հետ պատերազմելու Թարրայիլ ի. Ետհեա'ին եւ Հարր ի. Արգուլահին, որոնք ճակատեցան թշնամու հետ, սակայն Զա-

րբայիլ մեծ կորստով փախաւ, իսկ Հարբ սպանեցաւ:

162թ. Եզիդ ի. Աւայրի Սուրբամի առաջատառ կեց կարնոյ գաւառը, աւարի առաւ եւ տիրեց երեք ամրոցների:

163թ. Վահգին գրեց իւր որդի Հարունին ամբողջ Մաղրերի, Առրպատականին եւ Հայաստանի վերայ կառավարիչ, նշանակելով նորա մօտ հարկերի վերակացու Զարիտ ի. Մուսային, իսկ (այլ) գործերի վերայ Եահեա ի. Խալիդ ի. Բարիմակին:

172թ. (Հարուն) ալ-Ռաշիդ յէտ կոչեց Եղիդ ի. Մազեադ ի. Զահիդին Հայաստանից եւ (նորա փոխարէն) նշանակեց երկրի վերայ իւր եղբայր Օրայդալահ ի. Վահգիին:

178թ. Ալիհետ ի. Թարիֆ Տաղլիրին արշակ Միջագետքից, մասւ Հայաստան եւ պաշտրեց Խլաթ 20 օր:

182թ. Խաղարաց Խաքանի գուստը տարւեցաւ (կնութեան) Ֆագլ ի. Եահեաի մօտ Պարտաւ, ուրնա մեռաւ: Նորա ուղեկիցները վերադարձան նորա Հօր մօտ եւ պատմեցին նորան, թէ գուստը սպանեցաւ Խարդախութեամբ:

183թ. Խաղարք Խաքանի գուստեր (մահւան) սպատճառով արշաւեցին Բաբ-Էլ-արւարից, յարձակեցան մուսլիմների եւ քրիստոնեաների վերայ եւ գերեցին աւելի քան 100.000 մարդ, երկրին հասուցանելով շլուած աղէտ: Այնժամանակ Ռաշիդ գրեց Եզիդ ի. Մազեադին Հայաստանի վերայ, յանձնելով նորան նաեւ Առրպատականն. իսկ Խուղայման ի. Խաղիմին ուղարկեց Մծրին՝ Հայաստանի բնակիչներին օգնութեան: Նորա երկուքով արտաքսեցին Խաղարներին եւ վերաշինեցին աւերածը:

185թ. Պարտաւում մեռաւ Եզիդ ի. Մազեադ ի. Զահիդ Շայյանի, որի տեղ կառավարեց Ասադ ի. Եղիդ:

205թ. Մամուն զրեց խաս ի. Մուհամեդ ի.
Արի Խալիֆին Հայաստանի եւ Ատրպատականի վե-
րոց կոռավարի²:

209թ. Մամուն նշանակեց Ալի ի. Սադա-
քա՛ին, որ Զուրայք կը կոչւէր, Հայաստանի եւ
Ատրպատականի վերայ:

235թ. Մուտավակիլ յանձնեց իւր որդուն՝
Զուրայք Մուտազզիմ Բիլլահին Խորասան իւր
շրջակայիւք հանդերձ, Տաբարիստան, Շիայ, Հայա-
տան, Ատրպատական եւ պարսից գաւառները:

236թ. Մեռաւ Արու Սայիդ Մուհամեդ ի.
Խւուփ ալ-Մուռուզի, որ կ'իշխնէր Հայաստանի եւ
Ատրպատականի վերայ: Մուտավակիլ նշանակեց
նորա որդի Խւուփին հօր տիրած երկրների վերայ:

237թ. Հայաստանի բնակիչք յարձակեցան
իրենց կառավարիչ Խւուփ ի. Մուհամեդի վերայ
եւ սպանեցին նորան¹:

237թ. Ալի ի. Եահեա Հայը ձեռնարկեց մի
մեծ արշաւանք Յունաց գէմ:

238թ. Ալի ի. Եահեա Հայը արշաւեց Յու-
նաց գէմ:

248թ. Ալի ի. Եահեա Հեռացաւ Ասորիքի
սահմանագլխից եւ նշանակեցաւ կառավարիչ
Հայաստանի եւ Ատրպատականի վերայ:

254թ. սպանեցաւ Բուղա ալ-Շարաբի:

256թ. Խոս ի. Շէյխ մեկնեցաւ Ասորիքից
եւ նոտաւ Հայաստան կառավարիչ:

261թ. Մուտամիդ նշանակեց իւր որդի Զա-
ֆարին, որ Մուֆավվադ իլա-ալլահ կը կոչւէր.
Ասորիքի, Միջագետքի, Մոսուլի եւ Հայաստանի
վերայ:

¹ Շարաւնակութիւնն՝ խութեցաց յարձակումը իւր-
առ փի վերայ, որպէս եւ Տիգիսի առա մը՝ ըստացի քաղաք
և Տաբարիից (անս վերիւ):

269 թ. Առաջ Խոս ի. Շեշիս ի. Սալիկ
Հայրանի, որ կ'իշխնէր Հայաստանի և Գիարքեկրի
վերայ:

280 թ. Շամփալ¹ ամսին լուսինը խաւարեցաւ. առաջատեան մութք պատեց և ծածկեց Դու ինի բնակիչներին և աշխարհը: Եսյն ժամանակ բարձրացաւ ուս հողմ (եւ տեւեց) երեք գիշեր² շարունակ: Երեք գիշեր կը գզդէր երկրաշարժք. քաղաքք կործանեցաւ, միայն մօտ հարիւր տուն ազատեցան: Երկրաշարժքը ապա կրկնեցաւ հինգ անգամ եւս. աւերակների տակից դուրս հանած մեռեալների թիւը հարիւր յիսուն հազար էր:

285 թ. Մուտադիդ նշանակեց Մուհամեդ ի. Աբի-լ-Ասչին կառավարիչ Ատրպատականի և Հայաստանի վերայ, որ տիրեց (այս) երկրներին:

304 թ. Հայաստանի և Ատրպատականի վերայ կառավարիչ էր Խոսուփ ի. Աբի-լ-Ասչ:

315 թ. Դումաւուուք³ արշաւեց ծանր յոյն զօրքով Դուին քաղաքի վերայ, ունելով իւր հետ յարձակման (Պ-Բ-Բ⁴) և քարանետ (Հ-Ն-Ջ-Ն-Ք⁵) մեքենաներ, նաև հրանետ նիզակակիրներ...: Դումաւուուք նստած էր մի բարձր գահի վերայ, որ թէ տեղի և թէ իւր զօրքի վերայ կ'իշխնէր. նորա հետ

1 Մահմեդականաց առաքերարդ ամփան է:

2 Թուվան Արձրունի (ՊՏԸ 72. 13.) յիշում⁶ է այս երկրաշարժք 893 թ. Ամբումի, որդի Շշատի, թագու որութեան երրորդ տարին. Եւ ասի լինել թիւ մարդկանն առականեցց ի շարժմանէ՝ ողի առանել քան հոյ: Զարժանացի չէ առաջ, որ նման ահաւոր երկրաշարժերից յետոյ, որունց հիմնավոն կործանեցին երկու հայ մասրաւազար. թէ Արտաշատից եւ թէ Գուինից ոչ մի հետք չէ մացել:

3 — Domesticus, յոյն արք ելեան գաւառների կա, ու ավարշաց ախտպար:

4 Առաջմական մերենայ, որի պաշտպանութեան առկ թշումին կարգապան, մ է մասնեալ պաշտպանութեան քաղաքի ոպարիսութերին:

միացան երկրի բնակիչներից բնտիր ռազմիկներ : Թշնամին բարձրացաւ քաղաքի պարագի վերայ, նորա մէջ ծակեց եւ մտաւ քաղաքը . Դռւինի ժողովուրդը՝ եւ զօրքը արիարար ճակատեցան թշնամու հետ, ոյնովէս որ մուսլիմները յաղթեցին, իսկ յոյները դուրս ելան քաղաքից, կորցնելով մտաս հազար մարդ :

316 թ . Դռւմուստուք բազմաթիւ յոյն դօքանվարչւեց Հայաստան եւ պաշարեց Խլաթ , որի բնակիչք խաղաղութիւն հաստատեցին նորա հետ : Մեկնելով քաղաքից նա հեռացրեց ջամիկց ամբիոնը՝ եւ նորա փոխարէն խաչ կանգնեցրեց : Արզնի եւ այլ քաղաքների (մուսլիմ) ժողովուրդը ահարեկ թողեց իւր բնակատեղերը եւ գաղթեց բաղդադ՝ օգնութիւն խնդրելով ամիրապետից . առկայն նա մնաց առանց օգնութեան :

Նոյն (= 316) թուին Մալաթիա եկան 700 յոյն եւ հայ (վարպետներ) տապարներով եւ բրիչներով (զինուած), գործ պարելու պատրուակով . բայց յետոյ յայտնի եղաւ, որ Մալիհ¹ հայը (Տօրոսի) լեռանցքի² պետք՝ նոցա տեղ տեղ քաղաքում³ մնալու համար : Երբ Դռւմուստուք Մալաթիս պաշարեց, նորա յանձնեցին քաղաքը նորան : Խմանալով այս բանի մասին՝ բնակիչք կոտորեցին նոցա եւ իւեցին նոցա ինչքը :

319 թ . Իբն Դիբանի⁴ եւ յոյն Հայաստանի գուառների այլ հայ (իշխանք) միմեանց հետ թրզ-

1 Խման մուսլիմ բնակիչք՝ ի բաց առնելով Հայերին :

2 ՄՀՀ-ու , մաշնուած ական ազօժմատան ամբիոնը :

3 ՄԵՒՀ⁵ :

4 Բնագրի Դ-Հ-Ն-Բ ԱՅՐ ենիւադելու և Տօրոս լեռների բուլարմանաւագան անցքը . Կոյն յիշու և Հեղինակը նախադաշնաւ եւ զիքը լ. էջ 122 :

5 Դերանիկ կամ Դերենիկ, որդի Ռազմի իշխանաց իշխանի . Հման . Թագավորականի ՊՏԱ :

թակցելով մէկը միւսին գրգեցին արշաւել խորամի երկրների վերայ եւ խոստացան միմեանց օգնել։ Յոյնը ծանր զօրքով շուեց եւ աւերեց թերկրի։ Եւ Խորամի գաւառները նոցա շրջակայիւք հանդերձ, կոտորեց մուսլիմներից մեծ բազմութիւն եւ շատերին գերի վարեց։ Այս գոյժը բերեց խոսութիւն։ Արիւլ-Ասջին Ասրպատականի կառավարչին առողջանդակը աջազգութեամբ։ Արիւլ-Ասջ (որի հետ միացան բազմաթիւ կամաւորներ) մեծ զօրքով գիմեց Հայաստան, ուր նա հառաւ Ռամազան ամսին, յարձակեցաւ իրն Գիրանիի եւ նորա նիզակակիցների երկրի վերայ, կոտորեց բնակիչներին եւ աւարի առաւ նոցա գոյժը։ Իրն Գիրանի ամրացաւ իւր ամրացու մ։ Զօրքը ոգեւորւած կոտորեց Հայերից մեծ բազմութիւն, այնպէս որ՝ առում են՝ սպանուածների թիւը 100.000 էր. սակայն Աստծուն է յայտնի։

Սայիդ ի. Համդան (որին Մուքտադար ամբարապեար նշանակել էր Մասուլի, Գիար Ռարիայի և յոյն սահմանազլիսի վերայ) գիմեց Մալաթիա, ուր էին բազմաթիւ յոյներ, եւս հայ Մալիհի գունդը, նոցա հետ միասին բանի ի. Կափիս, Մուքտադիրի զօրապեար, որ քրիստոնէութիւն էր ընդունել եւ յունաց հետ (համաձայն) էր։ Երբ նոքա Սայիդի մերձենալու լուրն առան, քաղաքից զուրու ելան, երկիւղ կրելով, թէ մի գուցէ Սայիդ քաղաքի ապստամբ գնդի հետ նոցա գէմ ելնէ եւ թէ բնակիչնք կարող են նոցա վերայ յարձակիլ, եւ նոքա կը կորչին. ուստի նոքա թողին քաղաքը, ուր մտաւ Սայիդ եւ դրեց այստեղ մի կառավարիչ։

326 թ. Ասրպատականին ափրեց Լաշկարի ի. Միրդաս . . . : Արշաւելով Հայաստան՝ մինչ երկրի բնակիչնք անհօգ էին՝ նա յարձակեցաւ նոցա վերայ, կողոպաեց, աւարի առաւ, գերեց եւ վերադարձաւ

կողոպուտով Զառւզան։ Նա ընակեցաւ Անսան¹ (?) հայի գաւառում, որ նորան ընծաներ տուեց՝ իւր անձը եւ իւր երկիրը նորանից ապահովելու համար։ Նա համաձայնեցաւ։ Ապա հայը գարան մտաւ այստեղ մի նեղանցքում եւ հրամայեց հայերից ոմանց Լաշկարի իրերից գողանալ եւ նեղանցքը բերել։ Նորա կատարեցին (հրամանը)։ Խմանալով այս բանի մասին Լաշկարին ձիարշաւ շտապեց հինգ մարզով (այնտեղ) եւ տեսաւ գարանաւորներին։ սորտ գուրս ելան նորա դէմ եւ սպանեցին նորան իւր ուղեկիցների հետ։ Նորա զօրքը հետեւեց նորան, բայց տեսնելով նորան իւրայիններով սպանուած՝ վերադարձաւ եւ ընտրեց իրեն առաջնորդ նորա որդի Լաշկարիստանին։

Զօրքը ապա վճռեց՝ շուել դէպի Աքարայ-
Տին² (այս տեղին յայնկոյս Մասիսի է գտանուում), իրենց բնակատեղերը ամրացնել^(?) եւ՝ հետեւելով իրենց հետքերին՝ վերադառնալ ապա թարմ^(?) հայի գաւառը։ Առնելով այս լուրը թարմ մարդիկ դրեց նեղանցքներում, որպէս զի նորա քարեր նետեն թշնամու վերայ եւ արգելեն նորան անցնել, նորա սպանեցին (թշնամուց) մեծ բազմութիւն, միայն քչերը ապրեցան, որոնց թւում Լաշկարիստան, որ իւրայիններով գնաց Մոսուլ նասիր Դառլա իւ Համադանի մօտ։

330 թ. Ատրպատական քուրդ Դայսամ³ իւ երբահիմի իշխանութեան տակ էր. Նա իւսուփ իւ Արի-լ-Սաջե ընկերն էր։

¹ Դժար է որոշել. թէ ոչ կէտադրած եւ. թէ ի թէ աղաւազած անունին տակ հայերէն ինչ անուն է հասկանալու։

² Jakut անուանում է Աքարա թիրն (جبل نهر آقرا) տեղի ինչ պարսկաստանում։

³ Բնագրում թուրք՝ طرجمان, ոյլ օրինակում՝ թուրք՝ թրմ, թէ աղաւազած թուրք՝ طرجمان մերկ — Տարսոն. հման. այս ձեւը այլուր արարացոց մօտ։

Մարդպանը գնաց Առապատական. Դայսամ զիմեց նորա գէմ, եւ երբ նորա բախմամբ միմեաց հանդիպեցան, Դայլամ անցաւ մարդպանի կողմը, որին հետեւ եցին բազմաթիւ հարկատու քրդեր։ Մարդպան ապա յարձակեցաւ Դայսամի վերայ։ որի ու սակաւաթիւ բնկերներով վախառ Հայաստան և պաշտպանութիւն գտաւ Հաջիք¹ ի. Դիրանիի ման՝ նոցա փոխադարձ սիրոյ պատճառով։

341 թ. Դայսամ քրդերից բազկացած գնդի հետ վախառ (Առապատականից) Հայաստան, որի իշխանը նորան իրենց աւորից ընծաներ ուղարկեցին. . . . Ապա Դայսամ մնաց Սալմառում։ Ապստամբների գործից պրծնելով մարդպանը մերադարձաւ Առապատական. երբ նա մօսեցաւ Դայսամին, վերջինս թողեց Սալմառ եւ գնաց Հայաստան ի. Դիրանիի եւ ի. Հաջիքի մաս՝ նոցա փոխադարձ հաւատարմութեան պատճառով։ Մարդպան զրեց ի. Դիրանիին՝ ձերբակալել Դայսամին, սակայն նա մերժեց. բայց ապա՝ երկնչելով մարդպանից՝ ձերբակալեց նորան։ Այն ժամանակ մարդպան հրամայեց ի. Դիրանիին՝ Դայսամին նորա մաս ուղարկել. ի. Դիրանի ոյս եւս մերժեց. բայց յետոյ կարեւոր համարեց նորան արձակել։ Երբ (ի. Դիրանի) Դայսամին արձակեց, մարդպան կուրացնել տուեց նորա աշըքը եւ զրեց նորան բանար։ Մարդպանի մահից յետոյ նորա բնկերներից մեկը՝ երկիւղ կրեւով, որ Դայսամից կարող է շարիք հասնել՝ ապանց նորան։

346 թ. Հայաստան կը կառավարէր Զասսատանի. Ծարմիզան (²), որ ի մտի ուներ ափրել երկրին։

353 թ. Այլ ուլ - Դաւլա՛ի ստրուկ Կաջա գնաց Միավարիքին ² եւ (ոյնտեղից) զիմեց Հայաս-

1. Բնադրի Հ-Գ-Հ+ ու Հ-Գ-Հ- և Զ-Գ-Հ+ ։ Գայլիկ գործ գործի ու կողեւու ։


2. Մարտիրոսաց բարուք։

առան, որի մեծագոյն մասին տիրած էր մի ոճի արտօր
Արիլ-Վարդ անւամբ։ Նախապատճեցաւ նորա
հետ, սպանեց նորան եւ առաւ նորա ամրոցները,
եւս խլաթ, Միլազկերտ¹, Մուշ եւ այլ գաւառ-
ները, իւր ձեռքի տակ ածելով Արիլ-Վարդի դոյ-
քերի մեծ մասը, ապա նու ապատամբեցաւ Սոյփ
Դաւլա՛ի դէմ. . . . Վերջինս արշաւեց նորա վերայ
պատճերազմելու՝ նորա ապատամբութեան եւ ան-
հնագանդութեան համար. բայց մինչ նա Միավա-
րիքին հասաւ, Նախա փախստեամբ ապրեցաւ նորա
ձեռքից։ Սոյփ Դաւլա տիրեց նորա գաւառներին
եւ ամրոցներին, զորս նու խլած էր Արիլ-Վարդից։

459 թ. յոյն թագաւորը զօրք ուղարկեց
Մելազկերտ, (որ Հայաստանի գաւառներից մեկն
էր), որ պաշարեց քաղաքը, նեղեց նորա մէջ բնակ-
ող մուսլիմներին եւ տիրեց նորան ուժով եւ բրո-
նութեամբ։



¹ Հետոց Մահմատազակերտ։ Istaxri ապահով է Արմա-
նական մեջ մենաշինութեան մաս։



- ԿՊ. Սամուելեամ Խ., Միտթար Գօշի Դատաստանագիրըն ու հին Հայոց քաղաքացիական իրաւունքը: 1911: Էջ ԺԲ+344: Փր. 5.—
- ԿՊ. Առաքելեամ Հ., Պարմկաստանի Հայերը, Նրանց անցեալը, Ներկան եւ ապագան: Ա. 1911: Էջ Ը+97: Փր. 1.50
- ԿԵ¹. Յովանեամ Հ. Գ. Վ., Միջնադարեան ազգային տաղաշափութիւն ու ամեկախառն. Էջ 1-48:
- ԿԵ². Ակիմեամ Հ. Ն., Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեամը եւ իրենց բանաստեղծական եւ Նկարչական աշխատութիւնը: 1911: Էջ 49-117: Փր. 1.50
- ԿԶ. Մէակվիչեամ Հ. Գ. Ժ. Գ. Գ., Գրիգոր Մագիստրոսի “Դամագուականի”, ամբողջական լուծումը: 1912: Էջ ԺԱ+162: Փր. 1.50
- ԿԷ. Գարիկի Եկամ Դկտ. Մ. Ա., Ակնայ Գաւառաբրաբոց եւ Արդի Հայերէն լեզուն: 1912: Էջ Ը+416: Փր. 6.—
- ԿԲ. Մարկուարտ Գրոֆ. Դկտ. Յ., Պատմութիւն Հայերէն Նշանագրեցու եւ վարուց Ա. Մաշթոցի: Թրգմ. Հ. Ա. Վարդանեան: 1913: Էջ Ը+59: Փր. 1.50
- ԿԹ. Աճառեամ Հ.. Հայոց գրերը, ընդ մամով:
- Հ. Մատիկեամ Հ. Ա., Անանունը կամ Ենդեմերէս, բնական ուսումնասրութիւն: 1913: Էջ Ը+91: Փր. 1.50
- ՀԱ. Թուրզոմեամ Տ. Վ. Յ., Երևմիա Զէլէսկիի Քէօմիւրձնան Ստամազոյ Պատմութիւն: 1913: Էջ Ը+412: Փր. 5.—
- ՀԲ. Վարդամեամ Հ. Ա., Դասական մանր բնագիրներ եւ ժողովրական համեմատութիւններ: Ա.: 1913: Էջ Ը+155: Փր. 1.75
- ՀԳ. Մարկուարտ Գրոֆ. Դկտ. Յ., Հայ Բագրատունեաց միւղագրութիւնը ծանօթութիւններով: Թրգմ. Հ. Մ. Հակոբեան: 1913: Էջ 68:
- ՀԳ. Մարկուարտ Գրոֆ. Դկտ. Յ., Վրական Բագրատունեաց ծագումը: Թրգմ. Հ. Մ. Հակոբեան: 1913: Էջ 69-150: Փր. 1.75

- ՀԴ. Վարդանեամ Հ. Ա., Բառաքննական դիտողութիւններ, Ա. 1913: Էջ 120: Փր. 2.—
 ՀԵ. Գիշեալիքոք Ա., Հոռվմէական Հայաստան Եւ հոռվմէական սատրապութիւնները Դ.-Զ զարթուն, Թրգմ. Հ. Մկրտիչ Վ. Նորշուան: 1914: Էջ Է+94: Փր. 1.20
 ՀԶ. Վարդանեամ Հ. Ա.: Բառաքննական դիտողութիւններ, Բ. 1914: Էջ 110: Փր. 3.—
 ՀԷ. Մրապեամ Հ. Ի: Ս. Յակոբ ազգային հիւանդանոց: 1915: Էջ ԻԳ+477: Փր. 6.—
 ՀԸ. Գալէմքեարեամ Հ. Գր. Ժ., Կանսագրութիւններ Երկու հայ պատրիարքներու Եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթուղիկուայք: 1915: Էջ Ը+384: Փր. 4.—
 ՀԹ. Դաւիթ-Ռէկ Մ. Ս., Արարկիրի զաւառաբարբառը: 1919: Էջ ԺԱ+292: Փր. 5.—
 Հ. Տաշեամ Հ. Յ. Վ., Արշակունի դրամներ. Ա: 1919: Էջ Է+192: Փր. 3.—
 ՀԱ. Տաշեամ Հ. Յ. Վ., Պոնտական ուսումնասիրութիւնը: Մասն Ա: Հնտագօտական ուղեւորութիւնն ի Պոնտոս. Յ. Գ. Կ. Էջերսընի: Մասն Բ: Ուղեւորութիւն - նախօսական հնտագօտութեան ի Պոնտոս եւ ի Փոքր-Հայո. Փր Եւ Եւգ. Կիւմոն Եղարք: 1919: Էջ Է+420: Փր. 6.—
 ՀԲ. ՓերիաՄ ամ Հ. Պ., Ցուցակ Եւրոպական-Հայկական հրատարակութեան 1896-1910: 1919: Էջ Է+273: Փր. 6.—
 ՀԳ. Գալէմքեարեամ Հ. Գր. Ժ., Նորագոյն աղբերք Եզնկայ Կողմացւոյ: 1919: Փր. 3.—
 ՀԴ. Խալութ եամ Ա., Արարացի մատենագրեր Հայաստանի մասին: 1919: Էջ Է+147: Փր. 3.—
 ՀԵ. Տէր-Գողոսեամ Գր., Նկատողութիւններ Փաւառի պատմութեան վերաբերեալ: 1919: Էջ 126: Փր. 3.—
 ՀԶ. Ակիանեամ Հ. Ն. Վ.: Գաւազանագիրը Կաթողիկոսաց Աղթամարայ: Պատմական ուսումնասիրութիւն: 1920: Էջ ԺԱ+200: Փր. 4.—

